

ՎԻՎՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ

Ք Մ Վ Մ Ռ Ա  
Խ Մ Ն Ս Ք - Չ Մ Ն Ս Ք

(ԶՎԱՐՃԱՊԱՏՈՒՄՆԵՐ ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐՔԱՌՈՎ)

Նվիրում եմ հորս՝  
Լիպարիտ Կատվայանի  
հիշատակին



ԵՐԵՎԱՆ-2009

ՀՏԴ 809. 198.1:891. 981-7  
ԳՄԴ 81. 23+84Հ  
Կ-287

*Երաշխավորվել է տպագրության  
Գավառի պետական  
համալսարանի գիտխորհրդի կողմից*

Խմբագիր՝ Վ. Գ. Յամբարձումյան  
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
Գրախոս՝ Թ. Ա. Ասոյան  
բանասիրական գիտությունների թեկնածու

Կատվայան Վ. Լ.

Կ-287 Ք Կ Վ Կ Ն ա խ Կ Ն Կ Ն ք - չ Կ Ն Կ Ն ք (Ձվարճապատումներ  
Բայազետի բարբառով).-Եր., «Գրական հայրենիք» ՓԲԸ («Հայաստան»  
հրատ.), 2009թ., 232 էջ:

Աշխատանքում տրվում է Բայազետի բարբառի համառոտ բնութագիրը, հայ իրականության մեջ առաջին անգամ գիտական տառադարձությամբ ներկայացվում է Բայազետի բարբառով գրի առնված զգալի նյութ, բարբառային բառերի բառարանը թույլ է տալիս հասկանալ զվարճապատումների բովանդակությունը, բարբառային խոսքի ոճական ու դարձվածային յուրահատկությունները:

Գիրքը հասցեագրվում է հայերենագետներին, ուսանողությանը, բոլոր նրանց, ովքեր հետաքրքրվում են բարբառային խոսքի յուրահատկություններով, ժողովրդի կենցաղի, մտածողության, հոգեբանության դրսևորումներով, և կարող է ընթերցողին համակել բարձր տրամադրությամբ:

ՀՏԴ 809. 198.1:891. 981-7  
ԳՄԴ 81. 23+84Հ

ISBN 978-5-540-02181-4

© Վ.Կատվայան, 2009թ.:

Լեզուն է ամեն մի ժողովրդի ազգային գոյության ու էության ամենախոշոր փաստը, ինքնուրույնության ու հանճարի ամենախոշոր դրոշմը, պատմության ու հեռավոր անցյալի կախարդական բանալին, հոգեկան կարողությունների ամենաճոխ գանձարանը, հոգին ու հոգեբանությունը:

Եվ շատ էլ չէին սխալվում հներում, եթե լեզու ասելով ազգ էին հասկանում:

Յովհ. Թումանյան

## Առաջաբան

Չայերենը, ինչպես ցանկացած այլ լեզու, դրսևորվել և դրսևորվում է տարբերակային մի շարք ձևերով, որոնցից հիմնականներն են բարբառները, ժողովրդախոսակցական և գրական լեզուները: Լեզվի դրսևորման այս ձևերից յուրաքանչյուրը ունի իր առաջացման օբյեկտիվ պատճառներն ու պայմանները, զարգացման յուրահատկություններն ու օրինաչափությունները, գոյության իր իրավունքը: Տարբերակային յուրաքանչյուր լեզվավիճակ ունի իր գործառության ոլորտներն ու շրջանակները, և լեզվի դրսևորման նշված ձևերից որևէ մեկը չի կարող լիարժեք փոխարինվել մյուսով:

Գրական հայերենը նորմավորված, մշակված, կանոնակարգված և միասնական լեզու է, որը պետական կառավարման, պաշտոնական, հասարակական-քաղաքական, մշակութային, գիտակրթական ոլորտների, հրապարակային հաղորդակցման միջոցն է, գրավոր խոսքի և տարաբնույթ գրականության լեզուն: Ժողովրդախոսակցական հայերենը հստակ նորմավորման չենթարկված, անկաշկանդ, գրականին մոտեցող, բայց և գրական նորմայից զգալի շեղումներ ունեցող, բոլորին հասկանալի բարբառային տարրեր պարունակող, բայց որևէ բարբառի հետ չնույնացող բանավոր, առտնին խոսքն է, որ գործածական է ոչ պաշտոնական, առօրյա իրադրություններում, ոչ բարբառախոս միջավայրում: Չայերենի բարբառները լեզվի բնական, գիտակցական մշակման չենթարկված վիճակն են ներկայացնում, դրանցից յուրաքանչյուրը որոշակի տարածքի բնակչության բանավոր հաղորդակցման միջոց է, որ բարբառային հատկանիշների յուրահատուկ զուգորդումներով, որոշ դեպքերում՝ միայն իրեն հատուկ հատկանիշներով տարբերվում է և՛ գրական, և՛ ժողովրդախոսակցական լեզուներից, և՛ այլ բարբառներից:

Չայոց լեզվի դրսևորման բարձրագույն եղանակը, անշուշտ, գրական հայերենն է, որ հենվում է ժողովրդախոսակցական լեզվի և բարբառների վրա: Եթե լեզուն համենատենք ծառի հետ, ապա կարող ենք ասել, որ բարբառները լեզվի արմատներն են, ժողովրդախոսակցական լեզուն բունն է, իսկ գրական լեզուն՝

սաղարթը: Բարբառները կենդանի են պահում լեզուն և ժողովրդախոսակցական լեզվի միջոցով սնուցում ու հարստացնում են գրական լեզուն: Ինչպես սոսկ սաղարթի մշակումը չի կարող հիմնավորապես ապահովել նրա և ողջ ծառի առողջ գոյությունն ու աճը, այնպես էլ սոսկ գրական լեզվի նորմավորումը, կանոնակարգումը դեռևս չեն կարող երաշխիք լինել թե՛ նրա, թե՛ ողջ լեզվի՝ կենդանի հաղորդակցման միջոց մնալու և հետագա զարգացում ունենալու համար: Խնամքի կարիք ունեն ծառի բույր մասերը՝ արմատներից մինչև սաղարթ. որքան հզոր լինեն արմատները, այնքան ամուր կլինի բունը, որքան ամուր լինի բունը, այնքան ծաղկուն ու ճոխ կլինի սաղարթը, և արդյունքում՝ հզոր կլինի ծառը: Այդ նույն կերպ՝ գրական լեզվի հետ միասին հոգատարության, գիտական ուշադրության կարիք ունեն նաև խոսակցական հայերենն ու բարբառները: Չարկավոր է ընդունել, որ լեզուն մեկ ամբողջություն է՝ իր բույր դրսևորումներով, որոնք իրար ոչ թե հակադրվում են կամ միմյանց խանգարում, այլ փոխադարձաբար լրացնում են և հարստացնում: Այդ մասին ժամանակին ահա թե ինչ է ասել Հովհ. Թումանյանը. «Ներքուստ, իրենց ոգով ու հիմքով սրանք (բարբառները – Վ.Կ.) մի ամբողջություն են, մի լեզու են կազմում, մի հայոց լեզու, թեև տեղ – տեղ ջախջախված, ինչպես ինքը հայոց ազգը, թեև երբեմն աղճատված, ինչպես հայի ազգային ոգին, բայց ընդհանրապես կենդանի ու կենսունակ, ինչպես հայոց ազգը, և՛ առասպելական ֆենիքսի նման՝ ընդունակ ավերակներից հառնելու, նորափետուր սավառնելու դեպի գեղարվեստի ամենաբարձր ոլորտները ու գիտության անհուն խորությունները»<sup>1</sup>: Իբրև մեկ ամբողջություն՝ լեզուն իր բույր դրսևորումներով ընթանում է բնականոն զարգացման միասնական ուղիով՝ հաղթահարելով դժվարություններն ու խոչընդոտները, վերափոխվելով ու նոր որակներ ձեռք բերելով, և եթե այդ ընթացքում այս կամ այն պատճառով որևէ բարբառ դադարում է գործառնելուց, ապա այդ նշանակում է, որ ցավալիորեն կորստի է մատնվում լեզուն սնուցող ու կենդանի պահող արմատներից մեկը:

Գրական լեզվի և մյուս լեզվավիճակների փոխհարաբերությունների ճիշտ ընկալման հարցը միշտ էլ արդիական է և կարևոր: Դարձյալ դիմենք Թումանյանին. «Ժողովրդական լեզվի ընտիր բառերը, սեղմ ու սերտ, պատկերավոր ոճերը, պարզ ու շքեղ ձևերը, էսօր արդեն ամենաթանկ զարդերն են համարվում հայ գրողի երկերի մեջ և համարձակ փոխվում են հարազատ լեզվի համաձայնության վրա ու այլևս կոշտության կամ աղքատության խոսք չկա նրանց դեմ»<sup>2</sup>: Մյուս կողմից, իհարկե, անհրաժեշտ է գրական լեզուն զերծ պահել անհարկի բարբառային,

<sup>1</sup> Հովհ. Թումանյան, Հայոց գրական լեզվի խնդիրը, Երկեր .... էջ 379:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 380:

խոսակցական տարրերից ու ժարգոնային արտահայտություններից, և ցանկալի է, որ յուրաքանչյուր անհատ կարողանա համապատասխան իրավիճակներում հաղորդակցվել, իր մտքերն արտահայտել ճիշտ և գեղեցիկ գրական լեզվով: Հատկապես հրապարակային խոսքը պետք է լինի անաղարտ ու կանոնական: Եվ այս առումով՝ գրական լեզուն պիտի լինի պետական ու հասարակական հոգածության առարկա, մեզ այնքան անհրաժեշտ պետականության զգացումը անհատի մոտ պետք է ձևավորել նաև պետական լեզվի (գրական հայերենի) նկատմամբ հարգանք ու հոգածու վերաբերմունք ներշնչելով ու պահանջելով:

Տավոք, գրական լեզվի նկատմամբ հոգատարությունը երբեմն դրսևորվում է բարբառների ու խոսակցական լեզվի դեմ սուր ճոճելով, գրական լեզվում ավելորդ բարբառայնությունների, հասարակաբանությունների, ժարգոնային արտահայտությունների դեմ պայքարը վերածվում է ընդհանրապես բարբառների և խոսակցական լեզվի դեմ արշավի: Ինչպես նշեցինք, գրական լեզուն ունի իր գործառույթյան շատ կարևոր ու հստակ շրջանակները, մյուս լեզվավիճակները՝ իրենցը, և անհարկի փոխներթափանցումները բնավ խրախուսելի չեն: Բայց և հանուն գրական լեզվի մաքրության, կանոնականության՝ չպետք է ընդհանրապես արհամարհել ու մերժելի համարել խոսակցական լեզվի ու բարբառների գոյությունը. այդ կարող է նշանակել սաղարթի փարթանությունն ապահովելու նպատակով ծառաբնի ու արմատների հատում: Այս առումով՝ անիմաստ և անիրականանալի է բարբառներից հրաժարվելու և բոլոր իրադրություններում միայն գրական լեզվով հաղորդակցվելու՝ մեր որոշ մտավորականների հորդորը (երբեմն նաև՝ պարտադրանքը) հասարակությանը: Տասնամյակներ շարունակ շատ լեզվաբաններ գուժել են բարբառների մահը՝ իբրև համատարած կրթության, լուսավորության տարածման, գրական լեզվի հաղթարշավի հետևանք՝ շփոթելով բարբառների զարգացման ընթացքը վերացման հետ: Իրականում ընդհանուր լեզվի շրջանակներում բարբառներն էլ փոփոխություններ են կրում, հատկապես նկատելի են տեղաշարժերը բառապաշարում (նույնիսկ մեկ ընտանիքի՝ տարբեր սերունդներ ներկայացնող անդամների խոսքում ակնհայտ են տարբերությունները), ինչը շատ հաճախ պայմանավորված է կյանքի պայմանների, առօրյայի, կենցաղի, մտածողության բնականոն փոփոխություններով ու զարգացմամբ: Ժամանակի ընթացքում բարբառներում կարող են տեղի ունենալ նաև լեզվական հատկանիշների փոփոխություններ: Բայց և այնպես, այդ ամենը չի կարող նշանակել բարբառների աստիճանական վերացում, որովհետև բարբառ իրողությունը բնութագրվում է ոչ այնքան բարբառային բառերի այս կամ այն շերտով կամ բարբառային այս կամ այն հատկանիշով (որոնք ժամանակի

ընթացքում կրուն են տարաբնույթ փոփոխություններ), որքան խոսքի անկաշկանդությամբ, ձևերի անմիօրինակությամբ, անմշակվածությամբ, միայն բանավոր խոսքին բնորոշ առանձնահատկություններով, բարբառային հատկանիշների՝ միայն տվյալ տարածքին բնորոշ զուգորդումներով. բարբառի գոյության այս հիմքերի վերացման պատճառներ ու նախադրյալներ գոնե տեսանելի ապագայում մենք չենք նշմարում: Բարբառի կորստի պատճառ չի կարող դառնալ գրական լեզվին համատարած տիրապետումը, ըստ անհրաժեշտության՝ նրանով հաղորդակցվելու շատերի կամ բոլորի կարողությունը. չէ՞ որ այլ լեզվի իմացությունն ու գործածումը անհրաժեշտաբար չեն նշանակում մայրենի լեզվի անտեսում ու մոռացում: Առօրյայում բարբառը մնում է և կմնա իբրև ժողովրդի ստվար հատվածի հաղորդակցման բնական և կենդանի միջոց, ու նրա անտեսումը կամ նրա դեմ անհիմաստ ու անհեռանկար պայքարը արդյունք է լեզվի էության ու լեզվական գործընթացների ոչ ճիշտ պատկերացման:

Իբրև լեզվի կենդանի, բնական և անմշակ գոյավիճակներ՝ բարբառները գիտական մեծ հետաքրքրություն են ներկայացնում, նրանց համակողմանի և շարունակական հետազոտումը անհրաժեշտություն է լեզվական զանազան հարցեր պարզաբանելու, հայերենի թե՛ համաժամանակյա և թե՛ տարժամանակյա համեմատաբար ամբողջական ուսումնասիրություն ու նկարագրություն ունենալու համար: Կարծում ենք՝ բարբառների ուսումնասիրությանը մեծապես կարող է նպաստել գիտական տառադարձությամբ բարբառային խոսքի պարբերական գրային արձանագրումը, ինչը կնշանակի ոչ միայն բարբառային հնչյունաքերականական հատկանիշների, բառապաշարային ու դարձվածային հարստության, ոճական յուրահատկությունների, այլև ժողովրդի մշակույթի, կենցաղի, հոգեբանության ու մտածողության տարրերի ամրակայում ու ներկայացում: Մյուս կողմից՝ գրի առնված բարբառային խոսքը, ներկայացնելով բարբառի վիճակը զարգացման տվյալ փուլում, կարող է համեմատության եզր դառնալ բարբառի հետագա վիճակների ուսումնասիրման, ընդհանրապես՝ բարբառի զարգացման ընթացքը դիտարկելու համար:

Ահա այս հանգամանքը նկատի ունենալով՝ կատարել ենք Բայազետի բարբառային խոսքի գրառումը գիտական տառադարձությամբ: Նախընտրել ենք բարբառային խոսքը ներկայացնել զվարճապատումների միջոցով, որովհետև ներկայումս դրանք ժողովրդական բանավոր պատումի թերևս ամենագործուն ձևն են ներկայացնում, և ցանկացած միջավայր՝ լինի այն ընտանեկան, ընկերական, աշխատանքային թե հասարակական, հագեցած է նման պատումներով: Չվարձալի

իրավիճակները, սրամիտ արտահայտությունները սովորաբար աննկատ չեն մնում, և շարունակ ստեղծվում են կարճ ու հումորային պատմություններ, որոնք պատմվում են ամենատարբեր իրադրություններում, բազմազան ձևերով ու հաճախ բավականին երկար կյանք են ունենում: Ձվարճապատումներում արտացոլվում են տվյալ տարածքի բնակչության առօրյայի տարբեր կողմերը, կենցաղը, բարքերը, հոգեբանության ու մտածողության յուրահատկությունները: Ձվարճապատումների լեզուն աշխույժ է, պատկերավոր, հազեցած կենդանի խոսքին բնորոշ տարրերով, դարձվածքներով, ոճական հնարանքներով:

Այս գրքում ընդգրկված զվարճապատումների համար հիմք են հանդիսացել իրական դրվագներ Գավառ քաղաքի և շրջակա գյուղերի բնակիչների առօրյայից, որոնք ներկայացնելիս մենք առավելագույնս հարազատ ենք մնացել բարբառային խոսքին: Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում Հրանտ Հակոբյանին, Օֆիկ Կատվալյանին, Քնար Կատվալյանին, Անայա Քալոյանին, Պապին Քալոյանին, Հենրիկ Չիչոյանին, Ամբիկ Ղարիբյանին, Ներսես Կատվալյանին, Յուրիկ Մնեյանին (Կոսմոսին), Համլետ Ղաջոյանին, Նորայր Ղազարյանին, Սամվել Ամիրխանյանին, Մարտին Ավագյանին, Արսեն Ապրոյանին, Մարինե Բադալյանին, Ելիզավետա Բադալյանին, Անուշ Խանդանյանին, Հռիփսիմե Տոնոյանին, Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ուսանողներին, որոնք սիրով մեզ են տրամադրել զվարճապատումների բազում սյուժեներ: Ձվարճապատումները մենք որպես կանոն ներկայացրել ենք պատմողի անունից՝ հաճախ որպես զրուցակից նկատի ունենալով ընթերցողին:

Հասկանալի է, որ այս գրքում ներկայացվում է ժողովրդական զվարճապատումների անսահման քանակությունից մի փոքր հատված, և յուրաքանչյուր ընթերցող իր առօրյայից, միջավայրից կարող է հիշել բազում զվարճալի դրվագներ ու միջադեպեր, որոնք մեզ ներկայացվելու դեպքում կարող են հիմք դառնալ նոր զվարճապատումների և ընդգրկվել մի նոր գրքում:

## Համառոտ տեղեկություններ Բայազետի բարբառի մասին

Հայ բարբառագիտության մեջ, սկսած Հր.Աճառյանից<sup>3</sup>, Բայազետի բարբառային միավորը համարվել է Արարատյան բարբառի ենթաբարբառ: Հարցն այդ տեսանկյունով են դիտարկել նաև Ա.Ղարիբյանը<sup>4</sup>, Ա.Գրիգորյանը<sup>5</sup>, Ռ.Բաղրամյանը<sup>6</sup>: Նման մեկնաբանությունը պայմանավորված է եղել բարբառ ու ենթաբարբառ իրողությունները միմյանցից տարբերակելու լեզվական հստակ չափանիշների բացակայությամբ, ինչի մասին Ա.Ղարիբյանը գրել է. «Մինչև այժմ բարբառագիտության մեջ սահմանված չեն որոշակի նորմաներ հայերեն բարբառն ու ենթաբարբառը միմյանցից տարբերելու համար: .... Հ. Աճառյանի մոտ ենթաբարբառ կոչված շատ խոսվածքներ կարելի է, առանց գիտության դեմ մեղանչելու, առանձնացնել որպես անկախ բարբառներ»<sup>7</sup>: Մյուս կողմից՝ լեզվաբանը գտնում է, որ «Որևէ խոսվածք անկախ բարբառ համարվելու համար պետք է ավելի լուրջ տարբերություններ ունենա, ավելի ճիշտ՝ պետք է տարբերությունների մի ամբողջ կոմպլեքս ունենա»<sup>8</sup>: Փաստորեն, հայ բարբառագիտության մեջ Ա.Ղարիբյանի կողմից առաջ է քաշվում այն գաղափարը, որ բարբառները որոշելիս պետք է հաշվի առնել հնչյունաբանական և ձևաբանական հատկանիշների համախումբ, և թերևս այս գաղափարի հետագա զարգացումն ու գործադրումն էր Գ.Ջահուկյանի՝ հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգումը, համաձայն որի՝ հնչյունաբանական և ձևաբանական 100 հատկանիշների շրջանակներում մինչև 22 տարբերիչ հատկանիշ ունեցող բարբառային միավորները նույն բարբառի խոսվածք են, իսկ 22,5 և ավելի տարբերիչ հատկանիշների դեպքում գործ ունենք առանձին բարբառների հետ<sup>9</sup>: Ահա այսպիսի դասակարգման միջոցով էլ Գ.Ջահուկյանը առաջին անգամ հայ լեզվաբանության մեջ Բայազետի բարբառային միավորը դիտարկում է ոչ թե իբրև Արարատյան բարբառի ենթաբարբառ, այլ իբրև ինքնուրույն բարբառ, որը Երևանի կամ Արարատյան, Ջուղայի, Աստրախանի, Արդվին – Թբիլիսիի բարբառների հետ մաս է կազմում հայ բարբառների արևելյան խմբակցության Արարատյան կամ հյուսիսարևելյան բարբառախմբի<sup>10</sup> և

<sup>3</sup> Հր.Աճառյան, Հայ բարբառագիտություն, Մոսկվա - Նոր-Նախիջևան, 1911, էջ 44-45,48:

<sup>4</sup> Ա.Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Եր., 1953 թ., էջ 227:

<sup>5</sup> Ա. Գրիգորյան, Հայ բարբառագիտության դասընթաց, Եր., 1957, էջ 224-225:

<sup>6</sup> Ռ.Բաղրամյան, Հայերեն բարբառներ, Եր., 1972, էջ 11-12:

<sup>7</sup> Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 85:

<sup>8</sup> Նշվ. աշխ., էջ 87:

<sup>9</sup> Գ.Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1972, էջ 127:

<sup>10</sup> Նշվ. աշխ., էջ 135:



Արարատյան բարբառի խոսվածքներից տարբերվում է երկուսուկես տասնյակից ավելի հատկանիշներով:

Բայազետի բարբառով խոսում են Գավառ քաղաքի և շրջակա մոտ մեկ տասնյակ գյուղերի բնակիչները, որոնց մեծ մասի նախնիները 1829 – 1830 թթ. գաղթել են Արևմտյան Հայաստանի Բայազետ քաղաքից և շրջակա գյուղերից, մասամբ նաև այլ վայրերից՝ Խոյից, Սալմաստից, Ալաշկերտից, Վանից: Տարբեր բնակավայրերում, նույնիսկ նույն բնակավայրի տարբեր թաղերում խոսվածքային տարբերություններ ունենալով հանդերձ՝ Բայազետի բարբառը իր ընդգրկած տարածքում գործառու է իբրև լեզվական ընդհանուր համակարգ՝ իր կայուն հնչյունական կազմով, հիմնական բառաֆոնդով, քերականական կառուցվածքով, տարբերակային ձևերի ու միավորների որոշակի շրջանակով, վերջին հաշվով՝ բարբառային հատկանիշների՝ միայն իրեն հատուկ փնջով:

Բայազետի բարբառի հիմնական առանձնահատկություններից են հետևյալները.

1. ընդհանուր հայերենյան **ա, է, ի, ու, օ, ը** ձայնավորներից բացի բարբառս ունի նաև՝

ա) **ւ** շրթնայնացած ձայնավոր (մոտավորապես **ուա** սերտ արտասանությամբ), որը **ա** ձայնավորի դիրքային տարբերակն է և հանդես է գալիս բացարձակ բառասկզբում (ւման, ւսել) և բառասկզբի խուլ բաղաձայններից (բացի **խ, հ** շփականները), **մ, ն** ձայնորդներից հետո (պւմնիր, կւտու, տւլիք, ծւրավ, ճւշ, ֆւներկա, սւրքել, շւտ, մւծուն, նւռի):

բ) **ւ** քնայնացած ձայնավոր (սովորական **ա** ձայնավորից տարբերվում է լեզվի մեջքի բարձրացմամբ, չի նույնանում **ը** – ի հետ), որը հանդիպում է ոչ միայն փոխառյալ, այլ նաև բնիկ շատ բառերում՝ առանց դիրքային սահմանափակության (օր.՝ հւշկ, գւդւ, դւնակ, ճւք, թւզւ, միյնակ, օրինակ, փեսւ, լւց, քւռի, զւնել, զւտիկ, ժւնգ, ժւժիկ և այլն), և կարող է բառիմաստը տարբերակող արժեք ունենալ (թափուկ /թափված/ - թւփուկ /անասունի ոտքի հարված/, թաթ /անհասկացող/ - թւթ /ձեռքի թաթ/, թալ /փափուկ/ - թւլ /զցի'ր/, լալ /համր/ - լւլ /լաց լինել/, քար /ապար/ - քւր /շահ/):

գ) **ե** երկբարբառային ձայնավոր (ունի **ի** է սերտ արտասանություն), որը հանդես է գալիս **դ, խ, ռ** բաղաձայններից առաջ (սեղան, մեղավոր, նեխուկ, չեխական, մեռլոց, դեռասան), շեշտակիր վանկում՝ բացառությամբ է պարզ ձայնավորի դիրքերի (ցեփ, իրեք, ւնեսկ, ցօրեն, մեխկ, սիբեխ, գ'ըրել):

դ) **ո** երկբարբառային ձայնավոր (ունի **ուա** սերտ արտասանություն՝ այդպիսով նույնանալով **ւ** շրթնայնացած ձայնավորի հետ), որը հանդես է գալիս

ւն ձայնավորի համար բացառված դիրքերում, սովորաբար՝ շեշտակիր վանկում (բ՛ոց, գ՛ող, ձ՛որ, փոս, քոր, թոք, վոտ, խընձոր, ծա՛մոն, տըլոխ, ծըռտոտ, փոցըղ, կըտորտանք)։

2. Բայազետի բարբառը բաղաձայնական համակարգում ունի հետևյալ յուրահատկությունները.

ա) գրական հայերենի երեսուն բաղաձայններից բացի՝ բարբառն ունի շնչեղ ձայնեղ **բ՛, գ՛, դ՛, ձ՛, ջ՛** բաղաձայններ (մոտավորապես **բհ, գհ, դհ, ձհ, ջհ** սերտ արտասանությամբ), որոնք հանդես են գալիս հինհայերենյան բառաշերտի բառերի սկզբում (բ՛անցըր, գ՛արի, դ՛ուռ, ձ՛վար, ջ՛ուր)։

բ) գրաբարյան **հ** – ի դիմաց բառասկզբում, նաև այլ դիրքերում բարբառս ունի **խ** (հաց – խաց, հոգի – խօքի, բահ – բախ, մահ – մախ, պահել – պախել)։

գ) նոր փոխառություններում (նաև գրական լեզվից կատարված) բառամիջում **հ** – ի դիմաց բարբառս ունի **յ** (սահման – սայման, ջահել – ջայլել, դահլիճ – դայլիճ, զահլա – զայլա, թագուհի – թաքույի, պահեստ – պայեստ, փահլևան – փայլվան)։

դ) այլ բարբառների՝ փոխառյալ բառերի սկզբի **ղ** – ի դիմաց Բայազետի բարբառն ունի **կ** (ղարիբ – կարիբ, ղազ – կազ, ղավուրմա – կավուրմա, ղսմաթ – կրսմաթ, Ղազար – Կազար, ղալբ – կալբ, ղութի – կութի)։

3. հնչյունափոխական իրողություններից հիշատակելի են հետևյալները.

ա) օրինաչափ են բազմավանկ բառերի բառամիջի ձայնավորի պատմական փոփոխությունները (բաժանել – բաժնել, հավաքել – հավքել, ժողովել – ժոլվել, սովորել – սորվել, ոլորել – օլրրել, ողողել – օղղղել, ամաչել – ա՛մչընալ, քառասուն – քառսուն, երեսուն – յեռսուն, հայելի – խա՛յլի)։

բ) շեշտից զրկվելով՝ սղվում կան **ը** – ով փոխարինվում են բոլոր ձայնավորները (օր.՝ հեժան – հեժնընալ, հարեվան – հարեվնի, գ՛երան – գ՛երնի, դ՛աննակ – դ՛անկի, ջ՛աղաչ – ջ՛ախճի, ա՛ճառ – ա՛ճըռէ, թ՛աննաք – թ՛անքօտել, թառթափ – թառթրփները, շ՛ափաթ – շ՛ափտըվա, օխճար – օխճրրի, ցօրեն – ցօրնի, ա՛սեղ – ա՛սխի, ա՛վել – ա՛վլի, հավել – հավըլնալ, հիրես – հիրսի, ա՛ղվեզ – ա՛ղվըզի, հըմեն – հըմընի, հառէչ – հառչի, գ՛օմէշ – գ՛օմշի, կօլոն – կօլնել, բ՛օլոր – բ՛օլրրել, ժօղօվ – ժօղվել, կօտոշ – կօտըշխրրել, սա՛պոն – սա՛բնի)։

գ) բառասկզբում (ձայնավորից առաջ) տարածված է ձայնեղ **հ** հնչյունի հավելումը (հառէչ, հէքուց, հիրկուն, հընգընել, հուստա, հօբա)։

4. անվանական համակարգը բնութագրվում է հետևյալ յուրահատկություններով.

ա) **եր, ներ, ք** հոգնակերտներից բացի՝ գործածական են նաև **անք, վանք, րանք, տանք** և այլ հոգնակերտ մասնիկներ (ծ'իյանք, իշվանք, գ'իլվանք, տիրվանք, գ'եղրանք, տեղրանք, քըվորտանք, անխալըռտանք)։

բ) Բայազետի բարբառը ներգոյական հոլով չունի, և այդ հոլովական իմաստն արտահայտվում է կամ կապային կառույցով (գ'եղի մէջը, դ'անրանկի մէջը), կամ հայցականի ձևով (էնի մըկա գ'եղն ա)։

գ) բացառական հոլովը **-ից** վերջավորությամբ ձևերի գերակայության պայմաններում ունի նաև **-է** վերջավորությամբ ձևեր (տընէ, գ'ըլխէ, օրէ, մըկավնէ, հառավտընէ)։

դ) հատուկ տեղանունները սեռական և բացառական հոլովներում ունեն **-ա** վերջավորություն (Յերէվնա, Ք'անվանա, Սէվանա, Իջէվանա)։

ե) ձայնավորով ավարտվող բառերը միաժամանակ կարող են ստանալ **ւ' ն, ւ' ը** որոշիչ հոդեր (կ'անտունը, տըղէնը, հառունը)։

զ) **սա, դա, նա** ցուցականների դիմաց Բայազետի բարբառն ունի **էսի, էտի, էնի** ձևերը, որոնք հոլովվում են և ունեն հոգնակի թիվ (ըստու, ըտու, ընդու, ըստոնք, ըտոնք, ընդոնք), իսկ **այս, այդ, այն** ցուցականների դիմաց հանդես են գալիս **էս, էտ, էն** ձևերը, որոնք չեն հոլովվում և հոգնակի թիվ չունեն։

է) բարբառումս գործածական են անձնական և ցուցական դերանունների՝ **ի** և **իկ** հավելվածներով ձևեր (ընծի, քեզի, մեզի, ձ'եզի, ընծիկ, քեզիկ, մեզիկ, ձ'եզիկ, էսիկ, էտիկ, էնիկ)։

5. բայական համակարգի առավել ակնհայտ հատկանիշներից են.

ա) Բայազետի բարբառը չունի ապառնի դերբայ (գրելու, խաղալու), իսկ ապառնի ժամանակի իմաստը արտահայտվում է այլ միջոցներով (գ'ըրեն, կըգ'ըրեն, պըտի գ'ըրեն)։

բ) հարակատար դերբայն ունի **-ուկ** վերջավորություն (գ'ըրուկ, բ'երուկ, տ'անրուկ, կ'անյուկ, խընուկ)։

գ) վաղակատար դերբայն ունի **-եր** վերջավորություն (գ'ըրեր են, տ'անրեր են), որը դառնում է **-ե**, երբ օժանդակ բայը նախորդում է դերբային (դ'ու յես բ'երե)։

դ) **գ'ալ, լ'ան, տ'ան** բայերի դեպքում անկատար դերբայի **-ու** վերջավորությունն ավելանում է անորոշի ձևերի վրա (գ'ալում, լ'անլում, տ'անլում)։

ե) անցյալ կատարյալում բայի սեռը որոշակի դեպքերում արտահայտվում է նաև համապատասխան վերջավորություններով (թըռչի /թըջեցի/ – թըռչա /թըջվեցի/, գ'ըրի /գրեցի/ – գ'ըրվա /գրվեցի/, կըտըռտի /կտրտեցի/ – կըտըռտըրվա /կտրտվեցի՝ շատ չարչարվեցի/, մըրօտի /մրոտեցի/ – մըրօտա /մրոտվեցի/)։

զ) Ե խոնարհման պարզ բայերը սովորաբար անցյալ կատարյալը կազմում են պարզ հիմքով (գ՛ըրի, գ՛ըրիր, յերքի, յերքիր, նըկարի, նըկարիր)։

է) օժանդակ բայի անցյալի երկձայնավոր ձևերում է - ն սղվել է (էի, էիր, էր, էինք, էիք, էին ~ ի, իր, էր, ինք, իք, ին)։

ը) վերլուծական ժամանակաձևերում օժանդակ բայը կարող է դերբային միաժամանակ նախորդել և հաջորդել (յես եմ գ՛ըրեր եմ, չես ուզում եմ, չի՞ր գիդում իր)։

թ) անկատար ներկա և վաղակատար ներկա ժամանակաձևերի եզակի թվի երրորդ դեմքում օժանդակ բայը կարող է և հանդես չգալ (Յեսօր էնի գ՛ալում /գ՛ալում ա/, Մըկա Վաղօն էկե /էկեր ա/)։

ժ) վաղակատար ներկա և վաղակատար անցյալ ժամանակաձևերի հոգնակի թվի երրորդ դեմքում ավելի հաճախ հանդես է գալիս -ած վերջավորությամբ դերբայական ձև, որը վաղակատար ներկայի իմաստը կարող է արտահայտել և՛ առանց օժանդակ բայի, և՛ օժանդակ բայի եզակի ու հոգնակի ձևերի հետ (Ընդոնք հերեկ էկած. Ընդոնք հերեկ էկած ա. Ընդոնք հերեկ էկած եմ. Ընդոնք հերեկ էկեր եմ – Նրանք երեկ եկել են), իսկ վաղակատար անցյալի իմաստը արտահայտում է միայն օժանդակ բայի հետ (Ընդոնք հերեկ էկած ին. Ընդոնք հերեկ էկեր ին – Նրանք երեկ եկել էին)։

Բայագետի բարբառի այս համառոտ նկարագիրը, ինչպես նաև գրքի վերջում բերվող բառարանը, կարծում ենք, հնարավորություն կընձեռեն նաև բարբառին անձանոթ ընթերցողին՝ հասկանալու զվարճապատումների բովանդակությունը, հնարավորինս ամբողջական պատկերացում կազմելու Բայագետի բարբառի մասին։

Բարբառի արտասանական յուրահատկությունները հասկանալի դարձնելու համար ներկայացնենք նաև գործածված տառադարձական այբուբենը (նշենք, որ բարբառային գրավոր խոսքում գրությունը լիովին համապատասխանում է արտասանությանը, և այստեղ գրական լեզվի ուղղագրական կանոնները չեն գործում)։

ա - պարզ ձայնավոր, ինչպես գրական հայերենում

ան - շրթնայնացած ձայնավոր՝ մոտավորապես ուա սերտ արտասանությամբ

ան - քնայնացած ձայնավոր, որ սովորական ա - ից տարբերվում է լեզվի մեջքի բարձրացմամբ

է - պարզ ձայնավոր, ինչպես գրական հայերենում

- ե - երկբարբառային ձայնավոր՝ **իէ** սերտ արտասանությամբ
- օ - պարզ ձայնավոր, ինչպես գրական հայերենում
- ո - երկբարբառային ձայնավոր՝ մոտավորապես **ուա** սերտ արտասանությամբ
- ի, ու, ը - պարզ ձայնավորներ, ինչպես գրական հայերենում
- բ, գ, դ, ձ, ջ - ձայնեղ բաղաձայններ, ինչպես գրական հայերենում
- բ՛, գ՛, դ՛, ձ՛, ջ՛ - շնչեղ ձայնեղ բաղաձայններ՝ մոտավորապես **բհ, գհ, դհ, ձհ, ջհ** սերտ արտասանությամբ

Մնացած բաղաձայնները (փ, ք, թ, ց, չ, պ, կ, տ, ծ, ճ, վ, զ, ժ, ղ, ֆ, ս, շ, խ, հ, մ, ն, լ, ռ, ռ, յ) իրենց արտասանությամբ գրական հայերենի համապատասխան հնչյուններից չեն տարբերվում:

Տըղա ջան, թըռանէն ի՞նչ ա, վոր անուն էք: Խանանք - չանանք իշքան ուզում էք՝ անրէք, ուրխըցէք, բայց հիրար խաթրի մի կըպէք: Խասկըցող մանթը թըռանա չանա: Անէք մանթ պըտի հիր պատիվը հիր ձեռը պատխա: Քոնը քեզի յա լավ, ինը՝ ընծի: Ըը տե՛ խինգը խօքի յէք, անէք մէկըտ մէ լիզվով ա խօսում. դ՛ու՛ մեր լիզվով, կողիտ հընգերը՝ Մանտունա լիզվով, էսա լավ տըղէն քախկըվորի յա խօսում, էտա պըստի տըղէն՝ Իջէվանա լիզվով, էնա ժուլիկ տըղէն էլ՝ Լէնինականա լիզվով: Բայց հիրար լավ էլ խասկընում էք, չէ՞: Քանի վոր հըմընօվ էլ խայէրէն էք խօսում: Իմ կանճ խելքօվ՝ լավ ու վատ լիզու չըկա, անէք տեղի լիզու ըտեղի ժողովըթի խըմար լավ ա, էնենց վոր՝ դ՛ու քօ լիզվով էս խօսում, թո՛ղ վոր յես էլ իմ լիզվով խօսամ, ընծէլ թըռանա մի՛ անրա... Խա~ա, չեն անում՝ վորդե քիսի՝ անէք մէկը հիր լիզվով խօսա: Չէ՛, վոր տեղը գալում ան մանթ պըտի քախկըվորի խօսա, էտ էլ ա պէտկ: Քախկըվորին ինչօր դըսի շորը հըլնի, գեղավարին էլ տան շորն ա: Է՛, դըսից էկար՝ շորըտ չըփօխէ՞ս, մընաս դըսի շորօ՞վ. մէ~կ - էրկու՝ էտ էլ կըճըմըռտի, կըկըխտօտի, կըդ՛առնա տան շոր: Բան, բալա ջան:

Տան շորով մանթ հիրանը անգատ ա ըզգում, իմալ ուզում՝ էնենց հիրար ա գալում, էտենց էլ մենք մեր լիզվով իմալ ուզում ենք՝ էնենց խօսում ենք, ինչ ուզում ենք՝ դուզբէդուզ անում ենք, մեզի էլ նեղութուն չենք տանում՝ էտենց ճիշտ է~էր, սըղալ է~էր, կանրէլի յէ~էր, չէր կանրէլի~ի: Մէգ - մէկ անխասկընէլի մանթ էլ կան, մեզի ձեռ անում, գիվան մենք անում ենք՝ օրաղ, կօռտօլ: Մենք նախ էտենց չենք անում, մենք անում ենք՝ անրաղ, կանտօլ, բայց վոր էտենց էլ անսինք՝ ըտե թըռանի ի՞նչ կան... Մեր Քանվանա լիզուն իմ խըմար շատ քախծըր ա: Բաներ կան, վոր մեր լիզվով անելը հավէլի լավ ա, քան քախկըվորի: Օրինան կմենք մեր լիզվով ջիգանրով անում ենք՝ ջանիտ մեռնեն. քախկըվորի էտի ի՞մալ անենք՝ մահանամ մարմընի՞տ ...

Մենք վոր ճիժ ինք, էն ինշքա~ն ինք խաղում: Ցերեզնեց յօթը քար ինք խաղում, հավալա, էշ-միլիցա, վոր գընդակ հըլնում էր՝ ֆուդքօլ, հիրկընեց էլ պատխկըվոցի յինք խաղում: Դօքնէ՛լ... Ինչի՞ց հօքնինք՝ խաղալուց... Գիժը խաղալուց գօքնի՞... Ըը նեղվում ինք, անում ինք՝ մուրը էս ի՞մալ շուտ ա հընգում.

մեզի ձեն եմ տալում, ասում եմ՝ արեք քընեք: Գիդում ինք՝ սաղ կյանքըներըս պըտի էտենց խաղինք... Յըմընից շատ գընդըկի վըրեն ինք ուրխընում, մայլեն մեկին վոր գընդակ էր հըլնում, հըլնում ինք աստըծով, սաղ օրը էտ գընդըկով խաղում ինք: Դը հըմընից շատ էսա ճանփեն ինք խաղում, գընդակն էլ հա թըռնում էր, հընգում էր ըստու – ընդու բօստանը: Ջոչերը վըրըներըս շատ ին խօսում, տըփում ին էլ: Բայց վոր գընդակը հընգընում էր Մարոյ Սիրունի բօստանը, հընգնավորում ինք: Վո՞րը ռիսկ կաներ՝ մըղներ խաներ: Մարոյ Սիրունը էսակըդան դանակը ձեռին բօռբըռալեն, կըժկըժալեն գալում էր, բօստընի մեջը ման էր գալում, մենք ասում ինք՝ ասված ջան, խօզնի չըգըթնի, խօզնի չըգըթնի, բայց գընդակը գըթնում էր ու ճըղում էր... Է՛ն դանընալն ինք դանընում, է՛ն դանընալը...

Ամըռվա շոքերին էլ մեզ - մեկ հըլնում ինք դաշտերը, ճըբռուկ, թըթվաշ, վօլօր ինք ուտում, հիշում ինք ձորը լօկընում ինք, դը ճիժ ինք, է՛լի... Մե օր ընծի յու Լօվօյը մեր մերերը ճանփին, ասին՝ գացեք Սիֆտըկխօղից մեշու թըթվաշ – մըթվաշ քաղեք, բ՛երեք: Մե մեշօք անանք, նարխատափով բանցըրցանք: Մեկ էլ տենանք՝ մե էշ մըռութը տընգե, գալում մեր յանը: Ըտուն բըռնինք խեձանք, ուրախ – ուրախ քըշինք, խասանք Սիֆտըկխօղ: Իշին թօղինք անծալու, մենք ըսկըսինք ճըբռուկ ու թըթվաշ քաղել, լըցել մեշօքը: Շուշուտ էլ քաղում ինք, քանի կուռուխճին չեր էկե: Լի~քը լըցինք, ասինք՝ իշին բ՛երենք, թալենք վըրեն: Յընգանք հիդեվը, էլ չըկանցանք բըռնինք, տըռճըկաց, փա~ախավ գընաց, չըգիցանք էլ, թե ինչ հեկավ: Էտ մեշօքը ծանդըր էր, հո՞ւստ ինք էտի կանում բ՛երինք... Էս յան, էն յան հիշկըռտացինք, տենանք՝ փըլի հիդեվը մե ձի յա անածում: Խեկօք էլ ձի յեր, քըշինք բ՛երինք, մեշօքը մե կերպ թալինք մըշկին, դանցանք տանանք կանըցըրինք մե ջոչ քարի կուշտ, վոր կանինք հըլնինք խեզնինք. դը բօյըներըս չեր խասնում: Խեզնեկը խեձանք, բայց մըկա յեկ էտ ձին չեթում: Լօվօն հիչավ, գամից բըռնեց, հընգավ հառեչը, նոր ձին քեկաց: Էտենց խասանք նարխատափ: Էս ձին էլի կանավ, էլ չըգընաց: Յես էլ հիչա, ըսկըսինք բըռթել, գանել, ի~ինչ անում ենք՝ կանե չեթում: Մեկել խոտ բանցուկ մե սեկ էկավ, էս ձին հընգավ ըտու հիդեվը, գընաց, մենք էլ՝ ձիյան հիդվից: Էտի գընաց, մենք գացինք, էտի գընաց, մենք գացինք, մըտավ մե հանաթ, կանավ: Մեկն էլ ճանըն էր կանե: Լը չինք գիդում՝ ինչ անենք, մեկել սեկվորը մըտավ հանաթ... Կուռուխճին էր...

Գըլխի հընգար, չե՞. էտ էլ հիր ձին էր... Է՛, ի՞նչ պըտի անինք. թօղինք ու փախանք... Բը վոր էն էշն էլ էր էտ հանաթը՞...

Ես մեր կուռսի Արայիկը շատ յետաքրքրօր ու մեծ միտ տըղա յեր: Սըռտիճ ըսկի կեխտ չըկեր. վոնչ քեն քըշել գիդեր, վոնչ էլ մեկի վատը կուզեր: Բ'այց մեզ - մեկ էնենց թանկ քան լի բ'ան կան սեր՝ վոր հիրանը չըճանցնիր, կան րոզա փիս նեղանիր: Իմալ հինքըն էր սան դսիռտ, գիդում էր՝ հըմեն էտենց են, հիրանը կըխասկընան, չեն նեղանա:

Ուսանող գախ յես հանըրական ցարան ի մընում: Մէ օր հիրկըվա յանը ես Արայիկը էկավ հանըրական ցարան: Ուրխըցանք, մէ էրկու օյին շախմատ խախճանք, մէշու խանանք - չանանք անրինք, մէ կըտոր խաց կերանք, մէկէլ տեսանք՝ հէլե գիշերվա կեսը: Մէ խատ լիժանկա ունինք, յես քընա ըտու վըրեն, Արայիկն էլ քընավ իմ տեղը՝ կանաֆտին. դը կօնախ էր: Գիշերը յերեվի պանդեր ի. հառավոտ զառքընա, տենամ՝ յերիկամըս ուժեղ ցավում: Անտանելի ցավ էր, յես էտենց ցավ չի տես: Ես Արայիկը վոր տեսավ՝ յես էտենց տըքտըքում են, հէլավ նըստավ, խառցըրեց.

- Վառթան, ի՞նչ է պատահել:

- Յերիկամս ա ցավում , - անսի:

Ասավ.

- Յերիկամը վօ՞րն է, հաստ աղի՞քը ...

Նեխսըռտա, անսի.

-Արայիկ, յերիկամը յերիկամն ա, ի՞նչ խաստ անդիք:

Ես Արայիկը մէշու անձեն - անձու նըստավ, յետօ հէլավ, ըսկըսեց տըխտըխկալեն էթալ - գալ: Մէկէլ անսավ.

-Վառթան, յես ազատ թռչուն են, յես պիտի էռթան,- հինքը լենինականցի յա , - յես չէ՛մ կարող յերկար մի տեղ նըստել:

Ցավը քանի էթում էր, ուժեղանում էր: Ասի՝ գօնէ գընա մէխատ գըրեկա, մէկէլ դեղ ու մեղ բե, թօ ցավը մէշու թօղա, նոր գընա: Շուշուտ գընաց, բերեց, ընձի դեղ ու դուր անրավ, ցերեկվա յանը ցավը մէշու թօղեց: Նորուց անսավ, վոր հինքը անզատ թըռչունն ա, պըտի էթա: Ասի՝ լավ, գընա, բ'այց հիրկըվանը գըքաս, կան րոզա ցավը էլի բըռնա: Ասավ՝ անպանյան գըքամ, ու գընաց: Մէկէլ օրը կեսօրին նոր էկավ: Ասի՝ ի՞մալ գացիր չէկար, բը վոր էլի վատընի: Խընդմընդաց, անսավ.

- Ի տօ, մունդըռիկ, յերեսիտ մահվան գույն էր էկէ. վախեցա՝ մի բան պատահեր, ինձ մեղադրեին...



Նա մռուդ մահաթը ըսկի բանի նրման չէ: Ինչ ա. մէ օր ծընվէր եմք, մէ օր էլ պըտի մեռնենք էլի: Վոր մըռըներըտ կանխիր նըստար, ինչի՞ կըխասնես: Յընչի վի՞րն ա վերցած դըրած գըլխըներին, դ՛ու յէլ մահէր ես: Է~է, բալամ, վո՞րն ա խէտը ինչ տանրե, վոր դ՛ու ինչ տանես: Թէ կանում ես՝ անսա, խօսա, խընդա, ուրխըցի, վոր խէտիտ հընգերն էլ քեզնից բան խասկընա...

Էտա ձեր հարեվան Դեղօյ Անային, վոր ես էրկօր մեռավ (օղօրմի հիրանը, լավ կընիկ էր), ուրախ - զուրախ, խաննաքչի կընիկ էր: Էս վեռչի տանրիները էտի հիրան – հիրան դանոցէր էր սընըխչի. յախու յէր քըցո~ւմ, տեղից դուս հընգուկ վոտ ու ձեռ էր տեղը քըցո~ւմ, մահէլօվ օլըրվուկ էրակ էր դըզո~ւմ, վեռչը... Մէ օր մեր մայրի Նանի ումբէն տեղից հըլնում: Ըտուն բէրում են Անայու կուշտը, վոր ումբէն քըցա տեղը: Էս Նանը խօրօտ – նըխշուն, չաղ, թան սիֆտակ կընիկ էր: Անային ըտու ումբէն բացում, ըսկըսում հավէսօվ մահէլ: Մէկէլ դուռը բասվում, էտա Կարօյ Մանուկի Կարօն նեսա ա գալում: Էսի վոր Նանի տըզլոզ ջանը տէնում, անում՝ վա՛յ – վա՛յ, անօթու ֆըռում, վոր դանա: Նան էլ ընդէ յա խառվում հիրար: Անային ձեն ա տանում.

- Արի՛, յեխպար, մի դանոցի, անրի. լա~վ էլ կըսմըթի յես ռաստ էկե, լարի տե՛ ինչ լավ անբանք ա, ինչ փըմփուխ, սիֆտակ ջան ա...

Գիդո՞ւմ ես՝ մէկէլ մեր ժողովըթի ինչըն ա լավ. վոր ինչքան էլ նեղի հըլնեն՝ չեն նեխսըտում, նեխվում. էլի չէլուկ տեղից մէ խընդալու բան են մօկօնում, ծըղգում են, սըռտըները բասվում: Նեղութունն էլ մահի խըմար ա, պըտի դիմանանք: Բը ի՞նչ...

Սօվէտը վոր բըլավ, հըմէն ինչի խէտ լուսըն էլ դանոցավ սեվ անվէզ: Վորն ինչ կանում էր՝ գօղնում էր. լուսն էլ ին գօղնում: Իմա՞լ: Յընչի դու չէ՞ս հիշում: Լուս գըրօղներին խառցու՝ կանես: Դը ըստուց – ընդուց գաղնի լարէրօվ քաշում ի~ն, էնեց ին անում՝ ըչչօտչիկը չէր գըրո~ւմ, յես ի՞նչ են գիդում... Ի՞նչ անին, ճըժոց տէր ին. ճըժին ըսկի յետաքըրքի՞ր էր, թէ յերկիր էր քանդըվե~, իշխանութուն էր

փոխվե~: Չէ, էնի ա բրել էր ուզում. վորն էլ իմալ կաներ, պըտի հիր ճիժը պախեր, բը ի՞մալ...

Մէշու վոր կանոնավորաձ, էսխան դը ըչօտչիգները տըներից խանին, տանրան գանին ըստօլբէքի գըլխին, վոր կեխօութուն չըլներ: Յըմէն անքամ լուս գըրօղը գալում էր, հըլնում էր ըստօլբէն, թիվը գըրում էր, հիշում էր, փողն անում էր, էթում էր: Էտենց մէ դան մեր Կօսմօսը (հավէլի անունն ա. Գագարինի թըռնէլու տարին ա ծընվե՝ անսօ Կօսմօս) հըլնում ըստօլբէն, վոր ըչօտչիկի թիվը հիշկա, մէկէլ Բոխկի Գարեյ Յէնձէլը գալում, ցածըրից ձէն ա տալում՝ ունուդ, ինչքա՞ն ա գըրե: Կօսմօսը վիրեվից բօռում.

- Յագար իրեք հարիր դըրամ, էրկու հարիր էլ կըտաս հըլնել – հիշնէլէս:

Դը հըմէն էլ գիդում ին, վոր հըլնել – հիշնէլու խըմար պըտի էտ փողը տին, բայց վոր Կօսմօսը ըտու անունը տալում, էս Յէնձէլի դուրը մէշու չըգալում: Բօռում ասում.

- Կօսմօս, հըլնէլուտ հարիր դըրամը կըտամ, բայց հիշնէլուցըտ գոռօ չունեն: Դու գիդաս՝ ուզում էս՝ հիշի, ուզում էս՝ մաց ըստօլբի վըրէն: Շատ արիր՝ հէսա կէթամ, շունն էլ կըբէրեն, կըկան պեն ըստօլբի տակը, լը տէնամ՝ ի՞մալ կանես...

Ասում են՝ համ էլ էտենց արե, բայց Կօսմօսը ասում՝ չէ...

\*

6

Պապինը ճանփէն կանուկ ա հըլնում, մէկէլ մէ անփոյա կանում, շօֆերը խառընում Մարքարյանի տան տեղը: Պապինի քանու անգանունն ա էտի հըլնում, քանին էլ՝ պաշտոնավոր, Պապինը էտ անփոյ տանում դուզը հիրա քանու տուն: Քանին քընուկ ա հըլնում, էս անփոյ մանթիք տընէցիթին չեն թօղում, վոր գառթընցընեն, անփոյ մըչից մէ բօլ բան են հիշըցընում՝ էլ պանիդօր, էլ դէխօ, էլ ձըմէրուկ, էլ շոֆնէրօվ արաղ, էլ ինչ ասես: Չեն էլ ասում, թէ վորն են, հուստ են, թօղում են, էթում են: Միյնակ ասում են, թէ հիրանք հէքուց Քանվան Մարքարյանին կըտէնան: Յէքսի օրը հիրկըվանը Պապինն էթում քանու տունը, վոր գիդա, թէ ըտոնք վորն ին հէլէ, բայց քանուն մանթ էլ մօտկըցուկ չըլնում: Պապինը գըլխույա հընգընում, վոր էն մէկէլ՝ տեխնիկումի Մարքարյանին ին ընդոնք խառըրե:

Էտ մէկէլ Մարքարյանին Պապինը պանում էս հըմէնը, էս Մարքարյանն էլ ասում.

- Այ մառթ, յես էլ անսուն եմ՝ էս ի՞նչ հաշիվ ա. քընընություն եմ վերցուն, մէկէլ մէ տըղա էկավ. վոշ մէ բ՛ան չըգիդուն: Ասուն եմ՝ տըղա ջան, էրկու յես ըստանուն, գ՛ընա, գ՛ալիք տանրի գ՛ըքաս, անսուն՝ հընգեր Մանրքարյան, բը իրիկունը՞... Ասուն եմ՝ իրիկունը՝ ի՞նչ... Նորուց անսուն՝ իրիկունը՞... Վեռչը բ՛ան չըխասկըցա, հէլավ թողեց գ՛ընաց: Ուրեմ էտ հույսին էր հէլե...

\*

7

Խաննաք - չաննաքը էլի վոր լավ բ՛ան ա, բ՛այց պըտի չափավոր անես, գիդաս՝ վորդե ինչ ես խօսուն. կանրողա կող ու կըշտիտ մանթիքը քե չըխասկընան, ու լավ բ՛ան չըստացվի:

Սէ դան անֆտոյով գ՛ալուն ինք, մէ ծանօթ տըղա մեզի կանըցըրեց, թէ՛ քէլէք ձեզի տանուն եմ մեր տուն, պանտիվ տամ: Ասինք՝ չէ՛, վըռագն ենք: Էսի թէ՛ դը հիչէք էսա խանութը մէ բ՛աժակ բ՛ան խըմենք, գ՛ացէք: Ասինք՝ չէ՛, խըմէլու անխօղ չունենք: Էսի թէ՛ դը կաննէք էտա խանութից մէ խատ անրաղ բ՛երեմ, ճանփեն խըմէլուն կէթաք: Ասինք չէ... Ու ըտե յես իմ անրեվուն գիվան խաննաք անրի, անսի՛ չըլնի՛ անրաղի փողը տաս, մենք ճանփից կաննենք: Ասի յու հընգանք կըրակը. էսի հագար դըրամ ջիբից խանեց ու ըսկըսեց էտի գօռով ճըխտել մեր Վաչիկի ձեռը. միյնակ Վաչիկի լուսամութն էր բ՛աց: Վաչիգն ու էտի ըսկըսին հիրար քաշքըռնել, վեռչը էտի հարմըրցըրեց, փողը թանլեց անֆտոյ մէչն ու փախավ: Յես էլ իմ անրուկ խաննաքից շատ փօշման մանցի, ընձի – ընձի անսի՛ հէլա խայտառակ... Բ՛այց ցավն էն ա, վոր իմ խէտի խները իմ յանից չէլան, անսին՝ դ՛ու անսիր՝ փողը տու, էնի յէլ տըվեց...

\*

8

Ծըղզալու բ՛ա՞ն անսեն: Է՛, գիդո՞ւմ եմ վոր... Լավ, վոր էտենց ա, կաննի իմ պըստըկութունից պանդմեն, կանրողա ծըղզաք...

Տանս – տըսվէրկու տանրեկան թեթըվ տըղա յի: Մեր անբրեւակերպը լավ չէր, ըսկի լավ չէր: Խէրըս անսավ՝ բալա ջան, անրի գ՛ըլնի՛ քե տանեն, Արանա յաները մէ ծանօթ ունեն, հիրանց վիճակը լավ ա, ըտոնց տունը նօքանրութուն անրա. դ՛ու ըտե կանբրես, մէ էրկու կանպեկ - շան յի էլ կըտան՝ մենք ըստե յօլա կէթանք: Ի՞նչ անինք,

չինք կանու՛մ անբրինք... Խերըս ընծի տանրավ ըտոնց տունը, հինքը թողեց դանոցավ, էկավ քանվան:

Ըտոնք մէ մանթ ու կընիկ ին, ճի՛ժ – պիժ չունին: Է՛ն ինչ վոր մանթըն էր՝ շատ խըխճօվ էր, գըլօխըս մանժուն էր, հիրա ճանը վոր լըռիվ չէր ուտուն, կընգան անուն էր՝ մի թափա, տու թօ տըղէն ուտա: Է՛ն ինչ վոր կընիգն էր՝ ընծի խօլոր էր գանուն, գ՛օխտուկ տեղ կըմըշտուն էր, մանթին անուն էր՝ քօ ճան ա՛ դ՛ու կե, էտի գըկունը ուտա... Մէ օր էլ էտ կընիկը մանթին ըստիբեց, վոր յես էշն աննեն, էթան մէշէն՝ փեղի: Ասավ՝ հանգառօ իշին չըխեգնես. էտի խըռտընուն: Իշին անրի դէմըս, գ՛ացի մէշէն: Է՛, մէշէն էլ խօ հըմա էտատեն չէ՞ր: Չուն խասանք, վողներըս թըմբըրան: Ասի՝ մէշու նըստեն մէ ճըղի, դինջընամ, նոր գըլնեն, ցախ կըժօղեն: Թէ իմալ էր հէլե, հանշկըս կըպէր էր: Մէկէլ խըռխըռոցի ձէն անա, գառթընա: Հիշկան տէնամ, գ՛իլվանքը իշի փորը թափած. էշն ա խըռխըռուն: Հընգնավորա, իշին թողի յու մէ փախնել եմ փախնուն, մէ փախնել եմ փախնուն: Վագէվագ խասա տուն, խանգէնին անսի՝ գ՛իլվանքը իշին կերան: Խանգէնի կընիկը խասավ ու ըսկըսեց հանգըժներըս քաշել. վոր խանգէնը ձ՛եռից չառներ, վայթէ պըշկէր, մընի անհանգաճ...

Հէքսի հառավոտ խանգէնը կընգան թանխեց, վոր ընծի բ՛ան չասա, գընաց հիր գ՛ոռծին: Հանգըժներս էնենց ին ցավուն, էնենց ին ցավուն: Ձ՛եռներօվ բ՛ըռներ ի, նըստէր ի դ՛ուռը: Մէկէլ էս կընիկը խաքուն – խըփուն հէլավ, թէ՛ յես տեղ եմ էթուն, ճըտերին հիշկա՛ կանկըռները չըտանեն, չուն գ՛ամ. անրի դանրվան էլ հիղվէս փագա: Էտի վոր գընաց, ըսկըսի ճըտերին տիրութուն անել: Անտըները շատ էլ չին. օխտ – ութը խատ ին, բ՛այց հընչի ընծի լըսո՞ւմ ին. չէ՛, իմ կուշտը չին մընուն, հա փախնուն ին էս յան, էն յան: Վոր գանլէս շատ տանրան, հէլա, մէ խաստ թել գըթա, բ՛երի ըտոնց վողները կանպի, անրի մէ շանրան, անսի՝ դը էտենց հիրար խէտ ման էկէք: Մէկէլ դանրվանը տըփին, ճըտերին թօրգի, գ՛ացի դանրվանը բ՛ացի: Խանգէնի կընիգն էր: Ասավ՝ ճըտերն հո՞ւր են, ձ՛եռըս պանգի, անսի՝ հէն են: Հըմա էտ գ՛ախ մէ կանկա՞ն էր, ի՞նչ էր՝ գանեց, մէ ճուտ անավ բ՛երանն ու թըռավ: Դը սանղ հիրար կանպուկ ին. էտ շանրանը խանեց օթ, անավ գընաց: Էս կընիկը վոր էտի տէսավ, յեսուից էր թէ ինչից էր՝ ուշկը գընաց: Է՛, յես ի՞նչ կանի, վոր անի. ըտե մէ վէդրօ ջ՛ուր էր դըրուկ (դ՛ու մի անսա՛ կըվջ՛ուր էր), անփալ – թափալ վէրցի յու շըփի ըտու վըրէն... Էսի վոր օյանըշավ, տէսավ՝ հիրսօվ, շօրէրօվ կըվջ՛ըրի մէջը կուրե, հէլավ հընգավ հիղեվըս: Հանրանք մէ քանի կըռուգ վոր տըվինք, մէկէլ մանթը խասավ, կընգա դէմն անավ...

Էտ օրը ընծի խաց չըտըվին...

Չառաժկոտ շուտ խնամքները գճնաց միս բ՛րեց, դ՛րեց դ՛ուռը, ընծի անսավ՝ հիշկա կատուն չըտանա, դ՛անակը բ՛րեմ, կըտըռտեմ, վոր կընիկս էփա, հեսոր տունը մանթ ա գալուն: Չինքը վոր մըտավ նեռս, մէկէլ էն յանից մէջոչ կատու հիրանը տըփեց մըսի վըրէն, մէ կըտոր միս անաժ, փախավ պանդալը: Չիդվից վազա, տեսա՝ կանյե ուտուն: Չանշկըս մէ ուրաք հընգավ, վերցի յու շըպըռտի կանդի յանը: Ուրաքը գճնաց անաժ մէ բոշկի, բոշկէն ծանգվավ, մըչից ըսկըսեց ցորենը չըռալ: Խօ չըռալ չէր չըռուն... Ինչ անեմ, ինչ չանեմ, ըտու կողը մէ բոշկա յէլ կէր դ՛ըրուկ՝ վըրէն մէ չիվ: Էտ չիվը մէ կերպ խանի, վոր ցորնի բոշկի ծանկը փագի, մէկէլ էտ չըվի տեղից գ՛հնու շիթը վոր չըզանեց քիթուբ՛երնիս՝ խէլըրա հընգա: Թէ ինչքան ի տենց մանցե, մէկէլ տէնամ՝ խնամքները վոտիցըս քաշէլօվ ընծի ցորնի յու գ՛հնու մըջօվ քըռ ա տանուն...

Էլ ընծի ըտոնք չըպանխին, յետ հողըրկին, էկա մեր տունը: Բան, բալա ջան, ուզում ես՝ անվատա, չես ուզում՝ մի անվատա. հալն ու կըսէն տենց ա հէլե...

\*

9

Չառէջ ժամանակ խօ հըմընի տունը մըկավա նըման կըրանթ չըկէ՞ր. կընանիքը, ջանլէ խառսներն ու անխճըգները օրը քանի դան կըժեռօվ էթուն ին, հախպըրից ին ջուր բ՛րուն:

Մէ օր Քուչօյ Պանրի տունը հուստա յա բանուն: Խառսը էթուն, հախպըրից ջուր ա բ՛րուն, կիսուրն էլ էտ ջուրը լըցուն կանգանը, դ՛ընուն կըրակին, վոր ճանշ էփա: Մէկէլ հանշկը անուն կանգին, տէնուն ջըրի հիրսին մէջոչ գ՛ոռտ կան: Ուզում խանա քանլա էն յան, բայց մէ հուստէն ըտե յա հըլնուն. էլ ճար չըլնուն, ձեռօվ գ՛ոռտին բըռթուն ջըրի տանկը: Էտ հուստէն էլ ըտե հա մըզմըզում, չըթօղում էթա, վոր պանաժը գիդա՝ ինչ անա: Գոռտը հա թըռնուն հըլնուն ջըրի հիրես, պանաժը բըռթուն ցածըր: Վեռչը պանաժի զանլէն էթուն, յեռօտուն, անսուն.

- Տանփի՛, տանփի՛, սե՛վ գա վըրէտ. կօմսօմօլի տօմս են ուզում՝ հա թըռնուն ես, հըլնուն ես ջըրի հիրես:

\*

10

Պատիւն ու Յինջօն էթուն են Յերէվան հիվանդանոց, վոր Պատիւնի հան շկի կանրը տան խանել: Պատիւնը մըղնուն նեռս: Բըժիշկը մէ չաղ կընիկ ա հըլնուն: Պատիւնին նըստըցընուն, հան շկի մէչը մէ բան ա մըստըցընուն (պինցէտ ա~, ինչ ա~), ուժեղ ցավըցընուն: Էս Պատիւնը բօռուն, էտ կընիկը վըրէն խօսուն, թէ՛ տըղամանոթ էս, պըսի դիմանաս: Էտենց անսուն, էտ ցավըցընօղ բանը թօղուն Պատիւնի հան շկի մէչը, էթուն, ըսկըսուն դանրան գները բանցել-փագել, էս յան, էն յան էթալ - գալ, գիվան բան ա ման գալուն: Էս Պատիւնը ցավից ու յեռսից հիրանն ուտուն, բայց ի՞նչ կանա, վոր անա: Էտ կընիկը լը մէ բան էլ ըսկըսուն դընդընալ: Վեռչը, փորը խիխճ ա հընգուն, գալուն, Պատիւնի հան շկին տիրութուն ա անուն: Վոր պըռծուն, էս Պատիւնը տանուն - բերուն մէ խատ լավ կըպըցընուն էտ կընգա չանին: Էս կընիկը բօռուն-ճըչուն, Յինջօն լըսուն, անսուն՝ լը կանյնի տէնամ՝ էտ ի՞նչ ա հէլէ: Մըղնուն նեռս, անսուն՝ ի՞նչ ա հէլէ, հընգերիս հընչէ՞ս նեղուն: Էս կընիկը հիշկուն Յինջօյ գալըստուկին, մըտածուն, թէ էտի խէլօք մանոթ գըլնի, անսուն.

- Ձեր սարի անասուն ընկերօջը բան հասկացրէք, Դուք ինտիլիգենտ էք յերէվուն:

Յինջօն բէսանթ վիյավորվուն, գիղուն՝ էտ կընիկը հիրանը շատ վատ բան անսալ: Ձեռը պանոզուն հառէչ, հան շկերը չըռուն ու բօռուն.

- Վորն ա ինտըլիգենտ, դու յես ինտըլիգենտը, յանքան կընիկ՝ չես էլ անջընուն, քըֆում էս տանլուն...

\*

11

Իմ քուր Մանուսը դըբօցը լավ չէր սօրվուն, ղըստէն վոր ըսկի չէր գիղուն (անխճըգները չըլըսան, թէ չէ վըրէս սեվ կըբերեն): Մէ օր ղըստէնի ուշուչիչը, Տանվարիչ ին անսուն, գալուն, անսուն.

- Յերէխաներ,- քըթի մէչն էլ խօսուն էր,- ձեզանից օ՞վ կանրօղ է անսել՝ ղըստէն մըկին ի՞նչ են անսուն:

Էս իմ քուրը հիրանը կըտըռտուն.

-Յես անսե՞մ, հընգեր խաչատըրյան, յես անսե՞մ,- սեղանն էլ քիչ ա մընուն բըռթա, խէտը հառէչ տանա:

Էս ուշուչիչը շիվարուն, անսուն.

- Յերէխաներ, լը սպասէք, էս Մանրքարյանին ի՞նչ ա պանոյե, վոր հիրանը էտենց կըտըռտուն ա, Մանրքարյան, լը մէ անսա՛ տէնանք, մըկին ի՞նչ են անսուն ղըստէն:

Էս իմ քուրը չըտանում, չըբերում, խըպառտ հըլնում, կանյում, անում.

- Մըկին ռըսերեն անում են մըգըռտիչ:

Էս ուշուչիչը կանդում, հընգնավորում, անում.

- Դը նըստի, դը նըստի, յես էլ անում են՝ էս հընչա՞ հիրանն էսենց կըտըռտում, սեղանն էլ խետը հառէ ա բերում: Մէ չէ՝ Սանդաթ~լ, Մանտիրո~ս, Զայկարա~մ...

\*

12

Ուզո՞ւմ ես՝ մըկա Զօվանէս Թունանյանի «Թըմկաբեռթի անունը» ծիրից ծեր անսեն. ըսկի մըտես չըգացե: Քանի վոր ժամանակին սօրվեր ենք: Մըկավա ճըժերին լը խառցըրա՞: Զերեկա սօրվուկը հեսօր չեն կանա անսեն: Ախար լը գիրքը չեն վերցում ձեռըները, ծանլում են, դընում են էն յան, անում են՝ սօրվանք, պըռծանք: Ուշկ ու մըտկըները տէլեվիզօրն ա, կանմպուտերը յա թէ չէ էտա ջիբի յեռախօսները, վոր թանգան դուս հընգան: Ուշուչիչին ի՞նչ մեղդըրում կան. վոր չեն սօրվում, կօ չեն սօրվում, ուշուչիչն ի՞նչ անա... Մեր գախ ուշուչիչը գեղի հըմընից պանդավոր մանքըն էր. մենք գիդում ինք՝ ուշուչիչը վոնչ ուտում, վոնչ խըմում, օր ու գիշեր կանթում, ինչ էլ անում՝ ճիշտ ա. գիդում ինք՝ ուշուչիչն անված ա: Գեղի մէջը վոր ուշուչիչ տէնինք, գըլնինք կըկանյինք: Շատ գախ կըփախնինք կըպանխկըվինք, վոր ուշուչիչը մեզի չըտէներ, թէ չէ հէքսի օրը վըրըներըս կըխօսեր, վոր դասերը թօղեր ինք, հէլեր ինք ճանփեն: Բան, բալա ջան... Մենք ուշուչիչին մեր խօր ու մօրից շատ ինք տեղ տանլում: Բայց մըկավա անշակեռտները ուշուչից յեկի են քաշվո՞ւմ ...

Մըկավա ճըժերը տէլեվիզօրից ի՞նչ անպետկ բան անսես, վոր չեն սօրվում: Զանշկ են տանլում անռասանյանին: Չեն անում՝ ընդոնք՝ հուրիշ, մենք՝ հուրիշ: Մեր խըմար նանուսը, պանտիվը, հընդանիքն ա կանրեվոր: Բայց էտենց բաները ընդոնց կուշտը մըկա մօղա չէ: Մենք է՞լ հընգենք մօղի հիդեվ: Զընչի վոր զարքանում են, պանռտադիր պըտի անընդոխկութուն անեն, խայտառակվե՞ն: Դու կուզե՞ս քօ տան անթամը ըտոնց նըման հըլնի. չես ուզի, չէ՞: Մեր ջանել – ջուռլը պըտի գիտութունի պոչը բըմեն, պըտի լավ հընդանիք կանգնեն, իմալ պետկըն ա՝ անխշատեն, լավ տուն ու տեղ դընեն, հիրանց ծընօղին հարգեն - պանդկեն, հիրանց ճըժերին լավ անպագա ըստեխծեն: Մեզի էտի յա սանգական, թէ չէ... Գօղութունը, անվագակութունը, մանթասպանութունը, աննանուսութունը, սուքը մեր բանը չեն:

Յուրիշից սօրվում ենք՝ լավը սօրվենք, վատից ի՞նչ գոռժ ունենք: Չէք տե՞նում՝ ըտոնք վոնչ ջոնչ են խասկընում, վոնչ պըստիկ, վոնչ անկ, վոնչ բարեկամ. հանրաժողովուրդի հիրանցը ձեռն ա տանում... Տըղա ջան, յես չեն խասկընում, պետութունը չըկանում ենենց անա, վոր տելեվիզորը մեր մանդըր ու բեռին լավ, պետկական բան սօվըռցընա ...

Իմալ անում՝ խելօք գառը քօզի մէջըն ա բելլու անում: Մանթ պըտի պըստըկուց հիրանը դըռսեվօրա, լավ հուսում աննի, վոր լավ մանթ դառնա: Թէ չէ ի՞նչ ա. էտա մեր ճըժերն էկեր ին, պանդում ին, ուշկըներն էթում էր: Դըբոցը հայերէնի դասին ուշուչիչը էտա մեր բանի թռիմ, ը~ը~ը~.... Սիրականի թռիմ, անունն էլ Տարօն ա, խանում գըրատանտակի կուշտը, խառցընում, թէ՛ Մանտոցը վորդէ յա ծընվէ: Էս ճիժը կըմկըմում: Յընգերները վոր տենում են՝ չըկանում անա, գոխտուկ հուշում են, թէ՛ Տարօն գավառի Յացեկաց գուղում: Ուշուչիչը վոր մէկէլ ա խառցընում, էս ճիժը ուրախ – ուրախ պանդասխանում.

- Մերօպ Մանտոցը ծընվեր ա Գավառի Յացառատ գուղում:

Ծըղզում էս, բայց էտի ծըղզալու բան չէ. էտենցներն են, վոր էթում են անում են՝ Մանունցի Դավիթը հայրենական պանտերազմի մանակից ա... Դու գիղում էս՝ Մանունցի Դավիթը վորն ա ...

\*

13

Յագօփյան Յըրանդը Մանուխան դըբոցի դերեկտօր ա հըլնում, Յերեվնա գալում են ըստուգման: Դը Յագօփյանը իմալ պետկըն ա՝ ըտոնցը ընթունում ա, տանում ա հիր կանքիմէտը, նըստըցընում, կօյնակ ա խըմցընում, վեռչը խառցընում.

- Տըղէ՛րք, ի՞նչ կա, ինչո՞ւ էք էկէլ:

Ըստոնք անում են՝ հէսօր ֆիսկուլտուրնիկի օրն ա, էկեր ենք՝ տենանք՝ ձեր դըբոցը ֆիսկուլտի ի՞նչ միջօցառում ա կանգակերպէ: Թանտի նըման էլ էտ օրը ֆիսկուլտի ուշուչիչը խիվընցուկ ա հըլնում, դըբոց գալուկ չըլնում: Բայց դը Յագօփյանի խելքը վորն ունի. ըտոնք վորն ի՞նչ, վոր Յագօփյանին նեղին: Մեր Յագօփյանը հիր կօնխըներին խանում հանայթ, ձեռը պանզում սանի յանը<sup>5</sup>, անում.



- Տեսնո՞ւմ էք, սա՞րի լանջին մեր դահուկօթքներն են. անապօտ շուտ գ'յուղից դուրս են էկե, անթեն յերգըռօթ պըտույտըն են անում սա՞րի շուրջ: Մէ չոռս – հինգ ժամից յերեվի կըվերադառնան, յեթ մընաք, միյասին կըդիմավորենք:

Էս ըստուգողներն անում են՝ խա, տեսանք, բ'այց էտքան չենք կարօղ ըսպասել, հուրիշ դըբոց էլ պըտի էթանք: Թօղում են, էթում են: Հիրանց վերադասին հայդընում են, վոր անբօղջ շըռջանում միյնակ Հագօփյանի դըբոցն էր իմալ վոր պէտկըն ա ֆիսկուլտուրնիկի օր նըշում, Հագօփյանին էլ շընօրակալագիր են հօղըրկում:

Բ'այց իրականում Հագօփյանի նըշանց տըվուկ դահուկօթքները սա՞րի վըրվի քարերն ին, վոր ծ'ան տըկից ցըցվէր ին, ու յեռվից հիշկօղը կըգիդէր՝ ըտոնք մանթ են:

\*

14

Հագօփյանին տանլում են Բանջանդա դըբոցի դէրէկտօր: Բանջանցիք շատ են ուրխընում, վոր էտենց դէրէկտօր ունեն, գ'եղօվի Հագօփյանին շատ են հարգում, պանդվում: Շատ գ'ախ գ'ալում են, Հագօփյանից խօռուռթ են խառցընում, ընդու անուկօվ են հիրար գ'ալում:

Մէ օր էլ Հագօփյանի կանքնէտ մէ խօրօտ, նըխշում, տեղը տեղին կընիկ ա գ'ալում, բ'օղօք անում, վոր դըբոցի ուշուչիչներից մէկը հիրանը նեղութուն ա տանլում: Հագօփյանը խօստանում ուշուչիչն իմալ պէտկըն ա կարքի հըրավիրա, էտ կընգան սիռտ ա տանլում ու ճանփու դընում: Յետօ ուշուչիչն կանչում հիր կուշտը, թըքում - մըրում: Ուշուչիչը կըմկըմում, ուզում անթարանա, բ'այց չըկանում, Հագօփյանը յեռթ չըտանլում, էնքան յեռսօտուկ ա հըլնում:

Մէ քանօր յետօ ուշուչիչը էտ կընգան անում, գ'ալում Հագօփյանի կուշտը, դ'առնում էտ կընգան, անում.

-Այ անամօթ, դը մըկա անսա՞ տէնամ, յես քե բ'ան անսէ՞ր են:

Էս կընիկը ուշուչիչն վոտից գ'ըլօխ մէ լավ չափում, դ'առնում Հագօփյանին.

- Հընգեր դէրէկտօր,- անում,- յես խօ չի՞ անում՝ բ'ան ա անսե: Անում ի՞ մըտկին կա, կարօղա անսա: Համ էլ տեսա՞ր, վոր անսավ:

Անում ին՝ էտ կընգա հանշկը Հագօփյանի վըրէն էր:

Քննվածա համալսարանը շատ խիստ են, անսում են՝ ուսանողները հրմընօր պըտի գ՛ան դ՛ասի: Մէ օր էլ մէ ուսանողույի գ՛ալում դէկան Ղաջօյանի կուշտը, հիրան – հիրան խընջիկ – մընջիկ հըլնում, հնշկօվ – հընքօվ ուզում բ՛ան խասկըցընա: Էս Ղաջօյանը էլ չըդիմանում, յեռսօտում, անսում.

- Ախճի՛կ ջան, բ՛ան Էս անսում՝ անսա, յես վոնչ քօ հավէսն ունեն, վօնչ էլ ժամանակ ունեն, մէ ֆանկուլտէտ իմ հուսին ա, շո՛ւտ անրա՝ անսա, մըկա զանգը կըտա:

Էս անխճիկը մէշու հիրանը հավքըռտում, անսում.

- Հընգե՛ր Ղաջօյան, յես էրկու ճիժ ունեն, պանխօղ չըկա. չեն կանա ըտոնցը թօղեն, հրմընօր գ՛ան դ՛ասի: Դու ինչօ՞վ կանաս ընձի օքնես:

Ղաջօյանը հիրանը չըկուրցընում, անսում.

- Դը էլ ի՞նչ անեն. ճըժերիտ խտըտ բ՛ե. յես կըպանխեն, դ՛ու կէթաս դ՛ասի:

Բը հընչե՞ն անսում՝ խաց տու խաց թըխօղին, մէ բ՛ան էլ հավել տու: Ուզում անսա՝ թէ ուզում Էս գ՛ոռօըտ մէ դան անրվի ու լավ անրվի, հուստա մանթի խէտ գ՛ոռօ բ՛ընա, թէկուզ վըրէտ մէշօլ թանգ նըստի:

Հանպօյ Գըվօն, Թանզու Սանրօն ու Հառթենի Ադիբէզը գ՛եղի փինան չիքն ին, ըտոնցը վոշ մէ բըրիգադիր խօպան չէր տանում: Մընում ին գ՛եղը, սըթից - փըթից, փինէլու գ՛ոռօ վոր հըլնում էր, ըտոնք էթում ին, անում ին:

Էտ իրեքի անխպըռտանքն էլ դըբռօցն ին անխշատում: Մէ անմառ դըբռօցը ռէմօնտի գ՛ոռօ ա բ՛ասվում, ուշուչիչ անխպըռտանքը դերէկտօրին խընթըրում են, ըստոնք էթում են էտ գ՛ոռօին, անսում են՝ մենք իմալ վոր պէտկըն ա՝ կանենք: Մէ քանի ժամանակ հընսնում, դըբռօցները բասվէլուն մէ էրկօր ա մընում, ժօղկըռթբ՛աժվար Բադիկյանը անսում՝ լը կանյի էթան Սանրուխանա դըբռօցը, տէնամ՝ ռէմօնդն անրի՞ն, պըռօա՞ն: Գ՛ալում մըղնում դըբռօցը, տէնում վոր ի՛նչ. պանտըն անրանդան - թուրանդան նէրկած, ըստե - ընդե չըռչըռցըրած, դ՛ու ու լուսամութնէրին էլ ներկը գ՛ունդ - գ՛ունդ ծէփած: Շիվարում, անսում.

- Այ տընաշէններ, էսի գ՛ոռօ ա, վոր դ՛ու անրէր էք...

Գըվօն էն յանանց մույն անթ ա գ'ալում.

-Յա~ա, հընգե'ր Բադիկյան, բը դ'ու մեզնից ի՞նչ իր պահանջում, քեզի էրմիտա՞ժ պըտի նըկարինք...

\*

17

Ասված Յագօփյան Յըրանդին հերկէն անբվ անա. Քանվան համալսարան բ'ացեց, մըկա մեր ճըժերը ըստե յեն հուսում աննում, էլ չեն էթում խասնում Յերեվան: Յերեվան դասախօսներն են գ'ալում Քանվան, բա~:

Քանի Քանվան համալսարան չըկեր, մեր ճըժերը սան Յերեվան ին սօրվում. էս բ'արեզմի, էն բ'արեզմի տունն ին մընում, յա թէ չէ՝ քըրեյօվ ին անբրում, մէ օր կուշտ, մէ օր անօթի օր ին հընցըցընում: Ամիսը մէ դան, էրկու դան գ'ալում ին տուն, հիրանցը լըվում ին, թափում ին, կուշտ ուտում ին, ուտելիք, բան ու ման աննում ին, էթում ին: Թէ բան ա, սօրվելուց նեղվում ին, խէրերն էթում ին, իմալ վոր պէտկըն ա՝ հառցերը լուծում ին, գ'ալում ին:

Մէ դան քանվանցի մէ ուսանօղ Յերեվան գ'ալում տուն, խէրը խառցընում՝ ինչ կա, ինչ չըկա, տըղէն անսում, վոր էրկու յա ըստացե: Խէրը յեռսօտում, անսում՝ յես Յերեվան տուն են վառձե, քէ լավ – լավ պահում են, հընչի՞ չես սօրվում: Տըղէն անթարանում, անսում՝ յես ի՞նչ անեն՝ չըլուծուկ խընթիրներից էր հընգե:

Խէրը քիֆտօվ - բանօվ հըլնում էթում դասախօսի կուշտը, ըտու խէտ խօսում, դաննում գ'ալում Քանվան: Մէ ժուկ հընսնում, տըղէն գ'ալում, խօրն անսում՝ էս ի՞մալ իր խօսացե՝ էլի էրկու դըրին: Խէրը յեռսօտում, անսում՝ մըկա՞ ինչ էր հընգե, վոր չըգիցար: Տըղէն անսում՝ էլի չըլուծուկ խընթիրներից: Խէրը շիվարում.

- Վան, - անսում, - հընչի էն գ'ախվընէ մինչեվ մըկա լը չըլուծած, հիշկում են, վոր դ'ու լուծես... Գան', վոր մանցած քօ հուսին, նըստի լուծա, է՛լի ...

\*

18

Չափը լավ բան ա, ումուդ ջան, մանթ պըտի հիր չափը գիդա. մէ բան քէ պահում են՝ վէրցա ու շընօրակալ հէլի, էլ մի՛ անսա՝ մէ խատ էլ տու: Վորը վոր չըբ'ավարարվում, էլի յա ուզում, անսում են՝ անհիրես ա. հիրես տըվինք՝ անստառ էլ ա ուզում: Յընչի անկըշտում մանթ քի՞չ կա: Ըտու խըմար մանթ պըտի շատ

փափուկ հիրես էլ չըլնի, թէ չէ վոր անդնները հաշվին, կանոնա մըդնեն էզմը ու հա  
ըտուց քաշեն հիրանց յանը: Իմալ անսում՝ մանթ պրտի էնքան դանը չըլնի, վոր  
թըքեն, բայց պրտի էնքան էլ քախճըր չըլնի, վոր կուլ տան:

Ես մեր Քանվանա համալսարանը գիդում ես: Իմալ հըմեն տեղ, ըստե յէ  
հուսումը վառձով ա. հառչըվա նըման չէ: Բայց լավ գիցի՝ ըստեղի վառձովը հուրիշ  
տեղի անվառձից հեժան ա նըստում հա~: Ախար մանթ էլ կան՝ համ ունեվոր ա, համ  
էլ անսում՝ կանյի էթան վիզ ծըռեն, բանքի վառձը պակըսընեն, էլ չասում՝ յեռթ  
տամ, թողեն՝ էն իսկական կանրիքավորին օքտեն, վառձը քըչըցընեն:

Սէ օր դեկան Ղաջոյանը հիր տեղը նըստուկ հըլնում, գըլօխը կանխ՝  
հաշվետըվութուն ա գըրում, մէկ էլ դուռը տըփում են: Ասում՝ մըտէք: Դուռը  
բասվում, բայց վոշ մէկը նեռս չըգալում: Ղաջոյանը հիր գիրն անում, յանանց էլ  
անսում.

- Ատցի՝ մըտէք:

Էլի նեռս գալօղ, ծէն անօղ չըլնում: Ես Ղաջոյանը գըլօխը բանցըրընում,  
տէնում մէ չաղ կընիկ լէնքեն անըռե դըռան մէջը, հա ձըքտըվում, վոր նեռս գա,  
չըկանում: Չըլնում էտ կընգան քաշըռնում, չըկանում նեռս բէրա: Ըստիքված  
բըռթում դուս, տեղակալ Գօհարիկն էլ հիդվից քաշում, մէ կերպ խանում են  
միջանցք: Ըտե Ղաջոյանը քըռտընփըչուկ էտ կընգան խառըրնում.

- Տիկին, դը անսա տէնամ՝ ի՞նչ հառցով ես էկե:

Ես կընիկը վիզը ծըռում, մէ կեխճավոր տեսք ա հիրանը տանում, անսում.

- Չընգեր Ղաջոյան ջան, խընթըրում են տըղիս վառձը գիճէք, չենք կանում  
անբենք:

Ես Ղաջոյանը յետ – յետ էթում, հիշկում էս կընգա լէնքին, լուսնըկի  
տըսըրխինգ հիրսին, խաք ու կանպին, վըրվի վոսկեղենին, գըլօխը տանում –  
բէրում, բէրանը չըփըցընում, անսում.

- Ա՛յ քուր ջան, վոր չէք կանում անբէք՝ դու էտ վիճակին ես, բը վոր վառձը  
գիճենք, ու ձեր անբեւակերպը լավընա, դու ի՞մալ կանես, էլ չենք էլ չես կանա  
մըդնես ...

\*

19

Տանտ ջան, չեն անսում՝ հառէչ լավ չէր. հառչըվա լավ ու վատը դու գիդաք:  
Բայց բան էլ կան, վոր մըկա հավէլի լավ ա, քան հառէչ: Ուզում են անսեն՝ հըմեն  
ժամանակ հիրա լավն էլ ունի, վատըն էլ: Չամ էլ տանրիքն էլ նըշանակութուն ունի.

անսենք՝ բան կան՝ ջոջին դուր չըզալում, բան էլ կան՝ քանչևին դուր չըզալում: Յեսին, տատ ջան... Մե խատ կօֆե դընեմ: Չէ... Օրինակ վատ ա, վոր մըկա մեր Քանվան համալսարան կան, մենք էլ ըտե յենք սորվում, էլ չենք եթում Յերեվանը... Ես խալին էս իմալ ա կըխտօտե... Դու չի՞ր, վոր անսում իր՝ յես քե չի թորգի եթիր Յերեվան հուսում աննիր: Դը թօ հառէչ էտ համալսարանը բացին. վոր լավ էր, հընչի՞ չին բացում, դու յու մերըս էլ բանջըրագույն կըսորվիք: Ասում՝ հընգեր Յակօփյանը շուղվանից էր ուզում համալսարան բացեր...

Լավ է՞լի, տատ, գօնե դու էտենց մի խօսա: Ըստե մեզի շատ էլ լավ են սովըջընում: Էնա մեր դասարանի Կանրինեն Յերեվան ա անվառդե, ընծընից վոշ մե բան էլ հավել չըգիդում: Մըտետ գընա՞ց՝ ընտըրությունների գախ վոր գացինք մեր կուռսի ճըժերի խետ դըսից էկուկ դիտօթների խըմար թառքմանիչ հելանք՝ մեզի ինչքան գօվացին: Խառա, տատ ջան, դեմ չեմ՝ դուք լավ էք սորվե: Դը հուրիշ ըզբաղվելիք էլ չէք ունեցե՝ վոնչ տելվիզոր ա հելե, վոնչ յեռախօս, վոնչ կօմպյուտոր: Բայց մըկա մենք էլ հուրիշներից էլի շատ բան ենք գիդում:

Տատ ջան, վոր յեռօթ կուռսըն ինք, մե անմերկացի կանավոր բերին, վոր մե դաս տեր: Դը հըմեն տարի էտենց մեկը մեզի դաս տալում էր, վոր հիրանց խօսակցականը սորվինք: Ես կանավորը մե յեռսուն տարեկան անխճիկ էր, մե յե չեր թողում, վոր դասի գախ հայերեն խօսինք, անսում էր՝ հիրար խետ միյնակ անգըլերեն խօսացեք: Մե օր խօսկ բացինք, թե ուզում ենք Շեքըսպիրի «Յամլետ» - ի մասին միջօցառում անենք: Ես կանավորն ասավ՝ Շեքըսպիրը վորն ա: Մենք շիվարանք: Սարոյանի, Դիկենսի, Դըրայզերի անունը տըվինք, էտի էլի չըճանչըցավ: Ախար հիրանը ըսկի վատ էլ չեր ըզգում, է՛: Էլ չըդիմացա, ասի՝ ճըժեր, էսի դըթում ա: Դու մի ասա՝ էսի մե վօրօշ հայերեն գիդում էր. գըլխի հընգավ, վոր հիրանը բան ասի: Մըկա կըպե, թե՛ լասա տենամ՝ ընծի ի՞նչ ասիր: Ըստիբված դըթում բանը թառքմանինք: Եսի մե ուրխընալ ուրխըցավ, մե ուրխընալ ուրխըցավ. մե ժամ ընծընից շընօրակալություն էր հայտնում: Յես անօթու գըլօխըս կանխեր ի, գիդում ի՛ ընծի էտ ձեվօվ անօթանք ա տալում... Յետօ ի՞նչ պանզըվի լավ ա. Ամերկա ըտոնց անհանգը կընանիքին վոր ուզում են լավ բան անեն, կօմպըլիմենտ անեն՝ անսում են՝ դըթում...

\*

Չըմեն մանթ էլ ներվեր ունի, կանա յեռստի, բռա - ճըչա... Պանտադիր չէ՝ դիպչողական խօսկ անսա, էտ բռալը անթեն մանթի սըռտի դանդ ա հըլնում. բայց խօ կարքը էտենց չէ... Գոռծըս լավ չեմ արե, թերութուն ես տենում՝ խանգիստ քօ դիտողութունը արա, յես էլ մանթ եմ, կըխասկընամ, իմալ պետկըն ա՝ էտենց կանեն: Թէ չէ ձենըտ վոր քըցիր գըլօխըտ, ըտուց ինչ օքուդ... Թէ վոր հիրար լիզու յէ չըխասկըցանք, հիրար կանսենք մընաս բարօվ, ու անէք մէկըս հիր ճանփօվ կէթա. ինչ ենք տըվե հիրար՝ չենք կանում անենք, բալամ... Գոռծի գըլօխ կանուկ մանթը պըտի հիրա խօսկի անթէքը գիդա, հիրա անուկ խօսկի զօրութունօվ գոռծը հառէչ տանա, վօշ թէ բռալօվ, ձեռը սեղանին գանելօվ, անխ տանլօվ: Յես մէ բան եմ գիդում՝ գոռծի մէչը հիրանը հարգօղ մանթը խըլղի վըրեն չըբռա, մանավանդ՝ հիրանից ջոչերի...

Սօվետի գախ մեր Քաննա դըբռօցներից մէկի մէ ջանլէ դերեկտօր ուզում, վոր հիր դըբռօցը հըմեն դենօվ լավ հըլնի, հանչկի հընգընի, կարքապանութունը տեղը հըլնի, ճըթերը լավ սօրվեն, վեռչը... Սէ խօսկօվ՝ ուզում լավ անխշատա. ժողկըռթբաժին կար, ռայկօմ կար, ըտոնցը պըտի պանդասխան տեր, չէ: Բայց քանի վոր ջանլէ ու անփօց ա հըլնում, գիդում՝ սանղ պըտի հիրա անուկօվ շանթըվեն, ըսկի հիր գըծուկ ճանփից չըշեղվեն, գիդում վոր ուշուչիչների խէտ յեռստուկ խօսաց, ըտոնք հիրեն կըվախենան, լավ կանխշատեն: Շատ գախ էլ ուշուչիչներին հավքում, ըսկըսում ըտոնցը բան սօվըռցընել, էլ չասում՝ ախար ըտոնցից շատերը հիրանից շատ փօց ունեն, խելքօվ էլ հիրանից պակաս չեն...

Կարողա էտենց էր ճիշտ, կարողա էտենց էլ չաներ՝ հըլնին նըստին գըլխին, տանկը փօրին, յեսիմ... Բայց էտի հըմընի դուրը չէ, վոր գալում էր. մէ ուշուչիչ վերցե անսէ՝ ինչօր հինքը մեր դաստիրակն հըլնի, մենք էլ՝ մանկապանտեզի ճիժ՝ էնենց ա մեր խէտ խօսում:

Սէ օր էլ էս դերեկտօրը միջանցքօվ յեռստուկ գալում, տենում մէ դասարանից մէ անշակեռտ հէլավ դու. դը ճիժ ա, կարողա մէ բանի կարիք ուներ: Էս դերեկտօրը էլ հանչկ ու հիրես չիշկում, մըղնում էտ դասարան ու ըտեղի ուշուչի վըրեն էնենց ա բռում՝ ըստու լիզուն կըպում, չըկանում մէ բան անսա, թէ հընչէր էտ անշակեռտին դու թօղե: Դերեկտօրը անշակեռտների դենը էս ուշուչիչն էտենց խայտառակում, թօղում էթում: Վոր զանգը տանում, էս ուշուչիչը գըլօխը կանխ դըբռօցից դու ա գալում, հիրան – հիրան էլ անում՝ Թօղ վօրօտա իմ գըլխին փայլակ, կայծակ, հուր, յերկաթ, թօղ դավ դընէ թըշնամին... Դըբռօցի պակկը հիշկում ըստում, անում՝ հընգեր էսինչյան, էտ դու քօ խէտ էս խօսում: Ուշուչիչը դանը հիշկում ըստում, անում.

- Խա, բիծան ջան, բը ինչ անեն. հազիվ եմ մէ խելօք մանթ գըթե...

Տեղին անուկ խօսկը, թեկուզ խանանքվանրի, հա հիշվում:

Մե անխկատ տընից Սօփօյն ուզընգան ա գալում: Խէրը հա թանում - բըռնում, թանում - բըռնում՝ տա թէ չիտա, վեռչը հարեկան Բախշօյը կանչում, վոր խօռուռթ խառցընա: Բախշօն մըտկում, մըտկում, ասում՝ տու թօ էթա:

- Զընչի՞ հըմա էտենց... - խառցընում խէրը:

Բախշօն անում.

- Սօփօն վիր տուն էթա՝ մեկա պըտի քանդա, անվիրա: Էտ տունը քանդուկ պանդաստ ա: Տու, թօ էթա:

Մանիկօյ անխճըկան ուզընգան ա գալում: Դուզը վոր անսեմ, էտ անխճիկը խօրօտ չըլնում: Խէրն էլ ա գիդում, վոր հազարէն մեկ հիր դուռը բացօղ հէլէ, պըտի անխճիկը տա, պըռծի, թէ չէ կարօղա էլ վըրան քըշօղ չըլնի: Բայց դը խօ մեանքամից չէր անսի՝ տանում են: Մէշու չեմուչում անում, հիրանը կօտոր չըքըցում, վեռչը անում.

- Զէսօր խօսկը չեն տա, գացէք, հէքուց անրէք:

Ասում են՝ հընչի, ինչն ա պանճառը՝ էթանք, նորուց գանք, կօ էկէր ենք, էլի:

Ասում.

- Յա~, հընչի իմ անխճըկա թանդէն ի՞նչ ա, վոր էթաք անսէք՝ խըթ գացինք, խօսկը տըվին: Թանք - թանք վոր վեռցում ես, անխճըկաս հընքները՝ կանլանօվ քաշուկ, թառթըփները՝ հերկէ~ն, կըմանի կօվի թառթափ, մըռթըները՝ բարա~կ սըրիմ, քիթը՝ մէթիքան, փըշատը քե օրինակ, թըշերը՝ կանրմիր խընճոր, չանէն՝ կանրգընօվ գըծուկ, հիրեսը՝ կըլոր, լուսընկի տըսընխինգ, հանգըժներից էլ մե կիլօ վոսկի կանաս կանխես, էլ ի՞նչ ասեմ... Բայց վոր էտ հըմէն գանում ես հիրար, շան անխճիկը դանունում դանցըվոր... Զէ, չէ, գացէք, հէքուց անրէք, հէսօր ձե անխճիկ տըվօղ չըկա:

Աֆտօբուզի տօնս ծանխօղ Վալօղը գախին Քանվանա մէչը շատ ոըշտի յեր: Ըստու անսկերից մեկի տըղէն բանակա գալում - չըգալում՝ խօրն անում՝ ընծի

պըտի կանոն: Է՛, խէրն ի՞նչ անէր. էրկու տանի տըղին չէր տեսե՛ չուզում տըղի խօսկից հըլնի, սիռտը կօղրա: Էն գախ մըկավա նըման էտատե չին ծանայում, վոր խէրն ու մէրը հըմընօր վազնին տըղի կուշտը. Ռուսաստան ին ծանայում, Կանգախըստան ին ծանայում, վո՞րը կանէր՝ էթէր, բանակ տեղ տըղա տէներ: Վե՛ռչը...

Խէրը տըղին աննում, գալում Վալոդի կուշտը, թէ՛ էսենց ու էսենց, տըղին կանոնում են, դու յէլ անընօվ մանթ ես, պըտի գաս էթանք խօսկ աննէլու: Վալօղը տէնում, վոր տըղէն ինչօր մէշու թըռուկ հըլնի, անում.

- Ախպէր ջան, քօ խաթըրը չեն կօյրի, գըքան , - դաննում տըղի յանը , - բայց վոր ընդէ անբախ - զամբախ խօսացէր ես՝ կօստիլըս գիշնեն քան լիտ:

Խօզգին են հօղըրկում, անխճըկա խօր բէրնի գոլը հիմնում են, հըլնում են, էթում են խօսկ աննէլու: Ըստոնցը լավ ընթունում են, դէմըները սեղան են բացում: Դը պանզ ա՛ մանդիքը դընում են, ըստոնք հիրանց տանուկ կօնյակները բացում են, խըմում են, շընախավորում են: Ըսկըսում են կէնած անսել: Ծընօղների կէնածի գախ ես փէսէն ուզում հիրանը նըշանց տա. վոր զօնքաճը բաժակը վէռցում, վոր խօսկ անսա, փէսէն թըռնում հըլնում կանյում, ձեռը պանզում զօնքըճի յանը, բօռում.

- Տիխը, մամաշա , - գիվան Ռուսաստանա նոր ա էկե, ռըսէրէն ա խօսում , - յես քօ բաժակին պըտի յերքեն:

Ձենը քըցում գըլօխը, ըսկըսում յերքել՝ օյ մարօ֊գ, մարօ֊օգ, նէ մարօզ մէնյա...

Ախճըկա խէրը ծանդըր - մանկուլ, խելքը գըլխին մանթ ա հըլնում. վըռագ գըլխի յա հընգընում, վոր էտ տըղէն թըռուկ ա, լը կանքէլու պիտանի չէ: Կընգան ձեն ա տանում, անում.

- Կընիկ, նըշանը բէ, յետ տու, փէսէն վախտին յերքեց...

Փէսէն մէ կօստիլ գըլխին ուտում, մէ էրկու տանի յէլ էլ կանքըվէլու անում չըտանում:

\*

24

Թռը շատ քախճըր բան ա, ումուդ ջան: Արած անգորօղ, անում են՝ անբարանցին անսե՛ վոր գիդի՝ թռը էտքան լավ բան ա, մէն նքամից թռ կուների:



Մեր հարեվան բիձան Զարուքը շատ ա ուրխընում, վոր թռանը նըշանում են, խառսին էլ տուն են բերում, քէֆ – ուրախութուն են անում: Զիրան – հիրան մըտկում . «Լավ էր՝ չըմեռա, էս ուրախութունն էլ տեսա»: Գախ - գախ հիշկում թանգան խառսին ու թռանը՝ խօքին փառավորում: Զարուքի անխճիզն էլ էր էկե, դը խօքուր էր: Էսի ուրախ – ուրախ գալում, փատըտվում խօքը, անում:

- Խէր քան, հըմեն ինչ շատ լավ հէլավ, հըմա էսա ձեր տան հառցը ըսկի չըկանցաք լուծիք: Մեռա անէլով՝ տըղի ըսպալնու դուռը են յանանց բացէք: Զէքուց թանգան խառս ա՝ գըշերով պետկ ա հըլնում, պըտի հըլնի դուս, իմալ ձեր ըսպալնու մըջով էթա - գա: Կանչընա, դուս չըլնի:

Զարուք պան պիկը խընդմընդալով անում:

- Յա~, ձեզի վո՞նն էր անսե՝ գըշերներն էտան դուսընեռս անօղ խառս բերիք:

\*

25

Էտի մըկա յա, վոր խառնըսին փետի յանի ժողովուրթը անփտօնէրով են էթում խառսի հիդեվը: Զառէչ ժամանակ նըվագօղները զուռնեն փըչում ին, խառնըսվորները հընգում ին փետի յու անգաբաշու դենը, խաղալով, տաշի – տուշի անէլով, բանցըր ճըչալով, սինի խախճընէլով, գեղի մըջով էթում ին խառսի հիդեվը, մէ էրկու ժամ խառսի տունը քէֆ, ուրախութուն ին անում, յետօ յէլ հըլնում ին, էսխանտ հուրիշ ճանփով հիրանց խառսին անում ին, նույն ձեվի, հավէլի ուժեղ ճըչալով, տաշի – տուշի անէլով, տանէք, գաթա, խավ խախճընէլով, դանում ին, գալում ին: Զըմընից շատ անգաբաշին էր հալէ հըլնում. էտ ծանդըր թուրը սանղ ճանփին խախճընում էր, խեղն էլ տաշի – տուշի յեր բօռում, մէ ձեռով էլ հա պըտի փետի թեվը հընգուկ հըլնէր: Փետեն էլ հիրանը պըտի ծանդըր - մանկու պանխէր. հըմընի հանչըր խառս ու փետի վըրեն էր հըլնում:

Ուրեն, Կանոյ խառնըսին խասնում են ճանփի կետը, էս անգաբաշին Կանոյն անում՝ թեվըս թուլցավ, մէ էսա թուրը պանխա, մէխատ պանպիլօզ կըպցընեն: Անգաբաշուն սօվըռցըրուկ են հըլնում, վոր էս Կանոյ խօքու խէտ խաղա. Կանոն էլ մէամիտ ա հըլնում: Էս անգաբաշին պանպիլօզը դընում բերնին, Կանոյն էլ անում՝ մէշու տաշի – տուշի բօռա, էրկու մուխ անեն, հէսա խասանք: Էտ Կանոն էլ քիչ – քիչ տընգօզնում, վայթ մըտեն էթում, վոր հինքը փեսան յա, թուրը ֆըռըցընէլ ա վոր ֆըռըցընում ու խախճընում, ձենն էլ քըցում գըլօխը՝ տաշի~ - տուշի~, տաշի~ -

տուշի~ : Էտենց յնքն տեղ էթում են, Կանոյ խորոխպոր սիռտը չըտանում, հիդվանց մօտկընում, մէ խատ թնլում ըտու վըզակօթին, անում.

- So շանվոռթի, էը հիր մըսըրթին չըզըռում. ախար էսի քօ՛ խառնիսն ա...

\*

26

Մըկա հառսանիքներին շաբաշ էլ յեփ են տանում. խառնսի տերը նըվագողների խէտ խօսում, ըտոնց փողը հինքն ա տանում: Բայց հառէ էտենց չէր. խառնըսվորը պանողներին շաբաշ էր տանում. էտ փողն էր էթում նըվագանողներին, մէկէլ խառնըսի տերը կանողա մէ բան հավըլցըներ յա թէ՛ չէ:

Մէ օր Քնվան ուժեղ խառնիս ա հըլնում: Գըրն - գըրն մանթիք են գալուկ հըլնում. դը են գըխվա հարուստն էլ հարուստ էր: Շաբաշ ա, վոր գալում: Փողատերերը հիրար հակառ են հընգում, հիրար յեռթ չեն տանում. փող ա, վոր թափում են: Նըվագանողների քէֆին քէֆ չըխասնի. քըռտընփըչուկ նըվագում են ու նըվագում: Մէ թափօվ, ունէվոր մանթ խըպառտ – խըպառտ մօտկընում պանողներին, ծանօթ - բարեկամ կընանիքին շաբաշ ա տանում, գըլթիկ տըվուկ յետ ա գալում: Հենա պըտի նըստի տեղը, հանշկը անում, պանողների մէչը մէ շատ խօրօտ կընիկ ա տէնում: Ձեռը տանում ջէբը, հիրան – հիրան անում. «Սատանէն անում՝ ըտուն էլ շաբաշ տու»: Մէ էրկու դան էտ բանը վոր անում, թէ ինալ ա հըլնում, հընգում զուռնըչու հանգաճը. հինքը ըտու կողն ա կանյուկ հըլնում: Էս զուռնըչին հիր նըվագը թողում, զուռնէն բէրնէն խանում ու էս մանթին անում.

- Մէգ - մէկ էլ սատանին լըսա...

\*

27

Ախպեր ջան, չըտեսութունը ըսկի լավ բան չէ, դուզն են անում, բայց չըտեսութուն էլ կան, չըտեսութուն էլ: Ասենք՝ վոր մանթ չըտեսուկ բան ա տէնում ու ըտու վըրէն շիվարում, էտի մեղ դընէլու չէ. դը մանթը նո~ր էտենց բան ա տէնում, ի՞նչ անա: Բայց վոր չըտեսուկ մանթը յաբախտի մէ բանի տեր ա դանում, ըտօվ քօրքօշում, հինքը հիր վըրէն զարմանում ու ուզում հուրիշներին զարմացընա՝ այ էտի յա իսկական չըտեսութունը: Ըտե յա անսած՝ չէր տէսե պանտից կանխ, տեսավ

Ճանկտից կանխ: Մանթ կան՝ վոր օրը կուշտ փորով խաց ուտում, հըլնում կանյում ճանփեն, փորը մանժում, գիվան էսենց կերուկ – խըմուկ են, մանթ էլ կան՝ մե պըստի անթօռ են դընում տակը՝ գիդում անխըրքի տերն ա, էլ վոշ մեկը հիր լայեղին չէ, քիթը էնքան ա տընգում՝ յերգընքի կըշերի խետ ա խօսում: Բան, ունուդ ջան, չըտեսութունը էդմալ բան ա...

Մեր քանվան խառնըսի սեղանը միշտական էլ լիքըն ա հելե: Էն նեղի մանթըն էլ խառնըսի սեղանին քիֆտեն, փախլավեն, ծուկը, զակուսկեղենը, ընտիր – ընտիր խըմիշկը անպակաս անրե. անմեք մանթ էլ հաշվի յա անե, վոր հարգ անում, մանթ ա կանչե, ուրեն խառնըսվորին իմալ վոր պետկըն ա՝ պըտի պանդասխան տա, հարգանքով, պանդով ճանփու դընա: Մեր քանվան անդան խենց ա...

Մե երկու տանրի հառչ քանզան հարըստներից մեկի տունը խառնիս ա հըլնում: Խառն ու փետեն սեղանի վիրի գըլօխը նըստուկ են (անսված թօ հիրանցը բանի բախտ տան), խառնըսվորն էլ ուտում են, խըմում են, ուրխընում են. սեղանին հըմեն ինչ ծով ա, ծըփում. բանի պակասութունը ըսկի չըկա, էն յանանց էլ հա բերում են, լըցում են ու լըցում են: Խընամիքի մեչը մե բիծան յա հըլնում: Ըտու հանշկը մընում հիր դեմը դըրուկ սեվ իկեայը. դուզն անսած՝ էտենց բան տեսուկ չըլնում, հիրան – հիրան մըտկում՝ տենաս էտի՞ ինչ ա: Վեռչը անսում՝ պըտի էտ էլ փօռցեն: Քաշում դեմը, մե գըթալ ուտում, դուրը շատ ա գալում: Մե գըթալ էլ ա ուտում ու մըտկի մեչն անսում՝ յարաք անխշարքն էսենց բան էլ ա հելե՝ չենք գիցե: Պանդաստվում մե գըթալ էլ ուտա՝ մեկել էտ տան յանի ժողովըռքից մե կընիկ անսում.

- Պանպե ջան, յերեվի դուրըտ էկա՞վ իկեմ. էտի լավ բան ա՞՝ լավ էլ թանգ ա. գիդում են՝ ըտու կիլօն խարիր մանեթ ա...

Բիծեն մե գըթալ էլ ուտում, անսում.

- Խառն, քուր ջան, իսկականից խամով բան ա. խարիր մանեթն ի՞նչ ա, էսի խանգան էլ անթի...

Էտ կընիկը քիթը քըշտում, հուսերը քանլում, բիծեն էլ տանլերկի իկեմ հավեսով գըռըթում:

Մըկա դու ընծի անսա՞ ըտոնցից վորն էր չըտեսը...

\*

28

Չըմեն տեղ էլ մանթ պըտի հիրանն էսենց դըռտվօրա, վոր խըլղի դուրն էլ գա: Չեն անսում՝ վոշ մե բանի մանսակից չըլնի, բայց ինչ անում՝ պըտի խամ ու

խոսով անա: Ասենք՝ յերթել չե՞ս գիդում, անխաբի ջան, մի հրնգի օյին, ջուղն ան ձեռքտ, հուրիշին էլ խանգարա. թո՛ղ, թօ էտի հուրիշն անա, վորը վոր կանա: Բ՛ան չըկա, դու յէլ հէլի պանա, անա էն, ինչ վոր կանում ես, ինչ վոր քեզի սանգական ա:

Սէ տանրի էս Դեղօյ Անային էթում Մուխան խամնիս: Խամնըսվորին վոր անթէն սեղանի բ՛օլորն են նըստըցընում, Անայու կողը էրկու կըննից թօփալ, կօլօտ մէ մանթ ա նըստում: Ըտու կողն էլ հիր կըննիգն ա հըլնում, լավ էլ խօրօտ, տեղը տեղին, բօյօվ - բուսով անբրանք ա հըլնում: Նըվագը վոր փըչում են, ժողօվումն ըսկըսում են պանրել: Գ՛ալում են, էս կընգան էլ են խանում պանրելու: Էսի լա՛վ էլ ծըռպըտօտ ա տանլում, հընգում մէյդան ու էն գօվընդն ա բ՛ընում՝ քե ինչ պիտի. ձե՛վէրով, սիքանբանրի յէլ կըննիկ ա հըլնում, քե անսեն: Մանթի դ՛ուրը կընգա պանրը շատ ա գ՛ալում. հիշկում, հիշկում, մէկէլ հավէսը քաշում. հըլնում կանում, ձըկտըվում, վոր էթա, կընգա խէտ պանա: Էս Անային ըտու թե՛վից քաշում, անսում.

- Քա վայ, անխաբի ջան, նըստի տեղըտ, նըստի: Ծանդըր տեղըտ իզուր մի թեթըվցըրա. նըստուկ տեղ գիդում են՝ կանրքին մանթ ես...

\*

29

Ունուդ ջան, նանխնյաց էլ անխճիկ փախծընելը հէլէ: Չէ, յես էտի չեն անթարացընում, չեն անսում, թէ էտի լավ են անում, բ՛այց պանդայում՝ հուրիշ ճանր չըլնում: Լը տե. էտա մեր Պանային ու Թէրէզը հիրար ուզում ին, բ՛այց Թէրէզի մէրը կանիլ չէր, վոր ըտոնք հիրար աննին, անսում էր՝ յես իմ անխճըկան կըտամ իմ իջէվանցում, հընչի՞ տամ քան վանցում. տանրին մէ դան տէնամ թէ չէ: Գիշտ ա, մօրն էլ մեղդըրում չըկա, բ՛այց վոր ջանլէներն հիրար ին ուզո՞ւմ... Ըտու խըմար էլ Պանայինը Թէրէզին փախծըրեց, բը ի՞նչ անէր... Սէկէլ բ՛անի նըման չէ, վոր անխճըկա միտկը հուրիշ տըղի յան ա հըլնում, բ՛այց անխճըկա խէրը հուրիշի յա խօսկը տանլում: Էտենց գ՛ախ անխճիկը չըփախնի, բը ի՞նչ անա: Էնա լավ տըղէն՝ Լօվան, վոր հիր սիրածին փախծըրեց, վո՞րը ընդուն կանէր վատ անսէր. սանղ էլ գիդում ին, վոր էտ էրէխէքը մանգապանտեզից հիրար խէտ շատ սէր ին, բը անխճըկա խէրը հընչէ՞ր անխճըկան հուրիշի խէտ նըշանե: Հուրիշ բ՛ան, վոր անխճիկը տըղին չուզում, բ՛այց տըղէն փախծընում. էտի լավ բ՛ան չէ... Տըղէն պըտի ձըկտա՝ անխճըկա միտկը փօխա հիր յանը, հուրիշ ձե՛վ պէտկ չէ... Սէ խօսկօվ, տըղէն ու

անխճիկը վոր հիրար ուզում են, թո հիրար խասնեն, բանխտան վոր հըլնեն: Բը ի՞նչ ասեն, բալա ջան...

Իմ անխաբեր Լիպարտի անխճըկան՝ Ռիտայը, Ալու Վըլադի տըղա Իշխանը փախճըրեց: Վոր անսեմ՝ ըտոնց հիրար աննելուն վոշ մե բան չէր խանգարում, բայց վոր Պանպինը Թերեզին փախճըրեր էր, յերեվի Իշխանն էլ հընգեր էր հավեսի, վոր հընգերից յետ չընըներ: Վեռչը... Դը Լիպարտը, գիդում ես՝ ինչքան խիստ մանթ էր, Ռիտան էլ էնենց բայեվոյ անխճիկ էր, վոր վոնչ կանյիլ գըլներ փախնելու, վոնչ էլ ընդուն կանին փախճընին: Դը Իշխանն էլ խափելով ա Ռիտայը փախճընում. Պանպինին ու Լեվոյը (մեկը Ռիտայ խորքուրի տըղեն ա, մեկը՝ խորոխաթոր, հիրա յէլ հընգերներն են) խետը տանում, Ռիտան էլ չըկանկածում՝ ինչն ինչոց ա... Էտենց տըղեն հիրա գոռճը գըլոխ ա բերում: Վոր անթեն պանկըվցըրուկ տեղից Իշխանը Ռիտայը բերում հիրանց տուն, Լիպարտը քըվորըս՝ Նունիկի խետ էթում են ըտոնց տունը, վոր տենան՝ Ռիտան ինչ ասում...

Դը անխաբերըս ճանաչված մանթ էր. կըռվից վոր էկավ՝ էտ գանխվընե մինչեվ հիր կյանքի վեռչը կուլտուրայ տունը անխաստեց: Էնենց թադրոն էր կանգնակերպում՝ էթում ինք, ջոչ – ջոչ խներով հըլնում ինք բեն, ի՞մալ չինք անչընում... դոր անսեմ՝ չենք գացե, թադրոն խախճե... Խա, ժողովուրթը էթում ին, կուլտուրայ տունը թեռթ ին կանթում, շանխմատ ին խաղում, անխաբերս միջօցառումներ էր կանգնակերպում... Մեկը կանե՞ր բանցըր խօսեր, գըլխարկը գըլխին նըստեր յա թե չե պանպիլօզ քաշեր. էտ էր մանցե պանկաս... Ախաբերս շատ դիսցիպլինով էր, համ էլ շատ ճըշտապան յեր: Գեղը անրեր ին անսելիք, անսում ին՝ գեղի մեչը կանյուզները անխաթորս կուլտուրայ տունը բացել - փագելով հիրանց ժամացույցները դըզում ին...

Վոր քուրս ու անխաբերս խասնում են Ալու Վըլադի դոռը, Պանպինը խորանանկ ա՝ փախնում պանկըվում, բայց էս Լեվոն պանդում կանյում: Քուրս խասնում ու ըտուն մե խատ չափալաղում, անսում՝ անգի՛ դավաճան (էտ օրվընե խեխճ տըղին էտենց էլ անսում են): Լեվոն քեփըլտում, քիչ ա մընում՝ հընգի: Վըլադի կընիկը՝ Յարգենիկն ա հըլնում դեմըները, քուրս յեռի – յեռի գանլում, թե՛ ձեր տըղեն ինչ ռիսկ անրե՛ մեր անխճըկան փախճըրե: Յարգենիկը խառվում հիրար, անսում.

- Վո՞րը~, վի՞րը~, մերը~, ձերը~, դո՞ր ա~...

Նեռսը անթեն ուտում – խընում ին: Վոր լըսում են՝ Լիպարտն էկավ, բաժակները դընում են սեղանին, բանդ են հըլնում: Լիպարտն ու Նունիկը իմալ վոր մըղնում են նեռս, Իշխանի հընգերներից մեզն անսում.

- Գ՛րլխարկները հանել, պա՛ս պիլօզները հանքցընել, ցածըր խօսել...

Ըտե անխաօրըս ծըճաղը գալուն, սիռտը փափկուն: Վոր Ռիտայ խետ էլ խօսուն են, տենուն են՝ մըտկին կա՛, հաշտ – համերաշխ թողուն են, գալուն են: Չէ, լը էտ գախ հիրանք բաժակ չեն վերցուն, ըտու գախը յետօ յեր...

\*

30

Դը լըսա՛ մըկա յէլ էտա մեր լավ խառս թերեզի փախծընելու պա՛ս դմութունը յես քե անեն: Թերեզն ու Ռիտան հիրար խետ ին ուսանօղ, Պա՛սպինն ու Սիտյան էլ՝ Ռիտայ անխափը՝ հիրար խետ: Չոռսըն էլ հանըրակա՛ցարան ին մընուն: Ըտե յէլ Պա՛սպինը թերեզին տենուն, ծըռուն վըրեն: Բայց թերեզը Պա՛սպինին խօսկ չըտանլուն, գիդուն, վոր հիր խերն ու մերը կանյիլ չեն հըլնի: Նանդի Պա՛սպինը ըզգուն, վոր էտ անխճիկը հիրանը համակըրուն, ու մըտկին դընուն, վոր փախծընա: Էթուն հիր հընգեր Իշխանի խետ խօռտակցուն: Իշխանն անսուն՝ Սիտյան կըխանգարա, էնի թերեզին հիր քըվոր նըման հարգուն ա: Ինչ անեն, ինչ չանեն, անսուն են՝ էթանք Սիտյայ յանը: Իշխանը մըղնուն խանութ, բան ու ման ա անունուն, գալուն են Սիտյայ կուշտը: Ասուն են՝ էսենց ու էսենց, թերեզին պըտի փախծընենք: Սիտյան էնենց ա յեռսօտուն՝ Պա՛սպինը հու՛շիկ նըստուկ տեղից հըլնուն, պա՛ս դրաստվուն, վոր փախնի: Իշխանը թեվից քաշուն նըստըցընուն, սեղանի տըրկից մէ շիշ անրաղ խանուն դընուն սեղանին, անսուն՝ լավ, բերեք մէ բաժակ անրաղ խընենք: Սէ - մէ բաժակ խընուն են, մէշու զակուսկի յեն անուն, Իշխանը մէ բաժակ էլ ա լըցուն... Սիտյան անսուն՝ ախար ծեր անսուկը ըսկի բանի նըման չէ, է... Էրկու բաժակ յետօ յէլ անսուն.

- Լավ, տանրեք, բայց վոր հանկառճ չուզեց մընա, պըտի շուտ յետ բերեք:

Ասուն են՝ լավ, ու էթուն են... Թերեզին վոր փախծընուն են, բերուն են գեղ, խաբարը վըռազ խասնուն Իջեվան, ընդեղից գալուն են հիրանց անխճըկա հավարը: Չուն ըտոնք կըխասնին, ըստեղի ժողօվուռթը թերեզին համայրա անդըլցընուն են: Բայց վոր իջեվանցիք տեղ են խասնուն, վիճակը բառթանուն: Պա՛սպինը հիրար խառվուկ հըլնուն դուս, Իշխանին անսուն.

- Գան, թերեզի մօրքուրն ա խանը խանուն, ըսկի կապի չըգալուն:

Իշխանը մէշու մըտկուն, անսուն.

- Մօրքո՛ւր... ըտոնք մօրքո՛ւր չըտեսած. կանյի մօրքուր Նունիկին բերեն, թօ տենան՝ մօրքուրն իմալ ա հըլնուն:

Ասում ու անփոսն քըշում, էթում: Մէշու յետո Պանպինի մօրքուրին՝ իմ քուր Նունիկին, անճում գալում: Վայ քուր ջան, մըղնում նեռս, թէ ինչ ասում, ինչ չասում՝ չեն գիղում, բայց իրեք րօպէ յետո իջեվանցիք փօր ու փօշման հըլնում են, թօղում են ու էթում են: Էտ էլ էտենց, բալա ջան...

\*

31

Սանօն էթում գեղի մէջ, տէնում ժողովուրթ ա հավքըվե, մօտկընում՝ տէնա՝ ի՞նչ ա հէլե: Ասում են՝ Սէրօթի անխճըկան ա փախճըրած: Սանօն զարմացուկ խառցընում.

- Յընչա՞ փախճըրած:

Ասում են.

- Դու քօ կընգան հընչի՞ փախճըրի:

Ասում.

- Յա~ ա~ ա~...

\*

32

Յառէջ ժամանակ անխճիկը վոր էթում էր մանթի, պըտի խամավոր խառս հըլներ. կիսուր, կէրսարի, տէքըրտանքի խէտ պըտի չըխօսէր, մէ տըղամանթ գէր տունը՝ պըտի հըլներ կաններ, պանդավոր մանթ գէր՝ պըտի էթէր ճեռը պանթեր, ըտու ջուր խըմեւը, ճըղգաւը պըտի մանթ չըտէներ, վեռչը...

Մէ չարքաշ մանթ տըղին կանքում, հիրանից հարուստ մէ մանթի անխճիկ ա ուզում: Դը անխճիկը գէշ ա հըլնում, ըտու խըմար էլ խէրը տանում էտ անխկատ տըղին: Բայց դը տըղի սըռտօվ ըսկի չըլնում էտ անխճիկը. էն ա վոր՝ խօր խօսկից տըղէն չըկանում հըլնի, էտ անխճըկան անճում: Խառնիս են անում, մանդարա - զուռնօվ էտ անխճըկան բէրում են փէսի տունը: Յըմա հառչի օրն էլ խառս ու փէսին քընցընում են հիրար կուշտ: Յառավոտ շուտ էս խառսը մանթին բըզում, անսում՝ դը մըկա անսա՝ յես վի՞ր խէտ պըտի չըխօսամ, վի՞ր խէտ պըտի խառսնութուն անեն... Էս տըղէն վոր չըֆըռում ու էտքան մօտիկից հիր գէշ կընգան լուսօվ տէնում՝ գըզգըզնուկ ծանէրօվ, մէ յանքան քըթօվ, սեվ տըռճէ, լեղին ջուր ա կըղրում: Պանրկուկ տեղից թըմնում նըստում, անսում.

- Վիր խէտ կըխօսաս, չես խօսա՞ քօ բանն ա, բայց իմ խէտ չըխօսաս, իմ յանն էլ չիշկաս ...

Հառեչ էտենց բ'ան յե՞փ էր հըլնում. մըկա վոր մէկը մէշու ջ'օջընում, մէկէլ տէնում ես՝ գէյնը կուրցըրեց: Չըմդէ՝ անոտասանյմանի կերե՞րը հէլան պանճա~ն: էտա մեր Սօփօյ ճիսուրը<sup>11</sup> ընդան յէլ ջոշ չէ, ջինո՞ւմ ես, բ'այց խեխճի հան շճերի դ'էմը հա բ'ան ու ման ա էրէվում: Վոր անսեմ՝ գէյնը լըռիվ չըկուրցըրե, բ'այց մէգ - մէկ հիրանը չըխասկընում:

Ուրեմ, էս պանովի թոռանը կանրքում են, մէ խօրօտ, նըխշուն խառս են բ'էրում: Պանապն էտ խառսի վըրէն շանտ ա ուրխընում, անսում՝ սանղ օրը կըշտիցըս էն յան մի գ'ընա, քե բ'երած իմ խըմար: Հառչի օրերը խառսին հա նըստըցընում են պանովի կուշտը, անսում են՝ թօ հավէտը խանա, բ'այց մէ~կ - էրկու՝ խառսը ըսկըսում պանովի կուշտը նըստէլուց փախս հըլնել: Ջինո՞ւմ ես՝ հընչի. էս պանապը, մէկէլ տէնում ես, մէ մեռնի խէտ կըսան յա անում. էս խեխճ խառսի լեղին ըտենց գ'ախ ջ'ուր ա կըդրում:

Սէ գ'իշեր էլ տունը սանղ քընուկ էն հըլնում, միյնանկ էս թանգան խառսն ու փէտէն են գառթուն հըլնում: Մէկէլ պանապը ձ'էնը քըցում գ'ըլօխը, է~ն բօռալն ա բօռում, է~ն բօռալն ա բօռում, վայթէ չում հարէվնի տուն ձ'էնը խասնում: էս թոռն ու հիր կընիկը հընգնավորում են, ջըլէրից թըռնում են - հըլնում են, մէ շոր թանլում են վըրըները, վազնում են պանովի կուշտը, վոր տէնան՝ ի՞նչ ա հէլե: Պանապը թոռանն անսում.

- Քա բալա՛ ջան, չե՞ս տէնում՝ իշվանքը սանղ լըսված տունը, դ'ուռ ու յեռթիս վեր են բ'էրում:

Վոր տէնում են՝ պանովին չեն կանում համօգեն, վոր տունը էշ չըկա, թոռը վազնում, դ'ըռները բ'ացում, ըսկըսում բօռալ.

- Չօ՛շ, չօ՛շ, յես ձ'եր էտենց - էնենցը, չօ՛շ, չօ՛շ ...

Գիվան վոտով էլ գանում, դ'ուս ա խանում: Պանապն էն յանանց ձ'էն ա տանլում.

- Բալա՛ ջան, խօ չե՞ս ծըռե, էտ ի՞նչ ես անում, հան շճերիտ բ'ան ու մա՞ն ա էրէվում, քօռնան յես...

Քա, բալա՛ ջան, մըկա անխճիկը խասնում, հիրանը խասկընում, նոր էթում մանթի, խօ հառչըվա նըման չէ՞: Յետ էթեր, հառեչ չիգեր, էնի բ'ան էր. անխճըկան

<sup>11</sup> **Գ, Կ, ք** - ի դիմաց **ջ, ճ, չ** բաղաձայններ հանդես են գալիս Նորատուսի խոսվածքում՝ որոշակի դիրքերում:



բ՛րնուն ին պըստի – պըստի տան լում ին մանթի: Շատ գախ լը մէ մատ ճիժ, ուշկ ու միտկը լը տիկին յա պանխկըվոցի խաղալը, անխճկան տանում ին կերսանց տուն, քանի տանրի յետո նանժիմի տանկ ընդե նոր ջօջընում էր, դանուն էր տան կընիկ: Էն վոր անում են՝ լը գըթէլը հանգաժն էր տանում, բըննին տըվին մանթի, օղոռք վոր էտենց էր:

Խա, էսա մեր հարէվան Խամբօյ տունը մէ էտենց պըստի անխճիկ են խառս բէրում: Էտի շատ ռիսկօվ, չար ու կըրակ, կըզօղլան անխճիկ ա հըլնում. ըսկի տեղը չըսըթրում, հա հիրանը թանում էս յան, էն յան, հըմէն ինչի մէջ քիթը խօթում, հըմէն ինչի ձեռ ա տանում. կիսուրն էլ վըրէն չըկանում, զանլէն փախնում ըտու վըրէն խօսալօվ: Սէ օր էլ էս խառսը հարմըրցընում խէզնում հիրանց իշին: Թէ իմալ հըլնում՝ էշը խըռտընում, գըլօխը տընգում ու հայդա՝ խըրում գեղի մէջը: Պատի տանկը քարերի վըրէն նըստուկ բիժէքը վոր էտի տէնում են, խըլուշ – խըլուշ են հըլնում: Էս խառսի կերսարն էլ ա ըտե հըլնում, դանուն հիր կողի նըստուկին անում.

- Գարէ՛, էտի մեր էշը չէ՞...

Գարէն էս Խամբօյը թանս ա հիշկում, յեռի – յեռի անում.

- Էշն էլ ա ձերը, վըրվի խառսըն էլ ...

\*

35

Քա լաո~, մըկա վոնչ նանուս կան, վոնչ պատիվ կան, վոնչ էլ անօթ բան կան: Սո՛ւս, սո՛ւս, մըկավա կընանիթը գըլխընները բանցում են, ծանըները կըդրում են, տըղանանթիթի խէտ սեղան են նըստում, խաց են ուտում, անում են, խօսում են, ծըղզում են... Յետո յէլ անում են՝ մեր մանթերը մէ չեն ուզում: Էտի հէլավ բան: Բը մեր գախ էտենց էր: Է~է~ է... Մենք կանի՞նք մէ տըղանանթի խէտ լիզու թըռչինք, թէկուզ էտի անխալէր հըլներ յա տէքըր, կիսուրըս էնենց բըթնօլոր տէր, վոր... Յես իմ տըղի դէմն էլ, յանքան կընիկ են, անչընում են՝ գըլօխըս բանամ...

Մեր վախտ անօթ կէր, անբուռ կէր: Քանի անանըվա կընիկ ի՞ մանթիս հիրեսը կանրքին չի տէսե: Դը հառավոտ լուսուն տան տըղանանթիթը հըլնում ին, էթում ին դանշտ, խառսներօվ էլ տան գոռօն ինք անում. հըմընօր թունդիրը վառում ինք, խաց ու խըմօր ինք անում, հախպըրից քանի վոտկ կըժէրօվ ջուր ինք բէրում, տան վար - մանլն ինք անում, կու յինք թափում, խացատան սըներն ինք սըրփում... Գո՞ռօ չըկէր անէլու: Էն ջոչ խառսները հիրանց ճըժէրին ին շըթաֆում... Հառէչ

շատ ինք չարչրվում, շատ, բայց ինչ անեմ՝ կյանքը ուրախ էր, մրկավա նրման չէր:

Խա, հիրկուն մութը տակում էր գետին՝ նոր մեր մառթերը գալում ին: Կսուրըս ըսկի կըթողէ՞ր՝ հիշկինք ըտոնց հիրեսը: Ձաթի ամեքի գըլխին մէ փափախ կէր՝ հիշնում էր չուն հաշկերը, փըռչի մէջ էլ կուրուկ ին, հիրսըները չէր էրէվում: Գըլխըներըս կախ՝ ջուր ինք լըցում, ըտոնք լըվասվում ին, անձէն - անձու քուռուս վըրէն խաց ինք դընում, հիրանք կախվում ին թունդիրը, ըսկըսում ին հիրանց սըբասը գըթլել, մենք էլ էթում ինք մէ յանի վըրա կուճուռում ինք, մինչեվ լամփէն փըչում ին, ամեքիս մառթը գալում էր մըղնում էր հիր կընգա ծոցը, քընում ինք: Մութ անխշարք էր:

Քա բալա ջան, մէ օր էլ յես խայտառակ հէլա: Ասա՝ ի՞մալ... Կսուրըս մէ բօխճա կապեց, տըվեց ընծի, թէ՛ մառթիտ խաց տար, էնի Բանդի ձորը քաղ անում: Բօխճէն գանի հունթըս, կսուրիս նըշանց չըտըվի, վոր ուրխըցա, գըլօխըս կախ՝ ճանփա հընգա: Գացի, գացի, լը Բանդի ձոր չի խասե, մէկէլ տէնամ՝ էն յանից մէ մառթ թափ - թափ գալում ին յանը: Քելքըս շուշուտցըրի, էնի յէլ շուշուտցըրեց: Վախից թուքըս չօրցավ, չօքերըս թուլցան, մրկա ուզում եմ մառթիս ձէն տամ՝ համ անունն ա մըտէս գացէ, համ էլ ձէնըս փորիցըս դուս չըգալում, լիզուս կըպե: Քէփըռտալօվ գիվա՞ ըսկըսի վագնել, էտ մառթը խասավ, թեվիցըս բըռնեց:

- So կընի՛կ , - վըրէս յեռսօտավ , - խօ գիժ չէ՞ս, հընչէ՞ս մառթիցըտ փախնում: Լավ ա՝ թեվիտ տըկի նըխշըռտուն դաստըղունը տէսա, գըլխի հընգա, վոր դու գըլնես, թէ չէ գըլօխըտ պըտի տընգիր ու էթիր, խասնիր սարը...

Բա~, ունո՛ւղ ջան, այտենց յես ու մառթըս քանի անսըվա գըլօխ նոր հիրար տես ու ծանօթ դառցանք... Խամն ըտու մէջն էր ...

\*

36

Մեր հարէվան Լիպօյ Մակիտոնը բօյօվ - բուսօվ, շիշմատ տըղա յա: Էսի վոր Յերէվան սօրվում էր, մէ խօրօտ - նըխշուն անխճիկ ծըռում ըստու վըրէն: Քանի վոր հիրար շատ ին սիրում, էս Լիպօն հըլնում էթում, իմալ վոր կարքըն ա՝ էտ անխճըկան ուզում, բէրում հիրանը խառս: Էս խառսը շատ շընոխկօվ, ձէռի ջըրքօվ, անօղ - դըրօղ անխճիկ դուս էկավ: Կսուրը սանղ օր ըստե - ընդէ խըպառտնում՝ իմ խառսն էսենց, իմ խառսն էնենց: Խա, խըպառտնալու տեղ ունի: Բան վոր չէ՝ ըտու թըխվասկ թըխելը հէլէ անսէլիք. գեղն անում եմ՝ Լիպօյ տունը մէ

յաշիկ կարաքն ու մէ մէջօք պիսօքը տըսնըխինգ օր դէն չըտանլում: Համ էլ իսկականից էտ խառսը օրական քանի տեսակ թըխվասկ ա թըխում, համ հիր հընդանիքին ա բ'ավարարում, համ էլ բ'աժնում հարեվներին: Մենք հըլնինք՝ կ'ս'սինք՝ տընաքանդութուն ա, բ'այց ըտու կ'իսուր – կ'երսարի դ'ուրը հ'ս'լք'ս'թ գ'ալում, վոր ձ'են չեն անում:

Էս խառսը թ'ս'գ'ս' գ'ալուկ հըլնում, կ'իսուրից ձ'ու յա ուզում, վոր թըխվասկ անա: Կ'իսուրն անում՝ գ'ընա թալվից բ'ե. խավերն էթում են, մըսուրքն են անում: Խառսը շըփշըփալէն էթում մըղնում թալվէն, տէնում կ'օվը մըսըրքի դ'ենը մըստուկ ա: Ծըզըվըզում, տէնում մըսըրքի մէջը խինգը խատ ձ'ու կ'ա: Ձ'եռը պ'անզում, ձ'ըվերին չըխասնում: Ուզում կ'օվին շենքա, հընցընի, վոր ձ'ըվերը վերցա: Թ'ս'նսի մըման կ'օվը էտ գ'ախ հըլնում կ'անում, խառսը մընում կ'օվի վըրէն: Կ'իսուրը տէնում՝ խառսը հանքըցավ, անում՝ կ'ս'րիք անճիկ ա, էթամ տէնամ՝ ի'նչ հէլավ: Մըղնում թալվէն, տէնում խառսը խէձե կ'օվին: Հիրսին խաչ ա խանում, անում:

- Հի'սսոս քեզի Քըրիստոս: Մեղա յեն քե տեր, Կըշըղա տերդեր. բալա ջան, էտ հընչե'ս հէլե խէձե կ'օվին:

Գ'ալում խառսին հիջըցընում, էս խառսն էլ ծըղզո~ւմ, ուշկը էթում, չըկ'անում կ'իսուրին բ'ան խասկըցընա: Հիրկըվանը մէրը տըղին քաշում կըրաղ, անում:

- Բալա՛ ջան, էտա քօ չըտես քախկըցի կընգան անսա՝ թօ չէթա խեզնի կ'օվին: Կ'օվին չեն խեզնում. կ'ս'թե կըկըղրի: Շ'անտ ա ուզում՝ թօ իշին խեզնի:

\*

37

Բալես, անում՝ անոտասանյան վոր տըղէն կ'արքըվում, հիր կընգան անում, էթում, խօրն ու մօրից ջ'օկ ա անբում: Էնքան ա գարքացած, վոր հիրանցը չեն ուզում նեղութուն տան, հիրար վըր'ս դ'առնան: Միյն'ս'կ հիրանց մ'ս'սին են մըտածում. խէրն ու մէ'րը վորն ե~ն, խառսն ու տըղէ'ն վորն ե~ն, թռը վորն ա~: Հընչի վոր հիրար խէտ անբեն, հիրար կուտե'ն: Օ~օ~ֆ, հիրանք գիղան, բալա ջան, անված յեդ ու յեռուն անա: Լը տես էտա թռը'ս, մ'ատաղն հըլնեն, օրը խազար պ'ս'ք են անում հիրսից: Վոր խառսը տանում խօր տունը, հ'ս'շկըս մընում ճ'անփին, չում դ'առնում են, գ'ալում են: Ի'նչ անեն, կ'արօղնում են: Վոր չըվագնում գ'ալում, անում՝ տ'անիկ, հէլի գ'աթա թըխա, սիռտըս փառավորում, անում են՝ իմ անբելն անժի, ճըժերիս լը պէտկ են: Խառսիցըս էլ, տըղիցըս էլ յես շ'անտ գ'օյ են, բ'այց յես էլ հիրանց գ'ոռձերին չեն խառվում՝ գիցի: Վոր անխամութուն անեն, կ'արօղա յօլա չէթանք, բը ի'մալ էս անում: Մէկէլ մէ բ'ան անսեն. խառսը վոր էկավ կ'երսանց տուն, պըտի էտ տան դ'ըրվասկը հաշվի աննի, խըթ գ'ալը չասա՝ իմ խօր տունը էտենց չէր, էտենց էր: Քօ խօր տանը թօ մընա քօ

խօր տունը, բալա ջան, մենք մեր ձե՛վով ենք ուզում ա՛ բրենք: Խա~, հիրար խէտ վոր կըմէրվենք, հիրար կըխասկընանք, թէ կանաս՝ դ՛ու հավէլի լավ ձե՛վով ա՛ բրի, վո՞րը քե վատ կանաս... Խասկըցօղ խառսը լիզվանի չըլնի, թէ վոր լիզուն կանճ ա՛րավ՝ հըմէն հիրանը կըսիրեն, բ՛այց վոր հըմէն տեղ հիրանը հառէչ քըցեց, մէկ ա՛սին՝ երկու պանդասխանեց, հա՛շկէ գ՛ըլնի: Վոր հընդանիքով սեր ու բանիշ հըլնեն, ջան ա՛սեն, ջան լըսան, վա՞տ գ՛ըլնի: Դ՛ըժվար ա, չեն ա՛սում, բ՛այց վոր ջանիտ ջա՛ֆա չիտաս, բ՛անի յէլ չես խասնի, կէթաս, ջ՛օկ կանբես: Մանթի հարըստութունը հիր տան ա՛նթամն ա, հիր ա՛սկ ու տակն ա, հիր բ՛արեկամն ա: Ուզում ես՝ միլոնի տեր հէլի, բ՛այց վոր ա՛սկ ու բ՛արեկամ չունէցար, դ՛ուռըտ օրերով բ՛ացօղ չէլավ, ըսկի մէ քօռ կօպէկ էլ չա՛ժի:

Ասուկըս են ա, վոր խառս ու կիսուր պըտի հիրար խէտ յօլա էթան, վոր տունը խախանդութուն հըլնի, հիրանց տան տըղամանթի ներվերն էլ հանգիստ հըլնի: Խառսը թօ վըռազ չըվազնի խօր տունը խաբարբըզիկութուն ա՛նա, կիսուրն էլ թօ բ՛ամփասանք չանա. վոր բ՛ամփասեց, խըլղը հիրանց լավը կըբ՛երեն կըտան հիրա՞նը:

Էտա մեր մայլի Սիրունն ու Յըռօզը երկուսն էլ թա՛զա խառսի տեր են հըլնում: Դը հառչի վախտերը երկուսն էլ հիրանց խառսներին է՛ն գ՛օվասանքն են տակում, է՛ն գ՛օվասանքն են տակում. մէկը մէկին ուզում պանդըցընա: Բ՛այց երկուսն էլ խառսի խէտ յօլա էթացօղ չին: Մէ՛եկ - երկու, երկուսն էլ պըտի մէ օր վըռթըկին, բ՛այց հիրանցը չին ուզում կօտոր քըցին: Մէկ օր ես Սիրունն ա՛սում.

- Իմ տըղէն բօ՞յ չունի~ի, դե՞մք չունի~, դի՞րք չունի~: Վի՞ր դ՛ուռը տըփի՝ ընդուն ա՛խճիկ չին տի: Խազարի հա՛շկ մընաց տըղիս հիդվից... Յեսիմ... Իմ խառսը... Իմ խառսը խազարան խելքի տեր ա: Իմ խօսկից ըսկի չըլնում: Յերէկ ա՛սի՝ բալա ջան, էտա վըրվիտ թանգանոց շորը ետ ի՞մալ նեղ ա, կըպե ջանիտ, հըմէն ինչըտ երէվում, էտենց մանթիտ դէմը ի՞մալ ես ֆըռֆըռում: Խըթխտուն վըրվից խանեց, մըգրըդօվ կըտըռտեց, բըզիկ - բըզիկ ա՛րավ, թա՛լեց պօլին, վոդնէրօվ ըսկըսեց կօղըռճել... Սա՛ղ օրն էլ ա՛մօթու վոնչ իմ յանը հիշկաց, վոնչ խէտըս լիզու թըռչեց...

- Քա կընիկ, բը իմ տըղի՞ թա՛նդէն ինչ էր,- գըլօխը տակում - բ՛երուն Յըռօզը ,- Իմ խառսի ձեռներից նուռ ու դ՛ուռ ա թափում, էնենց ճա՛շ ա էփում... Յերէկ շա՛տ խամօվ ճա՛շ էր էփե, մանդներըտ խէտը կուտիր (մանթը երկու սուլքիկ գըթլեց): Բ՛այց մըտէն գ՛ացեր էր, ա՛ղ չէր թա՛լե, մէ տեսակ դ՛ուրըս չէկավ: Ասի՝ ա՛խճի ջան, ես ճա՛շը ես ի՞մալ ա՛լնի յա, վայթե մըտէտ էլի գ՛ացե, ա՛ղ չես թա՛լե: Էկավ, ճա՛շը

դ՛եմիցըս վերցեց, տան րավ տան լերկով շըպըռտեց գիբիլի վերոսն, ան սավ՝ ման քան,  
դ՛ուրըտ չըգ՛ալում՝ մի՛ կե... Էնքան էր ան գըղվե, էլ իմ երեվանը սան ր օրը չէկավ...

Ըստե յեն ան սում՝ վոնչ խերն ընդուն, վոնչ բան ան քեն մեկելին...

\*

38

Քախկըցին հիր չափավոր անանթ, գ՛եղացին՝ հիր, ու թօ քախկըցին հիրան  
– հիրան չըքօրքօշնա - թըռնի, թե հինքը քաղաք տեղ ան բրում՝ ուրեմ հինքը  
գ՛եղացուց շան տ բան ան խասկընում, վոնչ էլ թօ գ՛եղացին քախկըցում ձ՛եռ ան ռնի,  
թե դ՛առտակ կօֆէյօվ են ման ռթ ճան փուս դ՛ընում: Գ՛եղը գ՛եղ ան, քաղաքը՝ քաղաք.  
ման ռթըս ման ռթ հըլնի: Ու բան ան՝ թե վոր գ՛եղացին էկավ քաղաք, յա թե չէ՝  
քախկըցին գ՛ընաց գ՛եղ՝ վոնչ մեկ վոնչ երկու պըտի չասան՝ ըստե էսինչ բանը լավ չէ,  
պըտի իմ ան սուկօվ հըլնի: Դոր էլ հըլնի՝ ման ռթ պըտի մերվի շըռջապան տին, ըտեղի  
սօվօրուտկը վեռցա, նոր թե կանում՝ թօ հիր գիցուկ լավը խըլղին սօվըռցընա...

Մե գ՛եղացի չարադ՛ատ ման ռթ քախկից խառս ան ուզում, բ՛երում հիրա տունը:  
Խառսը, ճիշտ ան, հիրա ման ռթին շան տ ան սիրում, կիսուր – կերսարին հարգում,  
բայց բաներ կան, վոր դ՛ուրը ըսկի չըգ՛ալում: Ասենք՝ ըտոնք մե էլ ունին, կերսարն  
էտ իշօվ ջ՛ուր էր կըրում, խոտ ու մոտ էր բ՛երում, խեզում էր տեղ էր էթում... Էս  
խառսը յեփ վոր էտ իշին տեճում՝ քիթը քըշտում, փախնում նեռս. գիվան էսենց  
զըվզո՞ւմ են, թե՛ վախենո՞ւմ են՝ վո՞րն ան գիդում: Կերսարն էլ հիրան – հիրան  
խընդընդում, ան սում՝ քախկի ան խճիկ ան, էտենց գ՛ըլնի: Մե ժուկ վոր հընցընում,  
կերսարն ուզում խառսի խէտ խան ան քան ան, ըտու խօքու խէտ խաղա: Ասում.

- Այ բալա, էսա մե ան միս էկեր էս, ըսկի չէս ան սում՝ էտ էը ան լօկընալ ան,  
կեխտի մեչ կուրե...

Խառսը շիվարում, ան սում՝ վա՛յ, հընչի դ՛ուք իշին լօկըցընո՞ւմ էք: Կերսարն  
ան սում.

- Բը ի՞նալ. քանի դ՛ու չիր էկե, շան փաթը մեկ կիսուրըտ ջ՛ուրը տան քըցնում էր,  
իշին տեղին – տեղին լօկըցընում էր, էտա քօ ձ՛եռի փըչիկօվ էլ չօրցընում էր...

Խառսը մըտկի մեչն ան սում՝ լավ, բիճան, դ՛ու ընճի էտենց ձ՛եռ ան ռ, լը տեճանք  
վորը կըփօշմընի: Ձ՛ընըռա կիսին կերսարն էթում, իշօվ հախպըրից ջ՛ուր ան բ՛երում:  
Իշին կան յըցընում դ՛ուռը, ջ՛ուրը հիչըցընում, բ՛երում նեռս: Խառսը մե վեդրօ ջ՛ուր  
դ՛ընում գ՛ագին, լա՛վ տան քըցընում, տանում շըփում իշի վըրեն... Ի՞նչ պըտի  
հըլնե՛ր... Էըը պան դում, խատում... Ըտուց յետօ ձ՛ընըռա կիսին խառսը օրը երկու –

իրեք վոտկ երկու վեդրո ձեռքն դամնում էր հախալուրը, ջուր էր կըրում: Հախալուրն էլ խօ էտատե չէ՞ր... Մըկա վո՞րը փօշմընավ, բալա ջան...

\*

39

Ումուդ ջան, դաստիրակությունը՝ դաստիրակություն, բայց պըտի մեշօլ մանթի մըջից հըլնի: Հընչի քի՞չ կան՝ մե տան մեչ ա ծընված, ջօջըցած, մե խօրն ու մօր գավակ են, բայց մեկը խազարան խելքի տեր ա, ձեռքից ինչ ասես՝ գալում, են մեկելը բեքանրան յա, ըսկի բանի պիտանացու չէ: Մանթ պըտի դաստիրակություն ընթունա, վոր դաստիրակես, չէ: Թե չէ ենեցը կան՝ հանա՝ մաս. ըսկի պետկըն էլ չէ, ըստուց մըդնում, ընդուց դուս ա գալում: Էսա մեր անպետկ թուլին օրը խազար տըրեք անսում են՝ ռազատկօվ ճընջըխներին մի գան, մեխկ են, հարեվնի հանյանթը քար մի թան՝ շիշեքը կըջառթես՝ գըքան վըրըմերըս կըռիվ, յա թե չէ՝ քարը կեթա կաննի մեկի գըլխին... Լասա՝ ըսկի խետը իլլաջ հըլնում. էսատե վըրեն խօսում ենք, ենատե՝ էլի են, էլի են: Անխասկընելուն շատ էլ ուզում ենք, գիդում ես, թուլեն շատ անում ա... Խօրն անսում են՝ վոր շատ ա հանքից հըլնում, գօնե մե դան մե խատ ճըլօթա, անսում՝ տըղա էրեխա յա՝ էտենց գըլնի, կըջօջընա՝ կըխելօքնա: Մերն էլ անսում՝ վոր ճիժը ըստուց – ընդուց վատ բան չըսօրվի, խըխճօվ հըլնի՝ հիրան – հիրան հըմեն ինչ գըքա, տեղը գընգի. տենօվի սօրվօվի յա, անսելօվ չէ: Օօօֆ, յեսի՞մ, բալա ջան... Վոր մըջից հելանվ՝ հանլանթ կըխելօքնա, կըփօխվի, վոր մըջից չէլավ՝ հո՞ւստ փօխվի...

Ըրսա քե մե բան պանդեն, բայց խըլղի չասես, թե չէ գըքան ընծի օթը կըխանեն: Իմ տեքանր խառս ժուլետը անխճիկ գախ էլ ըսկի տան մանթրությունի խետ սեր չըլնում, ջան չանում ըստուց հըլնի, նըստի ընդե. անբան հուռի յա հըլնում էլի: Մըկա նոր հարեվները անսում են՝ մերը սանդօր ըտու վըրեն խօսում էր, թե՝ տըրները չես հավքում՝ չես հավքում, գօնե քօ շօրերը տընօվ մեկ մի ցըփնա: Մե օր էլ ենքան ա յեռսօտում՝ անխճըկա թափթըփուկ շօրերը հավքում, խանում շըպըռտում հանյանթը...

Էս ժուլետը վոր էկավ խառս, տեքանրս կընիկը հառչի վախտերը ըսկի չեր թօղում, վոր էսի մանտը մանտին տեր, գիդում էր՝ էսի քիչ – քիչ հիր վըրեն կըֆանյի, տան մեչը գոռօ կանա: Բայց վոր տեսավ՝ ըտու ըսկի պետկըն էլ չէ, ըսկըսեց գօռօվ ըտուն բանի դընել, գախ - գախ էլ՝ վըրեն խօսալ: Է՛, բայց կանրի կօվը կան շին կըփօխա՞... Մե օր կիսուրը յերգըռօթ ըսմենից գալում, տենում՝ խացը կերած,

անները կուխնին անլըվա կօլնած: Մէկ ուզում լըվա, նոր քընի, մէկէլ յեռսօտում, խանում էտ անները հանթօվ մէկ շըպըռտում ձան վըրէն: Հառավոտ հա հիշկում, վոր խառսը ջըլէրից հըլնի, հինքը ըտում անչըցընա: Հանշկը ջուր ա կըդրում, չում խառսը հիր սէյնակից գըզգըզնուկ ծաներօվ, ծըմըրկըտալէն դուս ա հըլնում, լը յանանց էլ անում կօֆէ չենք խըմում: Կիսուրը մէ կերպ հիրանը զըսպում, անում.

- Հէլի հանթօից աններն հավքա բէ, լըվա, կըխըմենք...

Խառսը լուսամութից հիշկում դուս, օրօշկըտում, անում.

- Կընի~կ, դու յէլ իմ մօր խելքին ես: Օ~օ~ֆ, իմ բան խտն իմ խէտ ա...

\*

40

Տօ տըղա ջան, մըկա օրական պըսագվում են ու բաժվում են, պըսագվում են ու բաժվում են... Բը էտի բան ա: Գօվաս էն մանթին, վոր լավ ծընօղքից ծընվում, լավ դաստիրակվում, հինքըն էլ լավ հընդանիք ա կանգնում: Թէ չէ մէշն ի՞նչ կան: Է՛, հըմա մէ բան դուրըտ չէկավ՝ բաժվես, թանգան պըսագվես. ի՞նչ ես գիդում՝ էտ թանգի հըմէն ինչը դուրըտ գըքա: Հընդանիքը խօ շոր չէ՞ օրական փօխես: Բը վեռչը՞... Ումնդ ջան, գըլօխըտ խելք հավքա. բաժանութունը ճանկա չէ, վոր բըռնէր ես, մանավանդ վոր մէշտեղը ճիժ կան: Թէ՞ մըտէտ գընաց՝ իմալ իք հիրար վըրան ծըռե, ծըռքըփե: Քօ կընիգն ի՞նչ թանգան ունի, քօ վոր հընգերի կընիգն ա ընդուց լավ: Մանթ վոր միյնան կ հիրա հաճույքի խըմար անբրավ ու հիր կընիկ - ճըժի մանսին չըմըտկեց՝ էնի մանթ ա: Անասունը վոր անասուն ա՝ էլի հիրա ձանքի խըմար հիրանը թանլում ա կըրակը: Դը ուրեմ ճըժիտ խաթրին կընգատ խէտ յօլա գընա, մէկ դու ներա, մէկ՝ էնի, վեռչը կըտէնաս, վոր լավ գըլնի: Տըղամանթութունը էտի յա, վընշ թէ կըզկընակ կընգընից գանգըտելը յա թէ չէ՝ սիրօղի հիդվից էթալը: Ծըղզում ես, բայց հուրիշ կընգա յան էթալը ցիգանութուն ա, նըֆսատութուն ա՝ գիցի: Իսկական տըղամանթը նըֆսատ չըլնի, հիրանը կըզըսպա, վոր հիր հընդանիքը մանքուր մընա: Իսկական կընիկն էլ հիրա մանթից բացի հուրիշ տըղամանթի յան չիշկա՝ էտ էլ գիցի: Հընդանիքին դավաճանօղը սըրփութուն չունի: Մըկա մըտկիտ մէշն անում ես՝ բիձէն յետամընաց ա: Բայց ընձի պէտկ ա էտենց զարքանալը, վոր հընդանիքի քախժըրութունը հաշվի չառնում: Ինչ ուզում ես՝ մըտկա, բայց ճիժը հիր խօրն ու մօրօվ ա ուրխընում: Ինչ ա թէ դու քօ ներվէրը հանգիստ պանխես, քօ ճիժը քեզնից յեռու՛ անբրի, անխէ՞ր ջօջընա յա անմէ՞ր, ճըժիտ հաշվին ներվէ՞րըտ ես դինջըցընում... Թէ ուզում ես՝ քեզնից ծընվուկը լավ հըլնի, հընդանիքըտ մանքուր ու պինդ պանխա, հընդանիքիտ խէտ

հաշտ ու համերաշխ հելի, կան սեմ՝ մանոթ ես ու տղղամանոթ ես... Խա~, չեմ անում, վոր մանոթ աննանուս կընգան պըտի պանխա, չէ, էտի ներելու չէ, բայց մեկել բաները կան ռելի յա, չէ՞, լավ ծանդըր ու թեթըվ անել, նոր հիրար գալ:

Յըմա գիդում ես՝ իմ ու տանիկիտ մէջը հըմէն ինչ խալուկ յեղի նըմա՞ն հէլե: Չէ՛, բալա ջան: Կըռվերենք էլ, բանրիշեր ենք էլ, բայց խասկըցեր ենք, վոր մէ տան անթամ ենք, հիրար դուշման չենք: Տանրին տանրվա վըրան յէլ հիրար հավելի յենք սորվե, էլ յե՞փ ենք հառչըվա նըման հիրար ուտում, չէ՞, պանաւ: Տէնում ես՝ տանիկըտ խընդընդում, իմ խէտ կանիլ ա: Վոր բաժվելու հըլնինք՝ էնքա~ն պանճառ կանինք գըթնի~նք, բայց փառք անստըծօ, չուն մանխ - գէրեզման մենք հիրար խէտ գըլնենք ու մեր անսուց շատ էլ գոյ ու շընօրակալ ենք:

Ախար մըկա գի՞րք էք կանթո~ն, դա՞ս էք սորվո~ն, վոր գիդաք: Դը անսա՛ վորն ա անսե՛ զօրավօր է այն անգը, վորն ունի զօրավօր հընդանիքներ: Չես գիդում, չէ՞... Սուրացանի Գէվորք Մանգալտունին անսե, հիմացա՞ր: Էտի միյնանկ հիր գախվա խըմար չասե է՛, էտի մըկավա խըմար էլ անսե: Լավ հընդանիքը միյնանկ քե պէտկ չէ է՛, տղղա ջան, մեր պետութունին էլ անպէտկ ... Յերեվան վո~րդեղօվ հընցընում ես, գըրուկ անմեր գէնքն էսինչըն ա, էնինչըն ա: Չէ՛, տղղա ջան, մեր գէնքը հըմընից հառէչ մեր հընդանիքըն ա... Կանրօղա՝ հուրիշների խըմար հընդանիքը մօղա յա, վոր հընցնում ա, բայց մեր խըմար հընդանիքը կանվօր ա, քանի վոր մենք ուզում ենք՝ մանոթ մընանք:

Յառէչ վոր մէկը կընգան թօղեր, գեղը ըտուն մանտօվ նըշանց կըտին: Յա~ազարից մէկ՝ մանոթ կանրօղա յեռօթ, չօռօթ անքամ բաժվեր, կանրքըվեր. էտ էլ ինչօր դաններ թըռանի բան... Մեր Յալդուզի խըչէյ Միշան (օղօրմի հիրանը. խէլօ~ք, անշան մանոթ էր, վոր անսեմ՝ շօռնան շկ էլ չէր) չոռս թէ խինգ կընիկ անաւ: Դը մէկը մեռավ, էն մէկէլը տընէցիքի խէտ յօլա չըգընաց, յեռօթը հինքը թօրգեց գընաց, վեռչը...Չէր ըստացվում, է՛լի: Է՛, բայց Միշան քա՞նի կընիկ պըտի աններ, չուն հիր ուզածին խասներ:

Վոր յեռօթ անքամ Միշան հըլնում կանրքըվելու, մերը՝ Մանգուշը, անխըրկան դըրկում հիրանց խօրօխպօր՝ Մընէյ Վարագդատի հիդեվը, վոր գա, էթան կընիկ ուզելու: Վարագդատը դըբռօցն ա հըլնում. հինքը դերեկտօր էր: Դը խէլօք, խասկըցօղ մանոթ էր, լավ էլ գիդում էր, վոր Միշայ չըվնին գէրան դընել չըլնի, ըտու խըմար էլ չեմուչում անում: Էս անխճիկը շատ վոր խընթըրում, Վարագդատը յախէն անգատելու խըմար անում.

- Դըբռօցը բաժնից մանոթ ա էկե: Մանգուշին անսա՛ թօ չընեղանա: Էս թափ չեմ կանա գա, բայց մեկել կանրքըվելուն անպանյան գըքամ...



Ծըղզա՛, ծըղզա՛, ունո՛ւդ ջան, ու գիցի, վոր մանթ կընգընից հըմէն մէ սըթից պանճառով չըբ՛աժվի... Զէլի՛, հէլի՛ գընա կընգատ կուշտը, մըկա հիրար կանուոցաք...

\*

41

Պանալ մերը տըղին հըմընօր անսում.

- Ա՛յ բալա, անֆտօն տանկըտ ա, գընա սանրից մէ դան սեվ խող բ՛ե, լից բախճէն, ծան տընգեք, թօ մեզի յէլ տանն ու խընձոր հըլնի:

Ասում , չասում՝ տըղէն հանգաճ չանում: Վեռչը վոր տըղի գանլէն փախնում, էթում սանրից մէ լիքը անֆտօ սեվ խօղ ա բ՛երում: Թանսի նըման, ճանփին միլիցէն կանըցընում: Էն թըվէրին անանց թըխտի վո՞ն կաներ մէ բան ըստուց ընդէ տաներ. վոր բըռնին՝ դադի գոռժ էր բասվում: Քանսանր, էս խեխճ տըղէն կըրագն ա հընգում: Միլիցէն վոր տէնում՝ էսի թուխտ ու թանվանսուք չունի, անսում՝ պըտի էթանք բաժին: Էս տըղէն գըլխին ա տանլում, անսում.

- Զըմա իմ գըլխօ՞վ մերըս պըտի դաններ Միչուրինը:

\*

42

Մեր խընամ Լիպարիտը, հազար օղօրմի հիրանը, հա կանսեր՝ մանթ հիր անխճըկան յեռու տեղ պըտի մանթի չիտա: Մենք հիրարից տըթգօ չինք, չէ~: Էթալ - գալն էր դըժվար, իմալ վոր պետկըն էր՝ բարեգնութուն չինք կանում անինք: Բայց հիրուր շատ ինք հարգում, պանդում: Մէկըս վոր կէթեր մէկէլի տունը, էսի կըդաններ ջոչ ուրախութուն:

Մէ տանրի յես ու մերըս էկեր ենք Սանրուխան՝ մեր խընամու տունը: Զարագադներով հավըրվան, լա~վ կերուխում անրինք: Զանքան վախտ կօնխըները գացին, խառսներն հէլան, ըսկըսին սեղանը հավըլ: Էն պըստի խառսը մէ բութուկա բէրեց, բաժագների մըջի մանցուկ անրաղները լըցեց ըտու մէջը, տըվեց կիսուրին, վոր քըսա վոտ ու ճեռին: Էս իմ մօր գըլթիը ցավում էր, էտ հավըուկ անրաղի բութուկէն ուզեց, մէշու լըցեց գըլխին, վոր ցավը թօղեր: Մէշօլ նըստանք, կըսան անրինք, հէլանք պանրկանք:

Զառավոտ հազիվ լուսը բասվեր էր, մէկէլ տէնամ՝ մերըս ընձի բըթում՝ անխճի՛, հէլի՛, անխճի՛, հէլի՛: Զընգնավորա, անսի՝ ի՞նչ ա հէլե, այ մեր:

- Ախճի՛, խայտառակ ենք հէլէ, լը հէլի տես՝ ծաններս էս ի՞նչ ա հէլած, սանդ կըպած հիրար, չեն կանուս սանդըրեն , - փըսփըսաց մերըս:

Համ էլ ինչօր կլէյօվ ծանները կըպցըրուկ հըլնին գըլխին: Մէր ու անխճիկ նըստէր ենք, չենք գիդում՝ ինչ անենք. գ՛օնէ շա՛լ էլ չըկա, վոր կանպա, չէրէվա: Մէկէլ խառըր էկավ, տեսավ՝ ինչ օրի յենք: Մըկա էսի փօխանակ մէ բ՛ան անա, ծըղզում, ուշկը եթում:

- Ախճի՛, հընչա՞ ուշկըտ եթում. մենք խառվէր ենք հիրար, չենք գիդում՝ ինչ անենք:

- Գիդո՞ւմ էք՝ ինչ ա հէլէ,- մէ կերպ խառըր ծըծաղը կըղրեց,- կիսուրըս խընամուն անրաղի բութուկի տեղը յերեվի խալօդնու բութուկէն ա տըվէ...

Նոր ջուր տանքըրին, մօրըս գըլօխը տան տըղամանքիքից գ՛օխտուկ լըվինք, հէլանք էկանք մեր գ՛եղը:

\*

43

Մանթ վոր հիրանը վընաս չիտա, վայթէ հուրիշը չիտա յու չիտա: Բը հընչա՞ անում՝ փոս փօրօղը հինքը փոսը գընգընի...

Մէ անիծուկ, անյօլագանլի մանթ ա հըլնում: Խառըր, տըղէն իշքան ըտուն լավ են հըլնում, էսի գիդում՝ ըտոնք հիրա վատն են ուզում: Մէ հավի խառսի յու տըղի վըրէն խօսում, ըտոնցից ըստուն – ընդուն գ՛անգըտում, բ՛այց խառսն ու տըղէն հիրանց պատիվը հիրանց ձեռն են պատում, իմալ կանում են՝ հիրանց տան ջ՛ոչի խէտ յօլա յեն եթում:

Մէ օր խառըր կուշէտկին նըստուկ կանր անում, մէկէլ հարէվնի ճիժը ձե՛ն ա տանում: Էս խառըր ձեռնի անտըր զանում պատին կատուկ խալուն, հըլնում դ՛ուս: Էդ մէ փըշուր գ՛ախ կէրսարը գ՛ալում, վոր նըստի կուշէտկին, հանշկը անում խալուն, անտըր տէնում: Հիրան – հիրան մըտկում, թէ խառըր անտըր ինադու յա զանն ըտե, վոր չըքվի հիրանը: Մըտկի մէշն անում. «Դը կանյի էս անտըր էնենց տեղ դընեն, վոր մեռնի – քօռնա՝ չըգըթնի»: Անտըր խալուց քաշում, մըտցընում ըշտէպցէլի ծակը: Տօկը ըստուն դըռըրըցընում, վէրցում տըփում գ՛էտինը: Լավ ա՛ խառըր ձե՛ն անում, վագնում գ՛ալում: Վոր տէնում՝ ինչ ա հէլէ, հավար ա քըցում, գ՛ալում են, կէրսարին մէ կերպ փըրգում են:

\*

44

Բալա՛ ջան, գեղացին պըտի խող էլ մըշակա, անասուն էլ պահա, բը ի՞մալ ես անում: Վոր հըմընօվ թեվըներըս ծալենք, նըստենք, մե վո՞րը կըբերա խաց ու ջուր կըտա: Ե~ե~, ի՞նչ ասեն, անխշատօղ մանթը վորդե յէլ հըլնի, մէ յելք կըգըթնի, հիր գըլօխն էլ կըպահա, հիր տունն էլ, թէ վոր պետութունը տէր կանյի՝ խանգարօղ չըլնի:

Մեր հարեվնի կընիկը հըմէն անառ ճուտ էր անուն, պահում էր, ջօջըցընում էր, սանղ ձըմեռ էլի յօլա յին էթում: Մանթը ըսկի բանի պետկ չէր, էլի էտ կընիկն էր, վոր մէ կերպ ծերը ծերին էր խասցընում, հիր ճըթերին պահում էր:

Մէ տանրի էս կընիկը կանտօլօվ ճուտ ա փօխում. գըլնի մէ յեռսուն – քառսուն խատ: Լավ էլ թըռփօջ ճուտ են հըլնում: Մանթը գեղի մըջից գալում, ուրխընում, անում.

- Կընիկ, մէ երկու խատ էտ ճըտերից բե մօռթեն, էփա՛ ուտենք:

Կընիկը կանյիլ չըլնում, անում՝ լը պըստիկ են, թօ ջօջընան, անքլօրները վոր ըսկըսին կանչել, նոր շանփաթը մէ խատ, երկու խատ կըսկըսենք մօռթել:

Մանթը հըմընօր էթում - գալում, կընգանը խառցընում՝ անքլօրները չըկանչի՞ն: Է՛, հըմէն ինչ հիր գախն ունի, գօռօվ խօ չէ: Բայց էս մանթը չըկանում էտքան բանդ հըլնի. ախար սիռտը շատ ա խավ ուզում: Մէ օր գօխտուկ էթում մըղնում թալվեն, ըսկըսում անքլօրի նըման կանչել. էնքան էլ նըման ա կանչում: Կընիկը բախճեն ա հըլնում, էտ ձենն անուն, թալվի յանը բան յա չափում, անում.

- Ցա~վ, անտէր, մըկա մանթըս կըլըսա, կասա՛ հիրար հիդեվ մօռթա. ձենըտ քըցեր էս գըլօխըտ, գիդում էս՝ լա՞վ ես անում: Քե չես խըխճում, գօնէ հընգերներիտ մեխկ անրի:

\*

45

Իմալ անում՝ լավն էլ ա անըսվում, վատըն էլ. մանթ են անտ, վոր լավ անում յետ քըցա: Էտի կանպ չունի՝ անյէ՞լ ա, ջանյէ՞լ ա, կընիկ ա, մանթ ա~... Ժօղօվումթը հըմընին էլ գընատական ա տալում:

Մարկոսի Բանգօն Յերեվան կանտօլ ա տանում ծախելու: Յըմէն հիրկուն էթում տըղի տունը. տըղէն Յերեվան տուն ուներ: Խառսը խալալ կանթակեր հըլնում. ըտուն լավ ընթունում, լըվում – թափում, լավ – լավ կերցընում – խըմցընում, փըմփուխ ջըլերի մէջը քընցընում: Յառավոտ Բանգօն նորուց հըլնում, էթում բազառը՝ հիր գոռծին: Մէ հիրկուն էլ Բանգօն գալում տուն, տէնում խառսի մերն ըտե յա: Նըստում են, խընամիքօվ բօլ կըսան յեն անում, վեռչը Բանգօն խընամում

անսու չափ գ'օյ ու շրնօրակալ հըլնում, վոր էտենց շրնոխկօվ անխճիկ ունի: Խառնը կերսարի գ'օվասանքը վոր լըսում, հըլնում անստըծով մէկ, գ'ալում, փատըտվում բիծին, թուշը պանչում: Բ'այց էն ինչ վոր խառնի մերն ա՝ ըսկի էտ խօսկերը հաշվի չառնում, գըլթիկ տանլում, նըստում: Բանգօն մըտկում, թէ խընամու քունը յերեվի տանում, հինքը հըլնում, էթում քընէլու:

Գըշերա մէ գ'ախ խառնի մերը գ'օխտուկ մըդնում Բանգօյ քընուկ տեղը, ըտու շըլվարը վերցում, ըսկըսում ջէբերն ըստուգել: Իմալ վոր Բանգօն տեղի մէջը ֆըռում, էս կընիկը գիդում՝ զառթընավ. խառնվում հիրար, շըլվարը ծ'եռը էտ օթաղից հիրանը թանլում դ'ուս, էլ չիշխնում շըլվարը յետ բ'երա: Լուսը վոր բ'ասվում, Բանգօն ջըլերից հըլնում, վոր շօրերը խաքնի: Տէնում՝ շըլվարը չըկա. դէս ա հիշկում, դէն ա հիշկում՝ չըկա յու չըկա: Անչընում, վոր էտ օթաղից անշըլվար դ'ուս գ'ա: Էտենց կիսախաքնել նըստում կանաֆտին, չըգիդում՝ ինչ անա: Տըղէն հիրան – հիրան անում՝ էս հընչի՞ խերըս չըլնում վեր: Գ'ալում, վոր տէնա՝ ինչ ա հէլէ: Բանգօն ուրխընում, վոր գ'օնէ տըղէն էկավ, խառցընում.

- Բալա՛ ջան, հիրկունը վոր յես տուն էկա՝ իմ վըրէն շըլվար կէ՞ր:

\*

46

Սէ տանի մեր Սանքօյը Չերէվան խառնիս են կանչում: Էսի յու հիր կընիկ Վառսիկը, հիր անխալեր Սերօժը հըլնում են, խաքուն – խըփուն նըստում են անֆտօն, էթում են Չերէվան: Վոր խասնում են Չերէվան, թաննի նըման էս Վառսիկի անդի ցավը բ'ըռնում, էն կըռալն ա կըռում, էն կըռալն ա կըռում... Ինչ անեն, ինչ չանեն, անում են՝ հավէլի լավ ա տանք անտամը քաշէլ, նոր էթանք խառնիս, մէկ ա՝ Վառսիկը էլ սեղանից օքտըվողը չէ: Սըղնում են էտ անտամ քաշէլու տեղը, տէնում են բօլ էլ յեռթ ա, բ'այց դը ի՞նչ պըտի անին. վոշ մէկը հիր յեռթը ըտոնցը չէր տի, հիրանք էլ են յեռթ կանյում: Գըլնի մէ ժամ քաշում, չում յեռթը խասնում Վառսիկին: Ըստոնք բ'ըժըշկին վըռագընում են, թէ՝ շուտ անրա, պըտի էթանք խասնենք խառնիս: Բ'այց բ'ըժիշկը հիրա գ'ոռօը հընընից լավ ա գիդում. Վառսիկին սըրըսկում, անում՝ էրկու թօպէյից լիզուտ կըթըմբըրի, ընձի կանսես՝ անտամըտ կըքաշեն, կէթաք: Չընցում խինգը թօպէ, Վառսիկը ծ'են չըխանում: Բ'ըժիշկը խառցընում, թէ՝ լիզուտ չըթըմբըրա՞վ: Էսի գ'ըլօխը տանում - բ'երում, անում՝ հըրը: Խինգը թօպէ յետօ յեն խառցընում, էլի՝ հըրը: Էտենց մէ քանի դան վոր անում՝ հըրը, էս Սանքօն էլ չըդիմանում, անում.

- Բ՛ըժի՛շկ ջան, ցա՛վըտ տա՛նեմ, յես ըտու լիզվի՛ն ծա՛նօթ եմ, խաչը իմն ա՛ զօրութունը յես եմ գիդում, էտի թըմբըրօղ լիզու չէ, դ՛ու իզուր բա՛նդ մի հէլի: Արի գ՛ըլմի՛ ա՛ տամը քաշա, մենք էթանք – խասնենք մեր խառնըսին ...

\*

47

Տըղա՛ ջան, դ՛ու գիդո՞ւմ ես՝ քօ պա՛պիկը ինչ մա՛ռթ էր. ա՛ խշըրքի ա՛ռթա՛ր, խըխճօվ մա՛ռթըն էր: Հիրանը էնդա՛ յին սիրում - հարգում՝ սա՛ղ Անուշ ա՛փեր ին ա՛սում: Էն նեղի, վատ տա՛րիներին քօ պա՛պիկն ու տա՛տիկը քանի տո՛ւն սօվից փըրգին. հազար օղօրմի հիրանցը՝ ա՛ռթար մա՛խօվ էլ մեռան: Բալա՛ ջան, տա՛տիկըտ կըճըճօվ սըբասը թունդըրից խանում էր, լըցում էր ա՛մները, հօղըրկում էր նեղի - նա՛չարի հարէվների տըները, ա՛սում էր՝ մեխկ եմ, թօ ուտեն՝ չըմեռնեն, նոր հիր հընդանիքի ա՛նթամներին էր բ՛ավարարում: Ձա՛թի կըռվի տա՛րիներին էլ էրկու ա՛նտեր - ա՛նտիրական մա՛ռթ քօ տա՛տիկի ձ՛եռի խացն ին ուտում, ձ՛եր թունդրի շուռթին էլ գ՛իշեր քընում ին, ա՛սում՝ լը մէ բ՛ան էլ տա՛ն վըրէն կըռիվ ին ա՛նում. մէգն ա՛սում էր՝ էսի իմ տունն ա, մէկէլն ա՛սում էր՝ իմ տունըն ա:

Խէրըտ գ՛ընաց բ՛անակ, ու կըռիվն ըսկըսվավ: Վոր խօրիցըտ մէ խաբար գ՛եր, տա՛տիկըտ չա՛լա՛քի կըթըխէր, կըտեր ա՛խճըգներին, կա՛սեր՝ տա՛րէք օխտը տա՛ն յեռքըսից նեռս թա՛լէք, թօ ա՛սված բ՛երա իմ տըղի դ՛ենը, փօռցանքից ա՛զատա... Բա՛, բալա՛ ջան, քօ տա՛տիկ, պա՛պիկն այտենց մա՛ռթ ին: Հիրար խէտ էլ էնքան սեր ու բա՛րիշ ին, հիրար խօվի յին մա՛ն գ՛ալում: Պըստի – պըստի հիրար վըրա՛ ծըռէր ին, հիրար ա՛ռէր ին: Վոր տա՛տիկիտ ա՛սում ինք՝ լը պա՛դմա՛ ի՞մալ հիրար վըրա՛ ծըռաք, ծըղզում էր, ա՛սում էր.

- Ի՞մալ ծըռանք. յես մեր դ՛ուռը կա՛յնուկ ի, հինքը հասարից հիշկաց ընձի՛ ծըղզաց, յես էլ ծըղզացի, էտենց ծըռանք հիրար վըրա՛ ...

Պա՛պիկըտ խա՛նա՛քչի, սա՛ղսիռտ մա՛ռթ էր: Մէ դա՛ն կընգա խէտ ջընագ ա քաշում, քանի օ՛ր հիրուր չեն կա՛նում խափէն: Չում պա՛պիկըտ մէ գ՛ոռծօվ էթում Թիվլիզ: Ընդեղից կընգան նա՛մակ ա գ՛ըրում: Կընիկը ուրախ – ուրախ նա՛մակը բ՛ացում, տէնում՝ սիյա՛ թուխտ ա, վըրէն մէ բ՛առ ա գ՛ըրուկ. «Յեղա՛ստ»...

\*

48

Մա՛ռթ վոր ջ՛օջընում, մօտիկ մա՛ռթի կա՛րօտութուն հավէլի շա՛տ ա քաշում, ուզում, վոր գ՛ան, նըստեն հիրա կող ու կուշտը, հիրա խէտ կըսա՛ն ա՛նեն, ըսկի չուզում, վոր հըլնեն էթան հիրանց տըները:

Մեր Նըխշուն տանտիկը սանդոր գանգըտում, թե անխճըգները հիրա վըրեն չեն դանուն, օրերով չեն գալում՝ տենան՝ հիրանց ութանասուն տանրեկան մերը սանդ ա, թե մեռե: Բայց մենք էլ խօ տենում ենք, վոր հիր անխճըգները հըմընօր էլ գալում են, ժամերով նըստում են կուշտը, խաթըրն անունում են: Բայց ի՞նչ անպահայի՝ մե օր չըկանան գան. էլ մօր ձեռից պըռծում - անգատում գըլնի:

Մե անքամ թե իմալ հըլնում՝ Նըխշուն տանտիկի ջոչ անխճիկ Ջըվեդը երկու օր անրանք անտանում, նոր գալում խօր տում: Էս տանտիկը անխճըկա վըրեն շատ փիս նեղանում, անտում.

- Անխիխճ անանսված, բը դու անխճիկ ես՝ հեսօր քանօր քօ մօր անյվալը չես գալում գիդաս: Յես էս ի՞մալ անպետկ եմ դանոցե, վոր ընձընից ետենց փախս էք:

Խեխճ Ջըվեդը շատ անեսսըռտում, անտում.

- Ա՛յ մեր, ախար յես էլ անոջըութուն էլ չունեն, հերեկ գըլխիս ցավից մեռնում ի: Ըսկի չես անտում՝ յես էլ ջանել չեմ, հիցուն տանրեկան, մե տան կընիկ եմ՝ հազար բան ու գոռօի տեր...

- Սե՛վ գան սըթերիտ , - բըշտում Նըխշուն տանտիկը , - դո՞ւ հընչիր հիցուն տանրեկան, հերեկա ճիժն ես ... Հիցուն տանրեկան ըսկի յես չըկամ ...

\*

49

Մանթ հիր երեխին պըտի հիր օրինակով դաստիրակա, վոշ թե բօռալօվ - ճըչալօվ, տըփոց - ջանթոցօվ յա թե չե՝ ժամերով գըլխին անդըլ կանթալօվ: Ինչքան ուզում ես՝ ճըժին անսանտը մի խօսա, բայց վոր ենի տեսավ՝ դու սոթ ես անտում, հիքըրն էլ կանսա: Յա թե չե՝ անսանտը գոլութուն մի անրա. ի՞մալ չանա, վոր տենում՝ դու գոլութուն ես անում, շատ գախ էլ հիրանը խետըտ ես տանում: Երժիտ հա՛ անսանտը կընիվ մի անրա. ախար ենի տենում, վոր դու հըմընօր կընիվ - կանակալի մեջ ես, է՛... Ուզո՞ւմ ես՝ ճիժըտ հարագատիտ սիրա, հարգա, ուրեն ճըժիտ դենը հարագատիտ վատը մի անսա: Ուզո՞ւմ ես՝ ճիժըտ ջոչի հարգը գիդա, ջոչի խօսկը բանատեղ դընա, ուրեն դու քօ ծընօխկին հարգա՝ իմալ վոր պետկըն ա: Թե չե վոր բանը խասավ տըփոցին՝ վայթե բան դու չիգա...

Մե կընիկ շատ անուշադիր անհըլնում. սանդօր ըտու ձեռից անման - չաման անհընգում ջանթուն, յա թե չե՝ անմները լըվալու գախ էտի մե երկու բաժակ կան տանրեկա անպանյման ջանթուն: Հանջի գախերը ըտու կիսուրը, մանթը ըտու վըրեն շատ ին խօսում. ի՞նչ անին, տընաշենը օր չըլներ, վոր ջանթուկ անման

չըթափէր: Բայց քիչ – քիչ անդրուում են, հիրանց նամուսը քաշում են հիրանցը, էլ ձեն չեն անում:

Էտ կընգան երկու տըղա յա հըլնում: Ըստոնք հընընօր հըլնում են, հիրանց հանյաթը խաղում են: Դը ճիժ են. Լանրոցի - բ՛րնոցի յեն խաղում, թօփ են խաղում, հիրար քաշքընում են, վեռչը... մէ բանօվ ըզբաղվում են, է՛լի... Մէ օր էլ էտ ճըթերը տէնում են, վոր հիրանց դ՛ուռը մէ ջ՛ոչ, կանանչ կըճուճ ա դ՛ըրուկ. էտի ըտոնց պանըրի կըճուճն էր, էտ կընիկը լըվացէր էր, վոր պանըրի խըմար ըտու մէչը թանգան անդաջ՛ուր բ՛րնէր: Էթում են, խէզնում են կըճըճին, ըսկըսում են ձի – ձի խաղալ. մէ փեղօվ էլ հա տըխկըցընում են՝ գիվան ձի՛ն թափօվ վագնի: Շանտ վոր գանում են, մէկէլ էտ կըճուճը ջանթում: Ճըթերի լեղին կըդրում. անում են մեր մէրը մըկա գըքա, մէ կըտըփա: Էն ջոչը թօղում, փախնում ճանփէն, բայց պըստիկը չիշխընում փախնի, սընքըռտալօվ գալում, մօրն անում՝ ձի – ձի յինք խաղում, մէկ էլ ձի՛ն ջանթալ: Մէրը յեռսօտում՝ ի՞նչ ձի: Տըղէն անում՝ էն ջոչ, կանանչ ձի՛ն, հարի նըշանց տամ: Բ՛էրում, մօրը կանըցընում ջանթուկ կըճըճի գըլխին: Շընէրին կանպում են, մօրը՝ հառօրկում. քաշում էտ տըղին էն տուրն ա տանլում, էն տուրն ա տանլում՝ մուխը գաքսից հըլնում: Էտ տըղէն ձենը քըցում գըլօխը, ըսկըսում էն Լանցը Լանլ, էն Լանցը Լանլ, մէկէլ էն մէկէլ տըղէն ա հընգում մօր հանշկին: Զընգում հիդեվը, վոր բ՛րնա, ըտու սեվն էլ տա, տըղէն փախնում: Վոտից իմալ վոր կօշիկը խանում ու շըպըռտում տըղի յանը, կըրունգը անում, տըղի գըլօխը ճըղում, անումը ըսկըսում չըռալ: Տըղէն չօքում, գըլօխը բ՛րնում ու կանչում՝ վայ, մանա ջան, յես մեռա, վայ մանա ջան... Բայց ի՞նչ մանա... Մէրը խասնում ու ըսկըսում ըտուն էլ դըմսըկէլ: Զարէվները վոր էտի տէնում են, վագնում են, գալում են, ճըթին անջախ մօր ձեռից անում են: Ըտոնցից մէկը ուզում էտ կընգան խախընդընա, անում.

- Տօ այ կընիկ, վոր ճըթերիտ տըփիր, էտ ձի՛ն կըսանում... Զենա մեր դ՛ուռը երկու տեենց ձի կան, անրի՝ մէկը տանք, բէ կանպա ձե՛ր դ՛ուռը, միյնան կ՛ըթերին բան մի անա...

\*

50

Ինչ ուզում էս՝ անա. մանթ ու կընիկ պըստի հիրար սանգ գան, վոր տէնօղն անա՝ էրնէկ ձեզի: Խա, դէն չեն, սիրելը հիր յեռթին, բայց վոր դեմքօվ - դիրքօվ, բօյ ու բուսօվ էլ հիրար հարմար հըլնեն, վա՞տ գըլնի... Արի յու տես՝ շանտ գախ կօլօտ տըղին ճըկտում են մէշու հարմար բօյի անխճիկ ուզեն, վոր ճըթերը գօնէ

քաշեն մօր յանը, խօր նըման կօլօտ չըլնեն... Բը ի՞մալ, բօյօվ կընգա կօլօտ մա՞նթը հիրան հիրան նեխարուտում էլ, բայց վոր ճըժերը բօյօվ են հըլնում, ըտօվ հիրանը սիռտ ա տա՞լում:

Մեր հարեվան Սերգօն հիր կընիկ Աստղիկից շատ կօլօտ էր, էնենց էր, վոր հիրուր խէտ ա՞մչընում ին դ՛ուս գ՛ին, մէ տեղ էթին: Տեղը վոր գալում էր, Սերգօն խա՞ննաք - չա՞ննաք էր ա՞նում, չէր ուզում նըշանց տէր, թէ ինչքան ա նեղվում, բայց վոր՞ն էր ընդուն ա՞վատում...

Ասում՝ ջայլէ գախ մէ գ՛իշեր Սերգօն կընգան գառթընցընում, ուրախ – ուրախ ա՞սում.

- Ախճի~, հէլ վե՛ր, լը տե՛ էս ինչքան են բօյօվցե՛ վողներըս յօրդընից դ՛ուս ա մա՞ցած... Ա՛, լը հիշկա՛...

Կընիկը լուսը վառում, խօքեխընում, ա՞սում.

- Բա՞ խտա՞ վոր ին ու քօ գ՛ըլօխը. յօրդանն էս լէնքէն ա՞ռե վըրէտ...

\*

51

Սըկա վիր դ՛ուռը հիշկում էս՝ ա՞ֆտօ յա կա՞յնուկ, բայց հառէջ ժամանակ գ՛եղը թա՞քուբիր ա՞ֆտօ կէր. էն գախ ա՞ֆտօ ունէցօղը յա խօպանիստ էր, յա պա՞շտոնավոր, յա մէ թալ գ՛ոռծի տէր: Վիրը վոր ա՞ֆտօ ունէր՝ մէ գըլթիկ էր տա՞լում, քօրքօշնում է՛ր, էլ խէտըները խօսալ չէր հըլնում: Տիրվանքը ա՞ֆտօյը շատ էլ մոլառթ ին, գիդո՞ւմ էս, սա՞ դօր լըվում ին, սըռփըռտում ին, մա՞ ժմըժում ին: Բան ա, թէ հանգառօ նըստիր ա՞ֆտօն ու դ՛ուռը մէշու թափօվ փագիր, էնենց կըբօռին վըրէտ՝ մէշու հուշիկ, խօ գ՛ոմի դ՛ուռ չէ, դ՛ու յէլ քօ նըստէլուց կըփօշմընիր... Դը մէ բան վոր քիչ ա հըլնում, մա՞նթ ըտու վըրէն հավէլի յա թըֆթըֆում, էտենց ա...

Մեր հարեվան Սօխօն խողը ծախէց, մէ ա՞ֆտօ ա՞ռավ: Հինքը Քա՞վա՞ն լավ գ՛ոռծի յէր. ա՞մօթ էր, վոր հըմընօր ա՞ֆտօբուզօվ էթէր - գ՛եր յա թէ չէ ժամէրօվ կանգառները կա՞յնէր հիշկէր, թէ՛ յարաբ մէ ծա՞նօթ մա՞նթ կուռթի՞, վոր ըտու ա՞ֆտօն նըստի: Չէ՛, Սօխօյ նըման մա՞նթին ա՞ֆտօն պէտկ էր, բը ի՞մալ... Խա՛, ա՞ռթն վոր ա՞ֆտօն հէլավ, հըմընօր հառավնէց Սօխօն վոր պըստի տընից դ՛ուս գ՛եր, կընիկը Սօխօյ ջէբը բէնգիմի փողը դ՛ընում էր, ա՞սում էր՝ ա՞սված քօ խէտ, ճա՞մփու յէր դ՛ընում: Էտի ա՞րէր էր սա՞ննա՞ն: Բայց մէ օր էլ կընգա մըտէն էթո՞ւմ, թէ մա՞նթի՞ն ա փօռցում (էտի հինքը գիմա, մէկէլ՝ ա՞սված)՝ Սօխօյ ջէբը փող չըդընում, միյնա՞կ ա՞սում՝ ա՞սված քօ խէտ, ճա՞մփու յա դ՛ընում: Սօխօն լը



անֆտօյը խասուկ չըլնում, վոր ձեռը տանում ջեքն ու տենում՝ կընիկը փող չըղըրե: Դը պանզ ա՝ դանուն գալում, կընգանն անում:

- Կընիկ, դու վոր անսուն իմ խետ դըրիր, չասի՞ր՝ անփող ըտուն դո՞ր եմ ճանփում...

\*

52

Հիր հընդանիքը պանխելու խըմար մանթ հըմեն անխշատանք էլ կանողան անա. էտի անօթ բան յե՞փ ա: Իմ պանփիկը շանփաթը մէկ Յերեվան ձու յեր տանում, ծանխում էր, ընդեղից էլ բան ու ման էր անում բէրում, յօլա յին էթում: Մուշտանրի կանչելու խըմար էլ հիրար վըրան բօռում էր.

- Քանվանա ձու, Քանվանա ձու...

Ու բօլ էլ մուշտանրի ունենում էր: Բայց վոր Քանվանա անունը փօխին, դըրին Կանօ, պանփիկըս անչընում էր, էլ չէր կանում բօռէր, անսէր, թէ վորդեղի ձուն ան ծանխում. դը վոր կանչէր «Կանօյ ձու», մէշու լավ բան չէր ըստացվի, հուրիշ բան կըխասկըցվէր. ախար «Կանօ» մանթի անուն էլ ա: Բայց մէկ ա, պանփիկըս շանից չազադվում: Մէ օր մէ կընիկ գալում ձու աննելու, պանփիկիս խառցընում, թէ վորդեղի ձուն ա, պանփիկս էլ անում՝ Կանօյ ձըվերն են՝ քօ խավնուկ ջոնչ, լավ, թափօվ: Էս կընիկը գոյն տանում, գոյն անում, բօռում, ճըջում, պանփիկիս հազար անպատիվ խօսկ անում, վեռչն էլ միլիցա յա կանչում: Մէ բան լավ ա՝ միլիցեն քանվանցի յա հըլնում, պանփիկիս խասկընում ու մէ կերպ անգատում էտ շանից:

\*

53

Աշնան յաները վոր դաշտը ցօրենը խասնում, կըփըռտոցն հընգնում ժողօվըռթի մէջը. անէք մէկն ուզում հիր հառտ ու հափը շուշուտ քաղա, բէրա տեղավորա, չըմընա անձըրեվի յա ձան տան կը կան էլ մընա, խընձըրի թափի, զայ հըլնի էթա: Մըկա վորը շատ ցօրեն ա ցանում՝ խօ գէրընդօվ չըքա՞ղում. կօմբանը տանում են՝ քաղում, ծէծում, սանրքում ցօրեն, տանում հիրանցը:

Էն տանրի անշնան յանը շատ շոք էր. ցօրենը պըտի շուշուտ քաղվէր, թէ չէ օր օրի խընձըրում էր, թափում էր: Մեր գեղը մէ մանթ կան՝ Խամբօյ Հայկազ են անում: Էսի էտ տանրի դաշտը բօլ ցօրեն էր ցանե. էկե ցօրենը քաղելու գախը,

բայց կօմբան չըկանում ճանրա: Ինչ անա, ինչ չանա՝ հըլնում էթում գ՛եղապետի կուշտը, անում՝ պըտի կօմբան հօղըրկես՝ հառտըս քաղա: Գ՛եղապետն անում.

- Չայկազ ձ ան ձ ան, հեսօր կօմբանը հուրիշ յանի վըր ան յա քաղ անում, հէքուց գըքա քօ դաշտի յանը, կանսեմ՝ քօ հառտըն էլ կըքաղա:

Չայկազին էտի դ՛ուր չըգալում, շատ ա վըռթօվվում, գ՛եղապետին անխ ա տանում.

- Լըսա՛, թե վոր հեսօր չուր հիրկուն կօմբան հօղըրկի՜ր՝ հօղըրկիր, չէ՛ կէթան հառտըս պանժառ կըտամ, կըվառեն, անընձա խոտը հառավո՛տ կաննէք...

\*

54

Գ՛եղացու օրը կըղըրվի. հառէչ էլ դատում է՜ր, բանում էր, էլի կուշտ փորօվ խաց յե՞փ էր ուտում. վոնչ տանվար - մանլօվ էր տուն պանխել հըլնում, վոնչ էլ խող ու ջըրօվ: Բայց դը ճանր չըկեր (քանի գ՛եղը զավօդ չին բացե). շատ գախ տան տըղանանթը անառը էթում էր քաղ, կընիկը տուն ու տեղին էր մընում, տանվար - մանլն էր անում, մանթին ցերեկը դաշտը խաց էր տանում: Էտենց յօլա յին էթում:

Մէ դան Վաղօն դաշտըն ա հըլնում, կեսօրնէ յետ կընիկը խաց ա բ՛երում: Վաղօն փոցըղը ձեռից թանում, քըռտինքը սըռփում, տանջըվուկ - չարչըրվուկ գալում նըստում, վոր խաց ուտա: Կընիկը դանստըղունը փըռում, պուլիկից սուլբըրկի մէչը թանը լըցում, խացը դ՛ընում կողը, անում.

- Դը բ՛ըռթա յու կե:

Խեխճ ռըժբանրի թեվերը թուլնում են, անում.

- Տօ, քօ՛ էտենց - էնենցը, էս ի՞նչ էս բ՛երե...

Կընիկը ըսկի հիրան ընդե չըդ՛ընում, անում.

- Ըսսկի՛ մանգնի դանվի չանես<sup>12</sup>. հեսօր քաղ չես անրե, փոցըղ էս անրե, բ՛ըռթա յու կե...

Մըկա վոր մէկին չեն ուզում հիր ուզածը տան, անում են՝ մանգնի դանվի մի՛ անրա, թանօվ յօլա գ՛ընա:

\*

55

<sup>12</sup> ... մաժունի պահանջ չներկայացնես

Սանդ տանրին խեխճ գեղացին բանուն - դատուն. բախով բօստան ա բըրուն  
յա թէ չէ տանլուն վարել, թանգ - թանգ կանուտի սերմը անուն, ցանուն, սանդ  
անամ բեջանրուն, վոռթ ու բըլօջի դեղ ա սըրըսկուն, պանառտանույթ ա տանլուն,  
ըստու – ընդու խետ կըռիվ - կանլակալ անելով ջըրուն, անշունը տանջանքով –  
տըրօրվանքով մէ կերպ քանդուն, էն էլ տանրին գիդա՝ բերք հըլնի թէ չէ. հէլածն էլ  
կանօղա լը մըրիկ հըլնի: Վեռչը .... Աֆտօ յա բըռնուն, հիր կանուտը բերուն  
խասցընուն Յերեվան, քախկըցուն անսուն՝ անրի ջըրի գընով ան, տանր կե, յօլա  
գընա:

Տօ բալա՛ ջան, մըկա յէլ թանգան բան ա դուս հընգե. գեղացին էլ յեփ ա  
կանուն բազառը կանյնի, հիր կանուտը ծանխա: Յըմա կանուտը խասնուն բազառ,  
դալալները թափուն են վըրէն, էնենց են անուն՝ կէս գընով գեղացուց անուն են,  
տանուն են, հիրանք կանյնուն են, թանգ ու կըրակ ծանխուն են քախկըցիքի վըրէն:  
Բան, բալա ջան... Բայց հանէչ ժամանակ գեղացու խաթրին կըբնօղ չէր հըլնուն.  
անբընքի տէրը էթուն էր, բազառը խօրօտ կանյնուն էր, հիր անբանքը ծանխուն էր,  
հիր փող ու փարէն դընուն էր հիր ջէբը, գալուն էր, կեր էր անուն հիր ճըժէրին: Էն  
գախ էլ դալալ կեր, բայց մըկավա մըման ըստիբօղական չէր. կուզիր՝ կըտիր  
դալալին, չիր ուզի՝ չիր տի:

Խա, մէ տանրի մեր խընամ Սիրունը Յերեվան բազառը կանուտ ա ծանխուն:  
Կանուտը սըրփըռտուն, պըսպըղցընուն, խօրօտ շանուն դանխի վըրէն. ջոջերը՝ մէ  
յան, պըստըգները՝ մէ յան: Դը պանգ ա՝ ջոջերը թանգ անսուն, պըստըկները՝  
հէժան: Մէ էրկօր վոր կանյնուն բազառը, կանուտի կէսը ծանխուն, բայց մէ օր էլ  
անուտուրը կանյնուն, համարա աննօղ չըլնուն: Մէ դալալ էթուն - գալուն, ուզուն  
Սիրունին խափա, ջոջ կանուտը շատ հէժան գընով ձեռից աննի: Բայց Սիրունը  
մէանիդ կընիկ չէ, չըխափնըվուն: Վեռչը, էս դալալը ուզուն Սիրունին կըբնի,  
անսուն՝ այ տընաչէն, խօրըտ գինը դըրէր էս կանուտիտ վըրէն, մէշու հէժըցըրա,  
վոր կանամ աննեն: Բայց էտի վի՞ր շան թուլէն էր, վոր Սիրունին բան անսեր:  
Սիրունն էլ վոնչ վերցուն, վոնչ դընուն, անսուն.

- Էս մանդըր կանուտի վըրէն էլ քօ՛ խօր գինն են դըրե, էտի հէժան ա, անրի  
էտի ան:

\*

56

Մեր բօստանը ջըրի, հէլա դուս, մէկ էլ թօփալ Անանը (ջոջ, պանալ կընիկ  
էր) փէդը ձեռին մօտկըցավ, անսավ.

- Բալա՛, դ՛ու վի՞ր տըղէն ես:

Ասի՛ Լիպարիտի: Զիշկաց ես յան, էն յան, տեսավ՝ մանթ չըկա, գ՛օխտուկ  
ւսավ.

- Ներվային եմ, մանթ չեմ ճանշում:

Ինչօր վոր մէ հուրիշն էլ էտի լըսեր, հիրա անընին թանն կուռթեր:

\*

57

Գարեյ Սօնիկը միյնակ կընիկ էր: Երկու կօվ ուներ, ըտոնք կըթում էր, յօլա էր  
էթում: Սէ օր հարեվները տէնում են՝ էտի դ՛ըռները փագեց, բալնըսները դ՛ըրեց ջէբը  
ու էթում ա: Զարեվները խառցընում են.

- Սօնի՛կ, էտ դո՞ր ես էթում:

Սօնիկը քըթի տակը խընդմընդում, անում.

- Քանուս տըղէն Ռուսաստանա էկե Զերեվան, ընծի մէ անսօվ կանչե հիրանց  
տունը:

Զարեվներն անում են.

- Բը քօ կօվերն ի՞նչ ես անրե:

Անում.

- Ի՞նչ պըտի անի: Սէ անսըվա կեր դ՛ըրեր եմ դէմըները. թօ ուտեն, մինչեվ  
գ՛ըքամ:

Ինչօր անասունները շատ են գիդում՝ օրական ինչքան ուտեն, վոր մէ ամիս  
խերքա:

Մըկա մէկը վոր տակրի կերը չափօվ չըտակում, չըխիջ չանում ու կանօղա  
ծ՛ըմեռը չըխանա գ՛ըլօխ, անում են՝ խօ Գարեյ Սօնիկը չե՞ս:

\*

58

Սակօմը բանի նըման չէ, տակարը չուտում, ըտու խըմար էլ շատ գախ  
վառում են, ըսկի դաշտից չեն էլ հիչըցընում: Սէ օր քանվանցիք տէնում են՝ Մըկեն  
սակօմը բառցե սէլը, սանրից հիշում: Անում են.

- Այ Մըկէ, էտ սակօմը տանում ես՝ ի՞նչ անես, ախար տակարը էտի  
չուտում:

Մըկէն հիրան – հիրան խընդընդունում, գըլթիկ ա տալում ու անում.

- Էտի ձե՛ր տալարը սալում չուտում, իմ տալարը ուտում:

Քան վանցիք շիվարում են, գիդում են՝ Մըկէն ցընդե: Բայց Մըկէն հիր էշն ա քըշում, համօզում, վոր հիր կօվերը սալումը լավ էլ ուտում են:

- Ժօղօվուռք , - անում ա , - դուք ախար ֆանդը չէք գիդում: Յես իմ կօվերի հանշկերին կանանչ անոց են դընում, ըտոնցը խափում են, սալումը կանանչ խոտի տեղ են հընցըրընում:

Էտ օրվընէ քան վանցիք վոր տէնում են՝ մէկը սալում ա տանում, անում են.

- Կանանչ անոց ճանթե՞ր ես:

\*

59

Վըզօօն Յերեվան սօրվում էր: Յըմէն շափաթ օր գեղ էր գալում. համ կարօղում էր, համ էլ բան ու ման, փող էր տանում: Սէ դան էլ ձըմըռա կիսին գալում, խօրն անում՝ պըտի կանոտօլի խորը բացեն, դասախօսիս մէշու կանոտօլ տանեն: Խէրը (օղօրմի հիրանը, լավ մանթ էր) անում՝ ձըմըռա կիսին խոր չեն բացի, կանոտօլը սըռը<sup>4</sup> կըտանա: Վըզօօն շատ ա զօռում, անում.

- Յես խորը էնենց կըբացեն - կըփագեն, վոր կանոտօլին բան չըլմի: Բը ի՞նչ անեն, դասախօսը կանոտօլ ա ուզում:

Խէրը էլ ի՞նչ անա, թօղում, վոր բացա: Վըզօօս մըղնում խորը, սանղ ջոչ կանոտօլները ջօկում, լըցում մէշօքները, պըստըզները թօղում: Խէրը հիշկում խորի մէջը, տէնում կանոտօլի գըլխի գալուկը, անում.

- Սըռը մըղներ խոր՝ հավէլի լավ չէ՞ր. սըռը գօնէ խավսար ա տանում, ջոչ ու պըստիկ չըխառցընում:

\*

60

Այ քօ խօքուն մատաղ, հընչի վորն անում՝ մանթ բան ու գոռօից ըսկի պըտի հանշկ չըբանա... Չէ~, անխշատելը միշտ էլ պէտկ ա, բայց մանթ պըտի հիր անբըլուց էլ բան խասկընա, անսենք՝ տեղը վոր գա՝ քէֆ – ուրախութուն էլ անա, թէ վոր կանա՝ լավ – լավ տեղեր էթա ֆըռա գա, պարապ գախ հընգեր - բարեգմի խէտ մէ բանօվ ժըղլի, բը ի՞մալ ես անում... Թէ չէ հանշկըտ թառթում ես՝ մէկէլ տէնում ես՝ ջօջըցար, բայց բան չըխասկըցար, հէքուց մէկէլ օր էլ «Բարի հայրիկ»

պըտի յերթեն... Ասուկըս էն ա, վոր մանթ համ պըտի լավ անխշատա, համ էլ պըտի լավ անբրի... Բայց հանգըճիտ օղ անրա՝ էտ լավ անբրելը հընդանիքից դուս յա հընդանիքի վընասին պըտի չըլնի, թէ չէ էտի անթէն գըլնի աննանուսութուն: Խա, մանթըս անսըղալական չէ, կանոզա մեգ - մէկ էլ հիր հաճույքի խըմար վընասի ունթի, բայց պըտի գախին կանս սըղալ ճանփից յետ դաննա:

Մեր Առշավիլի Վազգէնին գիդաս. ջանլէ գախ համ հինքը, համ հիր հընգերները խաղալու խետ շատ սերին: Ձըմեռը վոր խօսանա գալուկ ին հըլնում, օրը մէկի տունը ժամերով նըստում ին ու նանդի, դօմինօ յա թուխտ ին խաղում, խաց ուտելն էլ էր մըտըները էթում: Էնենց էր հըլնում՝ հառավնէ էթում ին խաղալու, գըշերա կիսին նոր տուն ին գալում:

Մէ օր էլ Վազգէնենց տունն են հավքըվուկ հըլնում: Թէ իմալ հըլնում՝ Վազգէնը Պանյինին ասում՝ արի մանջօվ նանդի խաղանք. վորը կըրվի՝ մէ անքլօր բէրա, մօթենք ուտենք: Նանդին դընում են, նըստում են, սանղ բօլըրում են ըտոնց կող ու կուշտը, Առշավիլն էլ ա գալում, կանյում հիշկում: Ըստոնք ըսկըսում են գանթանլէ: Վազգէնը մէ անքլօր կըրվում: Մէկ էլ են խաղում, Վազգէնը էլի յա կըրվում: Պանյինի վողները խաղ են անում, բայց Վազգէնը հիրանը ուտում. խօ անքլօրների ցավը չէր, խօր ու հընգերների դէմն էր անօթով հըլնում: Ծանրը կըղրում՝ ասում՝ արի մէ քանլան յէլ խաղանք: Վոր էտ էլ ա կըրվում, Առշավիլն ասում.

- Տըղա ջան, մերըտ երկու անքլօրն անթէն բըմբըլէ, յեռօթի վիզն էլ մըկա կըգանա, բայց թէ ուզում ես էլի խաղաս, իմալ քանլում են - բըռնում են, պըտի մէ տանը – տըսընխինգ խատ ճուտ աննես, ջօջըցընես, նոր անխային նըստես նանդու դէնը...

Ասում են օրիկ, էս օրիկ՝ Վազգէնը էլ երկու անքլօրից հավել չըկըրվէ:

\*

61

Կըռօզի Սանդօն էթում սանատօրյա, կընգան էլ քանխում՝ հանգառօ հիրա գլխու գործեր չըբըռնա. թէ բան ա՝ աննէլու բան հըլնի, հիրանը խառցընա, նոր աննի: Ասում ու էթում:

Մէ ժուկ հընսնում, Սանդօն սանատօրյա մէ պանիկա յա ըստանում: Ուրախ – ուրախ էթում բէրում, ծանօթներին էլ կանչում, գիդում կընիկը խըմիշկ ու քուֆտան յա հօղըրկէ. պանդաստվում են՝ քէֆ անեն: Վըռազ - վըռազ պանիկէն բացում են, տէնում են՝ շէշման կանտօլ ա՝ վըրէն էլ մէ նանակ՝ մէչը գըրուկ

«Սանդո, թէ ես կանոսօլը խավնում ես, սերմի խըմար աննենք: Սէկ էլ անսա՝ իշքան աննենք: Ես կանոսօլն էլ թէ կուզես՝ էփա կէ, թէ չէ՝ յետ հողըրկա, թօ գա»:

\*

62

Տօ ունուդ ջան, հընչի հըմէն մանթ մէ՞կ ա: Մանթ կան՝ կէյրըթօվ ա, հիր գոռօին անրի յա, մանթ էլ կան՝ դինջ ա, անխշարքն անվիրի՝ ըսկի հիրա պէտկըն էլ չէ: Էտենց մեր գեղի Տիփօյ Յարուքն էր: Տընաշէնը ջան չէր անում հիրանն էլ քօրէր: Ուրեն, էսի նըստուկ ճանչ ա ուտում՝ սուլբիկը թեքվում, ճանչն ըսկըսում չըռչըռալ վըրէն: Փօխանակ սուլբիկը դըզա, կընգան ձէն ա տանլում.

- Սիրո՛ւն, ճանչը թափում... Թափում վըրէս...

Ասում՝ մէ դան էսի իշին խէծուկ էթում, մէ շուն գալում, թանլում ըստու շըվըրի փոխկը բըռնում: Էսի ջան չանում՝ վոտօվ գանա, էտ շանը խըրկա. շունը ըտու շըվարը գըզգըզում, վըրէն սեվ ա բէրում:

Սէ օր էլ էս Յարուքն ու հիր անխաօր կընիկ Մանրքարիդը ջաղաչը ցօրեն են տանում, վոր անխօեն: Ցօրենը լըցում են գուռը, էս Յարուքը վոնները փըռում, պանրկում: Մանրքարիդը անում.

- Յեխպար, վոններըտ քաշա, մըկա սանդուքարը գըքա, վոններիտ վըրէն գըլնի:

- Վոններըս դո՛ր, սանդուքարը դո՛ր , - ճէվըցընում Յարուքը, ինչա թէ հիրանը նեղութուն չիտա՝ մէշու վոնները յետ քաշա:

Համ էլ սանդուքարը գալում, հըլնում ըստու վոնների վըրէն: Դինջ - դինջ ձէն ա տանլում.

- Մանրքարիդ, ահա, սանդուքարը էկավ ...

Բայց մէկ ա, էլի վոնները յետ չըքաշում:

\*

63

Հառէչ վոր կօլխօզ էր, սօվխօզ էր, հըմընօվ հիրար խէտ ինք անխշատում: Դըժվարին՝ դըժվար էր, չեն անում՝ հէշտ էր, բայց վոր անսել – խօսալը, խանանք - չանանքը կանր, ինչօր էտքան չընեղվինք, օրըն էլ էր շուտ մըթնում: Էն գախ

սըռտըներըս էլ ուրախ էր, անխառն Լավ ու վատից խաբար չիմք: Համ էլ ջանել իմք:

Ամընեց էթում իմք քաղ: Սանբախտան լուսուն հավքըվում իմք էտա ձեր Սեփոյ մուրուսը, գըռուզավիկը գալում էր, հըլնում իմք կուզովն ու էթում իմք սան, Ուշթանփան, Հոխոյ դոշերը յա Չըռի ձոր, Բանդի ձոր, վեռչը... Վոր օրը՝ դոր կանսին: Խետըներըս մեր պանջկը տանում իմք, բը ի՞նչալ. կեսօրին ընդե պերերիվ իմք անում, մեր խացն ուտում իմք, գերընդիքը ծեծում իմք, մեշու դիմջընում իմք, էլի հըլնում իմք մեր գոռծին: Դը վիր տունն ինչ կանր՝ էտ էր բերում, անսենք՝ Լավաշ էր, պանիր էր, խաշուկ ձու յեր, սոխ էր, ժանժիկ էր, պանադօր էր, խիյար էր... Թե վոր մեկի տունն էլ անիթ էր հըլնում, հանչակուսանք էր բերում. էտի անթեն քուֆտան յեր, խաշլամա, խօրօված էր, խըմիշկ էր... Անօթի չիմք մընում, հիրուր խետ Լավ էլ ուտում իմք, կըշտընում իմք:

Սե հառավոտ էլ Սեփոյ մուրուսը էտենց հավքըվեր իմք, հիշկում իմք գըռուզավիկին, մեկել տեսանք Բակունցը (էտի հիրա հավելի անունն էր. իսկականը չեն գիդում) էրկու ծանդըր վեշ ձեռներին, ճըգըռկտալեն էկավ: Վեշերը դըրեց գետին, քըռտինքը սըռփեց, ուրախ - զըվառթ անավ.

- Հերեվան անխաօրըս տըղա յա ծընվե, հանչակուսանք պըտի անեն:

Սենք էլ ուրխըցանք, անսինք՝ հանչկըտ լուս հըլնի, խօրօվ - մօրօվ ջօշընա, հերկեն անրեվ հըլնի: Էս Ջանշօն անավ՝ քանի անփտօն չէկե, յես անրաղ ու խաշուկ ձու յեն բերե, բերեք մե - մե բաժակ վերցենք, Բակունցին շընախավորենք: Բօխճեն բացեց. անրաղ էր, մեկել խաց ու պանիր, ձու չըկեր: Էտի կանըրժըռավ, գոյն տըվեց - գոյն անավ, մեզի անավ՝ կանյեք գալում են, ու թափ - թափ գընաց հիր տան յանը: Գըռուզավիկն էկավ, անսինք՝ կանյի թօ Ջանշօն գա: Սեկել Ջանշօյ տան յանից բօռքըռոցի ձեն էկավ: Վազանք էտ յան, տենանք՝ մանլի կընանիքը Ջանշօյը քաշքըռնում են: Հարեվնի կընիգն էլ ճըչում.

- Գըլօխըտ թաղեն, անլան, գըլօխըտ թաղեն, ընգնե ի՞նչ էս ուզում: Յես իմ խըմար կըզեր ի, կըրանթից ջուր ի վերցում, հընչի՞ էկար ըսկըսիր գօմփերօվ տալ գըլխիս, յես քե ի՞նչ ձու տամ...

Դու մի՞ անսա, ըտու վըրեն Ջանշօյ կընգա խալաթից էր, Ջանշօն գիցեր էր՝ հիր կընիգն ա, ու յեռսոտ - յեռսոտ Լավ դըմսըկեր էր, խետն էլ անտր էր.

- Հընչի՞ ձու չիր դըրե, հընչի՞ ձու չիր դըրե...

Անջախ ըտոնցը խախընդըրիմք, Ջանշօյը ձեռըներից անանք, մեշօլ թըրիմք - մըրիմք, գացիմք անփտօն: Ափտօյ կուզովը հա՞ թանզըրիմք, ծըղզացիմք, թանզըրիմք, ծըղզացիմք, չում տեղ խասանք: Սեգն անավ՝ անված խերն անա՝



շատ ծրղզացիք: Ասինք՝ բ՛ան էլ չըկա, հեսօր պըտի ուրխընանք: Քաղն ըսկըսինք, բ՛այց հուրիշ օրվընէ շուտ նըստանք խաց ուտէլու: Դ՛ն ստըղունները խօրօտ փըռինք, անէք մէկը հիր բ՛էրուկը խանեց շա՛րեց, անսինք՝ Բակունց, դը քօ բօխճէքը բ՛աց: Էս էլ մեր մըջի ջանէլին անսավ:

- Ումուդ ջան, լը բ՛աց՝ տէնանք խանում – խաթունըս ի՞նչ ա մե պանտիվ անրե:

Ըսկըսինք թուքըներըս կուլ տալ, էս տըղէն էլ բօխճէն բ՛ացեց, տանրավ – բ՛էրեց՝ անսավ:

- Չո՛ր ճ՛ավար ա... Էրէվում՝ հեսօր չըլն պըտի էփենք...

- Վայ – վայ, ի՞մալ թէ, լը տու դէս , - Բակունցը խառվավ հիրար, բօխճէքը քաշեց դ՛ենը, ըսկըսեց տօբրակ տօբրըկի հիդվից խանել. մէկի մէջը բ՛ըրինձ էր, մէկի մէջը՝ լօբի, գարուխ, էտենց՝ տան անտուտկ...

Մըկա մէ ծըճաղ ա մըտե մեզի, մէ ծըճաղ ա մըտե... Մէզն էն յանանց անսավ՝ իշտաններիտ քացաղ. լավ հէլավ, բը վոր անսում եմ՝ շատ մի ծրղզացէ՞ք: Դ՛ըրինք չըլըսալու: Բ՛այց Բակունցը շատ նեխսըռտավ, թըթվավ նըստավ: Դը պանզ էր, վէշերը խառներ էր... Տէսանք, վոր էտենց էր, խօստացանք, վոր հիրկըվանը դո՛ւզը կէթանք հիրանց տունը, քէֆ կանենք: Նոր խեխճ մանթի բէյնը բ՛ասվավ, ծըճաղ էկավ հիրեսը...

Ճիշտ ա, հէքսի հառավոտ մէշու խումար ինք, բ՛այց ուժըներըս տեղըն էր, քաղ անէլուց էտքան էլ չընեղվանք. լը վոր նըստանք խաց ուտէլու, մէկը յերքեց էլ...

\*

64

Մէ կօլխօզանխակա ունինք, Կանոյան էր անգգանունը: Շատ անշխատօղ, հիրա գ՛ոռժին անրի, կէյրըթօվ մանթ էր: Մէ բ՛ան վոր պըտի հեսօր անէր, չէր թօղի հէքուցան: Մէ դան էս Կանոյանը հիր պանդավատօվ վըռազ տեղ ա էթում, մէկէլ անֆտոյ անկը թօղում: Շօֆերն անֆտօն կանըցընում, անսում՝ անկը թօղե, պըտի փօխեն: Կանոյանն անսում՝ չէ՛, էթանք, գ՛անք, նոր փօխա:

\*

65

Ունձուդ ջան, ըսկի չեմ սիրե, վոր մանթ ան ռիթից ա օքտըվում. շատ գախ էտի ինչօր գօղութունի նըման մե բ՛ան հըլնի: Նեղի մանթին թե կանում ես՝ օքտա, թե չե...

Սե նեղի տանի կընամիքը էթում ին, կօլխօզի դ՛աշտից գօխտուկ խոտ ին բ՛երում, տանում ին հիրանց տանվար - մանլին, վոր ըտոնք մե կերպ յօլա էին, չըխատին: Կօլխօզ նանխակեն խաբար ա հըլնում, էթում պանխկըվում խոտերի տակը: Չըմա մե կընիկ գալում գօխտուկ խոտ տանելու, ես նանխակեն ըտում բ՛ըռըրըրում, պանչ - պըռօշտի՝ իմալ վոր պետկըն ա, յետօ էլ խոտը բ՛անցըրըրում, դ՛ընում շըլանկը, ճանվիու յա դ՛ընում:

Սե օր էլ Մանրըրիդն ա էթում, էտենց խոտ բ՛երում: Չէքսի հառավոտ էսի ռաստ ա գալում Մանրօյը, կըսան յեն անում, տանվար - մանլից են խօսում, էս Մանրըրիդն անում.

- Չէրեկ հիրկըվանը կօլխօզի դ՛աշտից խոտ են բ՛երե, խօ խոտ չե, խօ խոտ չե, տանվարը են ուտելն ա ուտում:

էտ Մանրօն յամանն ա հըլնում, անում.

- Խոտը հեշտ շըլկի՞ր:

Բ՛այց դը Մանրըրիդն էլ մե անմիտ չըլնում, անում.

- Խա, քօ նըման:

Ըտուց յետօ էլ վոշ մեկը հիր խոտի էթալը անրեվի հիրես չըխանում, բ՛այց դը էթողն էլի էթում էր: Ծիշտ ա՝ գիղում ին, վոր կանրօղա նանխակին ռաստ գին, բ՛այց դը ի՞նչ անին, նեղի տանի յեր, համ էլ դ՛առտակ պանչ - պըռօշտու մե՛չն ինչ կեր...

\*

66

Կօլխօզնանխակա Կանրօյանը հիրկըվա յանը հիրա վիլխօզ էթում սանրը, վոր տենա՝ խօ կօլխօզի խոտը չեն գօղնում: Խասնում են խոտի տեղը, տենում են՝ մե կօլոն խոտ էթում: Նանխակեն շօֆերին անում.

- Այ տըղա, էս վօզերը հիրանց - հիրանց էթում են, լը քըշա խասի:

Քըշում են, խոտի կօլոնի դ՛ենը կըդրում են, տենում են՝ մե մանթ խոտը բ՛անցե իշին, տանում ա: Մըղըրբ ա հըլնում, լավ չէրեվում, թե իշատերը վորն ա: Կանրօյանը շօֆերին խառըրում՝ էտի վո՞րն ա:

- Ադիբեգի անխպերն ա, - անում շօֆերը:

- Ադիբե՞զը վորն ա, - խառըրում ա նանխակեն:

- Ի՛ն անխպերն ա, - անում շօֆերը:

Սովետի գախ սովխօզի շօֆերները վոր լեվի գոռօ ին անում, դերեկտորին անլօզ ին տանում, թե չէ չեր թողի:

Մե օր ռայկօմի քառտուղարը գալում սովխօզի գըրասենյակ, դերեկտորի խետ, ձեռները հիդվըները դըրուկ, միջանցքը էթում են, գալում են, կրսան յեն անում: Մե շօֆեր, վոր հիր անֆտոյօվ Բաքու լեվի կանտօլ էր տանրե էկե, հիդվանց գօխտուկ մօտկընում, անլօզը դընում դերեկտորի հափը: Էս դերեկտօրը խօռնըռկըտում, բայց դը ի՞նչ կանա՝ անա. հարմըրցընում, փողը դընում ջեբը:

Հընգերներն էս շօֆերին անում են՝ հուրիշ գախ չըկե՞ր, պանտադի՞ր էր, վոր մըկա տանիր փողը տիր: Էս շօֆերն անում.

- Ըստուց լավ գախ չըկեր. փողը մէշու պակաս էր. վոր հիրանը միյնակ բըռնըցընի տի, կանոզա չըվեռցեր, վըրես բօռբըռեր: Մըկա տըվի, վոր չըկաներ ձէն խաներ:

Կօլխօզը թալնելու խըմար անխակին դադի յեն տանում: Նանխակեն հույսը դընում ռայկօմի քառտուղարի վըրեն, վոր հիրանը պըտի դադաստանից փըրգա, բայց քառտուղարը դադի գախ ծըպտուն չըխանում՝ վոնչ լըմ, վոնչ ժըմ:

Էս անխակին քանի տանրի տանում են, վեռչն էլ խառցընում են, թե ի՞նչ կանա անա: Նանխակեն հըլնում կանյում, դանոնում քառտուղարի յանը, մատըն էլ թափ տանլօվ անում.

- Հընգեր քառտուղար, վիլխօվըս էնքան բան են կըրե ձեր տունը, վոր մըկա անշօֆեր թողեն, հիրան – հիրան գըքա քօ դուռը ... Խա, կանես քօ գարաժը, չուրքի գամ:

Մանթ կան՝ ըսկի չուզա մէկի վըրեն դանա, մե բաժակ մէկի ձեռը ջուր տա: Էտենց մանթը վի՞րն ա պետկ: Բը դու քեզի մէշու նեղութուն չիտա՞ս, վոր

հարեվմիտ, բ'արեգմիդ, տօ հըմա լավ՝ խըլղին մէ օքուդ տաս: Բը էլ հընչե՞ս ծընվե, անխշարք էկե՝ միյնան կ ուտելու խըմա՞ր: Էտա շունն ու կանտուն էլ սանդ օրը ուտուն են ու անրեվի տան կը վոդները փըռում են, դինջ - դինջ պանրկում են. վոնչ շունն ա ջան անում՝ խաչա, վոնչ էլ կանդի լայեղին ա՝ մուկ բըռնա: Բը մանթը ըտոնցից չըտանրբերվի՞... Է~է~է, ի՞նչ ասեն... Մանթի մըտկին պըտի տեղ հըլնի, համ էլ մանթ մէկին օքուդ տանլուց պըտի հիրանը լավ ըզգա, սիռտը փառավորի, խօքին թեթըվնա, թէ չէ՝ սուք ա ...

Մեր գ'եղը Մանյօ անընավոր մէ կընիկ կեր. գ'ուղսօվէտը կանտարածու յեր: Վոր պէտկ էր հըլնում, հօղըրկում ին էս յան, էն յան, էթում էր տընընէրից մանթ էր կանչում գ'ուղսօվէտ: Վեռչը...

Մէ դանն անխակէն էս Մանյօը հօղըրկում բ'ուժարան, վոր բ'ըժըշկին մէ թուխտ տաննա տա, համ էլ անսում՝ մէկա Սերօժենց դըռնէրօվ էս էթում, էսա թուխտն էլ տու Սերօժին, հընցի: Էս Մանյօն շատ ա վըռթօվվում, անսում.

- Յա~ա, յես էտքան թէ՞վ ունեն, վոր էտ էլ տաննեն:

\*

70

Կօլխօզնանխակա Կանրօյանը հիր պանդավատի անֆտօյօվ էթում Յերէվան: Չարէնցավանա դիքը բ'անցըրնալու գ'ախ շօֆերը ռազգօն ա վեռցում, վոր թափօվ հըլնի, բ'այց մէ հուրիշ անֆտօ դ'ենըները կըդրում: Ըստոնց թափը կօդրում, հազիվ դիքը բ'անցըրնում են: Կանրօյանը շօֆերին խառցընում, թէ՛ ինչ հէլավ, հընչա էտենց հուշիկ էթում, շօֆերն անսում՝ անֆտօյ ռազգօնը կօդրավ, էլ չէթում: Կանրօյանն անսում.

- Բ'ան չըկա, դ'ու թափօվ քըշա, հէսա խասանք Յերէվան, ռազգօն կաննենք, կըփօխես:

\*

71

Շատ վախտ անմէք մանթ ուզում հիր գ'ոռծը հառէչ տաննա, չասում՝ հըմէն ինչ հիր գ'ախն ունի, կանյի՝ մէշու բանդ հըլնեն, հանլբանթ իմ յեռթըն էլ գ'ըքա: Էտենցութունօվ համ խըլղին ա խանգարում, համ էլ հիրա գ'ոռծըն ա յես հընգում:

Քանի մանթ համփետղ հըլնի, էնքան հիր գոռծղ մ չ կէթա: Չամ էլ մանթ պըտի կանա ջօկա՝ մըկա ինչ ա պէտկ մնել, յետօ՝ ինչ ...

Մէ տարի թէ իմալ հըլնում՝ Կուլմլա դաշտերը ուժեղ բերք ա հըլնում: Անան յաները բերքը վոր ըսկըսում են հավքել, Կուլմլա սօվխօզի դերէկտօրին քիթ սըրփէլու գախ չըլնում: Գիշեր - ցերէկ յա դաշտերն ա հըլնում, յա գըրասէյնակի հիր կան բինետըն ա հըլնում. դը մխշատօղները էթում են, գալում են, հիրանը գէկուցում են, հինքըն էլ կան ղքաղըրութում ա մնում: Մէ էտենց խառը գախ սօվխօզի կուռուխճին գալում դերէկտօրի կուշտը: Դերէկտօրը յեռախօսօվ ռայկօմի քառտուղարի խէտ էր խօսում, ձեռօվ խասկըցընում, թէ նըստի էտա մթօռին, չում պըռծընեն: Վոր պըռծում, էսխան դ մէ բըրիգադիր ա նեռս գալում, դերէկտօրին գանիթ մնում: Ըտուց յետօ մէ հուրիշ բըրիգադիր ա գալում, հաշվապան, ֆերմայ վարիչը, վեռչը... Էս կուռուխճին էլ հա ձըքտըվում, վոր դերէկտօրը հիրանը լըսա, դերէկտօրը ձեռօվ մնում, թէ՛ նըստի. գիդում, վոր էտի մէ սըթից բան պըտի մսա: Բայց կուռուխճին չըհամփերում, չուրքի դերէկտօրը դառնա հիր յանը, հըլնում կանյում, դերէկտօրի խէտ խօսօղին բըռթում էն յան, մսում.

- Չընգեր դերէկտօր, էտ բերքահավաքը իմալ էլ հըլնի՝ կան են, դու իմ ձիյան նալէրի հառցը լուծա, լըռիվ ման շած:

Դերէկտօրը չըգիդում՝ լմ թէ ծըղգա, մսում.

- Այ բիծան ջան, խօքոլտ ման տաղ, էս նեղ ման ջալին ձիյանըտ նալէրն ին կանրէվօր...

- Դը վոր կանրէվօր չեն, - մսում, - կէթամ ձին էտենց կըքըչեն, թօ վողները ման չեն չում չօքերը...

Ասում, դուռը շըրըխկըցընում ու էթում...

\*

72

Վեռչի մէ քանի տարիներին Սօվէտը լավ հէլավ, դէն չեն, յետօ էլի փըսըցավ: Բայց ըսկըզբի ժամանակները ժօղօվըռթին շատ էլ վընաս ա տըվէ... Բալէս, յես մխշըրքի վեր ու դիրը չեն կանա քընընեն, էտի ձեր բանն ա, իմ հայ – հայը գացե, վայ – վայն ա մանցե, բայց ինչ վոր իմ ջոչերից են լըսացե, էտի կանսեն:

Լը վոր կօլխօզ չըլնում, իմ պանպիկը շատ կօվ ու օխճար ա ունէնում: Ասում՝ վոր գոմի մէ ծիրից հիշկում իր, մէկէլ ծերը չէր էրէվում: Բայց վոր կօլխօզը գալում, էլ մեզի բան չեն թօղում, հավքում են, հըլնմեն տանում են: Մեր

անբեկակերպըն էլ շանտ վատընում: Մերըս կըպան դմէր, կանսեր՝ մէ օր յես էնենց եմ խիվընում՝ վըրես հալ չըլնում: Լանլում եմ, կօվի կանթ եմ ուզում, տանտիկըս անսում՝ չըկա, բալա ջան: Եսխան օխճըրի կանթ եմ ուզում, տանտիկըս մըխկըտում, անսում՝ էտ էլ չըկա, բալա ջան: Լանլում եմ, անսում եմ՝ տանտ, իշի կանթ է՞լ չըկա...

Այտենց անասված բան անրած: Բը դու գաս մէ անխիր կօվ, մէ սուրու օխճար քըշես տանես, չասե՞ս՝ մէ կըթան թօղենք, թօ էս տունը թացան հըլնի, ճըժի տէր եմ... Է՛, գեղացին ի՞նչ կանէր անէր, հանչկըները վախեցուկ էր: Կանէ՞ր չիտէր. դադ ու դադաստանօվ կըտանին: Բայց անսում՝ մանթ կէր՝ մէ խատ, էրկու խատ անասուն կանում պանխկըվընա, չիտա տանեն: Մեզի մէ մօրքուր հըլնում, շատ մէամիտ ա հըլնում: Վոր կըվըռտոցը հընգում, թէ անասունը տանում եմ կօլխօզ, ըստոնց տունը մէ հօռթիկ (անունն էլ՝ Բուռթէլ) տանում եմ, մանրաքը պանխկըվընում եմ: Կօլխօզի խները գալում եմ, անասունը խանում եմ, վոր տանէն, էս մօրքուրն անսում՝ Բուռթէլն էլ ընդէ յա: Էտ խներն անսում եմ՝ Բուռթէլը վորն ա, նոր մօրքուրիս տէքան կընիկն անսում՝ տըղի խէտ ա: Ըտոնք մէամըտում եմ, տանվարն անում եմ դէմըները, էթում եմ:

Ասում՝ էտա մեր հարեվան Աղաբէկենց տունըն էլ մէ հօռթիկ գոխտուկ տեղ պանխում եմ: Վոր հիրանց անասունը քըշում եմ, տանում եմ, ըստոնք դըռները պինդ փագում եմ, Աղաբէկի խէրը հօռթկան շուշուտ մօռթում: Վոր մօռթում պըռծում, անսում՝ անրի գըլնի մէ քանի կըտոր միս շըշեմ, կանխեմ թունդիրը, թօ հըլնի խօրօված՝ ճըժերը ուտեն: Աղաբէկն էլ էտ գախ թեթըվ տըղա հըլնում, խէրն ըտուն անսում՝ հէլի կանյնի դուռը, վոր մանթ գըքա՝ խագա, միսը թունդըրից խանեմ, պանխեմ... Մընում, հէնա պըտի շըշերը թունդըրից խանէն (էնենց էլ անուշ խօրօվածա խտտ ա հընգուկ հըլնում), մէկէլ Աղաբէկը խագում: Խէրը խառվում հիրար, շըշերը թունդըրա խանում, անոնում վագնում թալվէն: Հիշկում էս յան, էն յան՝ վորդէ պանխա, վորդէ չըպանխա, տէնում՝ կըվանոցը լիքը կու յա: Էտ շըշերը մըսօվ ճըխտում հըմա էտ կըվի մէչը: Քուռսին էլ քաշում եմ թունդըրա վըրէն, հուռուշիկ դուռը բացում եմ: Բացում եմ, տէնում եմ՝ Աղաբէկը հիր խըմար անխեռ - անխայի կանյուկ ա: Խէրն անսում՝ անյ տըղա, էտ հընչի՞ խագացիր: Ասում.

- Վան~, խագըս էկավ՝ խագացի, բը ի՞նչ անի...

Խեխճէրի վըրէն էտ էրկու կըտոր միսն էլ էտենց ա խարամ հըլնում...

Մէ տանրի Քանվանն ու Մանտունին գանին հիրար, սանքին մէ ռայօն, ռայկօմն էլ տանրան Մանտունի: Մէ բան հըլնում էր, անենք՝ ժողօլ էր, խօռտակցութուն էր, մերոնք էսխատ էթում ին Մանտունի:

Էտ տանրի մեր յաները անասունի ուժեղ անկում ա հըլնում, պըլանները չեն կանտարում: Ֆերմայ վարիչներին սանդին կանչում են Մանտունի ժողօլ: Մեր գեղից էթում են Չիչու Շանվօն ու Ափրամի Չայկազը: Ռայկօմի քառտուղարն հըլնում, հըմընին նախատում, էլ ինչ ասես՝ չասում, բայց սանդից շատ Սանրուխանի վօչխարաբուժական ֆերմայ անունն ա տանլում: Վեռչը վոր շատ ա հըլըշվօտում, ձեռը գանում սեղանին, անում.

- Օ՞վ ա Սանրուխանի վօչխարաբուժական ֆերմայի վարիչը, թող վօտքի կանգնի:

Էս Չայկազը դժողդըղալէն հըլնում կանյում: Ռայկօմի քառտուղարն հիշկում ըտու հիրսին, հավէլի յա կանդում, բօռում.

- Այ հընգեր, ինչո՞ւ ես ծիծաղում, անենաշատ անկումը ձեր ֆերմայում ա, չե՞ս անաչում, ինչո՞ւ ես ծիծաղում...

Էն յանից Չիչու Շանվօն չըդիմանում, փըռքըկում, անում.

- Չընգեր քառտուղար, էտի չըծըղում, հիրա դըրվացքն ա էտենց...

Չան էլ օղոռթից էտ Չայկազի մըռքըներն հիրուր վըրան չին գալում, էնենց ին, վոր հիշկում իր հիրսին՝ գիդում իր՝ ծըղում, բայց խօ չէր ծըղում:

\*

74

Քանվանն ռայկօմից ցերէկը գանգում են, գեղրանքից կօլխօզների պանտկօմներին կանչում են նիստի. խըմէլու հառցը պըտի լըսին: Քուզանջըղա քառտուղար Նանջանյան Առծօյն էլ են կանչում: Է՛, էս խեխճ Առծօն ի՞նչ աներ. ցերէկը նոր գանգում են, կանչում են նիստի, բայց հինքը հըմընօրա նըման հառավոտ անթէն մէ էրկու բաժակ թանէր էր, ի՞նչ հիմաներ՝ կըկանչին: Չըլնում, էտենց քէֆը լավ էթում նիստի: Սանդ պանտկօմները նըստում են, ռայկօմի քառտուղար Ծանդիկյանը յեռթօլ ըտոնցը խառցընում, թէ ի՞նչ են անում, վոր խըմէլու դէմն անեն: Անէք մէկը մէ բան անում: Յեռթը խասնում Առծօյն: Էսի մէ կերպ հըլնում կանյում, գըլօխը կանխ՝ անում.

- Վորդե խըմիշկ տէնում ենք, ընդե վօչընչացընում ենք:

Ծանդիկյանն անում.

- Չէսօր քանի՞ բաժակ ես վօչընչացըրե:

Կերսարըս խըմիշկի խէտ ըսկի սեր չունէր, բ'այց լավ մանթ էր, սանղ ռայօնը հիրանը ճանչուն ին ու հարգուն ին: Կանթըսվոր էր. հըմա պարապ էր հըլնուն, մէ բան պըտի աններ ձեռը, կանթեր: Ժողովուրթը հիրանը Գըրակետ Լէվոն ին անուն: Չունքի մըկա յէ վոր մէկը հա գիրքն անուն ձեռը, նըստուն, անուն են՝ գըլխըներիս հէլէ Գըրակետ Լէվոնը:

Սէ օր քախսօվէտի նախակէն զանգեց մեր տուն (ղը մանթիս հընգերն էր), անսավ.

- Վանիկ, խաբա՞ր ես՝ Քանվան մէ չըխըմօղ մանթ կէր, ըտուն էլ տարած դըրած թանգարանը:

Անսավ ու տըրուպկէն դըրեց: Էս Վանիկը հա տըվեց - անավ, տըվեց - անավ, գըլօխ չըխանեց, թէ էտ ինչ բնա էր:

Չիրկըվանը նոր խաբարն էկավ, վոր կերսարիս տըված թանգարանի դէրէկտօր:

Էս Լէվօյենց գոռօի տեղը մէ անճիկ հըլնուն, ըտու խէրը հըմէն տարի վոր մեղըր ա քաշուն, անճըկա խէտ դըրկուն ըտե, վոր հընգերներն ուտեն, անճըկան լավ հիշկան: Սէ օր էլ էս անճիկը մանթի յա էթուն, մանթի խէտ թըմուն Ռուսաստան: Ըտու տեղը թանվան անխշատօղ են ընթունուն: Սէ ժուկ հընսնուն, Լէվօն գալուն, յերեվի մըտկերի խէտ ա հըլնուն, էտ թանվան անճըկան անուն.

- Է՛, քուրիկ ջան, բը յե՞փ ես մէշու խօրըտ քաշուկ են լավ մեղըրից բէրուն՝ ուտենք:

Էս անճիկը շիվարուն՝ ի՞նչ մեղըր, ի՞նչ բան... Տէնուն՝ էս Լէվօն հիշկուն հիրա պանդասխանին, անուն.

- Իմ խէրը մեղըր չըքաշուն, կօվ ա մօռթուն: Գըլնի՞ միս բէրեն:



Են վատ տանրհներին մէ ջանել տըղա բանակա գալուն, Կանրանբաղ էլ ծանայուկ ա հըլնուն, դուզը էթուն քաղաքագըլխի կուշտը, անուն՝ ընծի մէ լավ գոռծ պըտի տաս. քե յէլ լավ գըլնի, ընծէլ:

Քաղաքագըլխի հիշկուն ըստուն, հիշկուն, անուն.

- Քանվան էս մէ լավ գոռծըն ա՝ յես եմ անուն, թէ ուզուն ես՝ անրի էս էլ տամ քեզի, յես թողեմ էթամ:

\*

78

Մանիսը բանվորին հազար դըրամ տանլուն, դըրկուն խանութը, վոր պանպիլօզ բերա: Անուն՝ ըզդաշուն էլ քեզի կանֆեռտ - մանֆեռտ կաննես: Բանվորը խանութից գալուն, անուն.

- Շէֆ ջան, կանֆեռտ անա, պանպիլօզին էլ փող չըմընաց:

\*

79

Կըռիվը վոր ըսկըսվուն, Քանվան մանթ են հավքուն, տանուն են Սէվան, տանլուն են բըլինդաժ փօրեկ, վոր վառժըվեն, նոր էթան կըռիվ: Ըստոնցը շատ են չարչըրուն, ըսկի խաց էլ չեն տանլուն, վոր վըրըները գօնէ հալ հըլնի, կանան բանեն: Էնենց ա հըլնուն, վոր հա~ազիվ հիրար են գալուն: Մէկէլ ռադյոն հայդընուն, թէ՛ ծանդըր կըռիվներից յետօ մերոնք հանձնած է՛ս, է՛ս, է՛ս քաղաքները. մէ տանը – տըսնըխինգ քախկի անուն հիրար հիդեվ ռեզուն: Եսի վոր լըսուն են, ախշատօղների մեչը Քանվան խանութի գօռծակատարն էլ ա հըլնուն՝ կերուկ – խըմուկ, ըսկի չախշատուկ մանթ, էսի մէ կերպ մէշկը դըզուն, ձեռի քըլունգը թանլուն էն յան, թեվօվ ճանկտի քըռտինքը սըռփուն, անուն.

- Բօլ ա, էլ չեն փօրուն, յես էլ ծանդըր անխշատանքից յետօ իմ անունից Քանվան ու Սէվանն եմ հանձնուն:

Սէ թափօվ հիմնարկի պետ մանյար ա բ՛երոււմ, տանլում դ՛այլիճի պանտերին նրկար անել: Դը էն գախ հիմնարկը ի՞նչ պըտի նրկարին՝ Մօսկըվայ Կըրեմլը, Լէնինի ճան անսելը, կօլխօզի դաշտերը, գ՛օռծարանների մուխը... վեռչը ...

Սէ քանօր յետօ էս մանյարը վոր նրկարում պըռծում, հիմնարկի պետը գալում թանյընում: Խավնում թէ չըխավնում՝ հինքը գիդա, խանում ըտու փողը տանլում. յանքան յէլ տանլում, գիդո՞ւմ ես: Մանյարը էտքանի հույս չունէր (դը էտի խօ նրկարիչ չէ՞ր. էն ա վոր կանում էր հուրիշի նկարին հիշկալօվ ըտու նըման մէ բան նրկարէր), հիրան – հիրան ուրխընում, մըտկի մէչն անում՝ կանյի էնենց անեն՝ մըդենն ըստու անզը, կեխծավորնամ, կանրօղա հուրիշ գոռօ էլ անսա՝ անրի անրա: Շունը տիրոջ դէնը ի՞մալ ա քօսին – մօսին հըլնում, պոչը հիրար տանլում. էտենց ծըռնըռվէլօվ՝ էտի հիմնարկի պետին անում.

- Շէֆ ջան, չէթա՞նք էտա ճանչարանը պերերիվ անենք, մէ բաժակ էլ բան կըխըմենք. ուզում են լավութունիտ տըլկից դուս գամ:

Դը էտ պանչտոնավոր մանքը խօ չէ՞ր հընգի ըտու խելքին՝ հըլնէր էթեր ճանչարան. էնի հըմընօր հիր նըման պանչտոնավորների խէտ ռէստօրան էր էթում: Ինչ վոր ճիշտն ա՝ ճիշտ ա. ըտոնց հիրար խէտ տեղ էթալը չէր սանգի, էն էլ դո՞ր՝ ճանչարան: Սէ խատ պետը էս մանյարին վոտից գըլօխ չափում, ձեռը տընգում Լէնինի նրկարի յանը, անում.

- Գընա էն քանչանլի գըլխարկը դըզա, մըկա գըլխից գընգի. ըտու խէտ էլ կէթաս ճանչարան...

Իմ անխպեր Գեմաֆնին տըսնըմէկ էրէխա հէլավ: Բայց անխպերըս էտքան պանչտոնի հէլավ, էտքան տեղ անչխատեց, լասա՝ մէկ օրան մէկ օր հիրա տունը մէ խարան կանպէկ մըտա՞վ... Չէ՛տ, բալա ջան, հիրա խալալ քըռտինքօվ հիր ճըժերին պանխեց, ջ՛օչըցըրեց, վոշ մէ բան պանկաս չըթօղեց, լավ – լավ դաստիրակեց, մանք դանջըրեց: Վորդէ յէլ անչխատեց, է՛ն պանտիվ - հարգանքը թօղեց, չում մըկա հիրա գըլխօվ - անրեվօվ են յեռքըվում: Գիդո՞ւմ ես՝ անխպերըս ինչ գըլօխ ուներ. հինքը գուղիըստուտի անաջին ըստալինյան թօշակառուն էր:

Իմ խէրը մէ հընգեր ուներ՝ խանութը գ՛օռծակատար էր: Էտի կընիկ ուներ, բայց հիրանցը ճիժ չէր հըլնում: Յերեվի ըտու խըմար էլ նեխսըռտէր ին. էնենց

ծ՛եռբ՛աց չիմ, է՛լի: Մէկ օր էտ մնա՞թը անխաօրըս նանխատում, թէ՛ էտքան տանրի լավ – լավ տեղեր ես անշխատե, հո՞ւրա քօ հարըստութունը: Ախպէրըս շատ ա վըռթօվվում, անսում.

- Իմ հարըստութունը իմ տըսնըմէկ ճըժերն են, բ՛այց դ՛ու հըմընից անխկատ ես, թէկուզ էտքան վոսկի ունես:

Խա՛ա, խօսկը վոր գ՛եր, անխպէրըս էլ հանշկ ու հիրես չեր հիշկի, դուզբեդուզ կանսեր: Հինքը վոր անթար մնա՞թ էր, ըսկի խառնախութուն չեր սիրի, մէկին էլ վոր պըտի նանխատեր, կանսեր՝ խառնախ...

Մէ տանրի Գեմաֆինին տանլում են Անզանքանդ կօխօզնանխակա. դը անխպէրըս քանի տե՛եղ նանխակա հէլավ: Վոշ մէկ վոնչ էրկու՝ գ՛ալում են, Գեմաֆինն անսում են, թէ կօխօզի պանակը գ՛օղութուն անում: Ախպէրըս ըստուզում, տէնում՝ ճիշտ վոր էտենց ա, ըտուն անշխատանքից անգատում: Էրկօր հընցընում, մինիստըրների սօվետի նանխակէն՝ Մանցակ Պանայանը (էտ էլ լավ մնա՞թ հէլէ), գ՛ալում Անզանքանդ: Էս պանակը ըտուն բ՛օղօքում, թէ Կանդվայանը էտենց ընծի անշխատանքից անգատե: Ախպէրըս բ՛ացադըրում, վոր գ՛օղութուն անրե: Էս Պանայանը Գեմաֆինին քաշում կըրադ, գ՛օխտուկ անսում՝ վոր էտ պանակին գ՛օղութունի խըմար անգատեր ես, էս թանգէն գ՛օղութուն չա՞նա. էնի գ՛օնէ հիր չափն անթէն գիդում էր...

\*

82

Իմալ Սօվետը բ՛ըլավ, ժօղօվումթը էլ յե՞փ են հիրանք հարգը յա թէ չէ գ՛ազի, լուսի վառձը տանում տանլում: Քանի խօքի գ՛եղի լէնք ու հերկէնքը հընգուկ՝ սան օր ըստու – ընդու դ՛ուռը տըփում են, հարգ ու վառձ են հավքում. լը մէկը չէթում, էն մէկէլն ա գ՛ալում: Ծիշտ ես անսում՝ վոր մենք վախտին էտ փողերը տանք, հիրանք չեն գ՛ա, բ՛այց դը մըկա ըստուն ենք սօրվե...

Մէ օր հարգ հավքօղ էրկու խօքի հընգում են տըմբէտում, էթում են խասնում են գ՛եղի ծերը՝ Սիրուշենց տունը: Հա ձէն են տանլում, դ՛ուս գ՛ալօղ չըլնում: Վեռչը ըտոնցից մէկը կանյում հանյանքը, մէկէլը էթում, տան դ՛ուռը բ՛անում, մըդնում նես: Դ՛ու մի՞ անսա՝ վոր ըտոնց հաշտը անպօլէլ էր, Սիրուշի խօրօտ – նըխշուն խառսը թեշտը բ՛երեր էր դ՛ըրեր էր ըտե, լօկընում էր. դը չէր ուզե օթադը լօկըներ, վոր ջ՛ուրը ընդէ չըթափեր: Էս մնա՞թը իմալ վոր դ՛ուռը բ՛անում մըդնում, խառսը խառվում հիրար. փօխանակ կըսկըվի, մէ շոր թանլա վըրէն, հըլնում բօյբօյ կանյում... Դը էտ մնա՞թն էլ ա շըշկըռվում, հանշկերը չըռում, բ՛երանը բ՛աց հիշկում: Իմալ վոր էս

խառնը ճըչում, էս մանթը հիրանը մէ կերպ թանլում դուս, քեփըլտալօվ խասնում հընգերին:

- Գան , - անում , - էտ իմչ խըրեղեն կընիկ էր... մանթի պըտի ըստու նըման կընիկ հըլնի: Վոր չէլավ կանյավ՝ շունչըս կըդրավ, հան շկերըս դուս թըռան, լիզուս կըպավ, քիչ էր մընում՝ ուշկըս էթեր ...

Յընգերն անում՝ բը հարգը: Էսի ըտու թեվից քաշում, անում.

- Այ ցավըտ տանեն, իմ հանշկին մըկա հա՞րգ ա գալում... Վոր ուզում էս գիդաս՝ մենք ըստոնցը մէ բան էլ տանլիք մանցինք. էն ինչ վոր տեսա՝ խօ ձըրի չէ՞ր...

\*

83

Անշիկը Քուզանջի յեթի տակ դեխծ ա ծանուն: Յեթը հիրար ուտում, անէքն հիրանը բօռում, թէ՛ ընծի դեխծ քաշա, ընծի ճանփու դի: Դը էն գախ պետական խանութ կեր, ըտե հըմէն ինչ բազառից հեժան էր, բայց քիչ էր, հըմընին չէր խասնում: Ժողովըթի ձեռն էլ փող հըլնում էր: Վեռչը...

Մէ կընիկ հիրա դեխծը անում, ուրախ – ուրախ էթում տուն, բայց մէշու յետօ հըլըշվօտուկ յետ ա դանում: Ժողովըթին էս յան, էն յան գըռըշտէլօվ, հիրանը ճըղէլօվ մէ կերպ խանքակըտուր խասնում Անշիկին, սետկօվ դեխծը դընում դան խըլին, անում.

- Յեխպար Անշիկ, յես էսի տանրա քաշի, խինգը կիլօ չէկավ, ըստե իրեք կիլօ յա:

Անշիկն անում.

- Է՛տ, Քո՛ւր ջան, կօ յես քաշեր ի, էլ դու հընչի՞ր քաշում:

\*

84

Պանպինը հիր հընգերից Ռուսաստանա մանակ ա ըստանում: Բացում, տէնում գըրուկ ա. «Ման ջան, մէ բօլ բուռթ են անե, բըմբըլէ բանց են անե...», ու էտենց հուրիշ բաներ: Վըռազ գըլխի յա հընգընում, վոր փօշտալօն մանագները խառնե: Վազնում հընգերի խօր տուն, տէնում՝ հընգերի մէրը մէ մանակ ձեռը դուռը նըստուկ ա: Գիվան էնենց ըզի խառցընում, թէ՛ տըղիցըտ մանա՞կ էկե: Մէրն անում.

- Խա՛, յես ըտու էսենց - էնենցը, լառ տե ի՞նչ ա գ՛ըրե էտ անամօթը:

Պան պինը անամակը վերցուն, կանթուն. «Գան, հընգեր են մօրըս փորը: Ըստե էնքան խօրօտ անխճիկ կան, օրը մեկի խէտ...», ու էտենց՝ հուրիշ բաներ...

\*

85

Պան պինը, Իշխանը, Վըզգօն ու Սան շը վօրօշուն են՝ էթան Շանյնի հախպուրը, ուտեն – խըմեն, քէֆ անեն: Ըտու հառչի օրը գալուն են Քանվան, բազառը ֆըռֆըռուն են, ինչ վոր պէտկ ա անունում են, անէք բանից մէ խինգը կիլօ: Սընուն ձըմէրուկը, էտ էլ բազառի էէն ծերն ա: Վէշերը վեռցուն են, վոր էթան ձըմէրկի յանը, Սան շը Իշխանին անսում.

- Յընչե՞ս թեվերըս թանլէլուն գալուն, մէ բան էլ դ՛ու վեռցա:

Իշխանն անսում՝ ի՞նչ վեռցեն: Սան շը մէ ջոճ վէշ ա նըշանց տանլում, անսում՝ էտի վեռցա: Իշխանը ճըզըռկըտալէն մէ կերպ էտ վէշը ճեվըցընում, վեռցուն, ու էթում են: Ձըմէրուկը թանգան յա գալուկ հըլնում, մէ քանի տեղ ֆըռուն են, վոր հըմընի լավը ջոկեն: Դոր էթում են՝ մէ ջանլ տըղա հիդվընէրից գալուն: Գիդում են՝ բան ծանխօղ ա: Վեռչը... Յէնա պըտի բազառից դուս գան, էտ տըղէն Իշխանին անսում.

- Յընգեր ջան, էտ վէշը վոր էտենց խըպառտ – խըպառտ տանում ես, էտի քո՞նն ա:

Էս Իշխանը վոտից գըլօխ ըտուն չափում, ձեռ աննէլօվ անսում.

- Չէ~, գոխօժէր են:

Էս տըղէն ջընջընօտում.

- Յան էլ գոխօժէր ես, բը ի՞նչ ես անրե , - անսում , - քէլա էթանք ծանխօղի կուշտը, թօ անսա, վոր էտի տըսնութ կիլօ վիշնի յա, յես մէշու հառէչ ի անրե: Գիդում ես յես քե չե՞մ ճանում, հառչըվա իմ պետըն ես, ձէն չի անում, անսի լը տէնամ չուր դոր պըտի տանես:

Յընգերները մէ կերպ Իշխանին համօզում են, վոր էտի իսկականից հիրանց վէշը չէ, տանլում են էտ տըղին, ճանփու դընում: Իշխանի հանշկն անունում Սան շին, տէնում՝ քաշվե կըրաղ ու փորխոց հըլնում, էնքան ա ծըղզացե, առսունքն հանշկերից էթում:

Սըկա վոր տըղէրքօվ հավքըվում են, Իշխանին անսում են՝ ի՞նչալ իր էն գանդի տըսնութ կիլօ վիշնին տանում, անսում.

- Լա՛վ, մի՛ ծանխկըցըրէք, տըսնութ չէր, ո՛ւր կիլօ գըլնէր:

Ծուռ Ավեդիսը սանդղորը Քանվանա մեջը ման էր գալում ու կանչում.

Չարէ՛ք լավ հըլնենք,  
 Չարէ՛ք յա՛ր հըլնենք,  
 Չարէ՛ք լավ հըլնենք,  
 Չարէ՛ք յա՛ր հըլնենք...

Սէկ էլ տէնում իր՝ մէ քանօր չէր երեկում. էթում էր Սէվան, յետօ էլի դ՛առնում էր, գալում էր: Կոր գացուկ էր հըլնում, ինչօր Քանվան մէ բ՛ան պանքէր, ինչօր սանդ հիշկին, թէ Ավեդիսը յե՛փ գըքա: Սէ օր էլ Ավեդիսին խառցընում են, թէ՛ հընչե՞ս էտքան էթում Սէվան, գալում: Ասում.

- էթում եմ Սէվան՝ Քանվան ա լանում, գալում եմ Քանվան՝ Սէվան ա լանում...

Առօն էնենց յավաշ էր խօսում, տընաշէնը չուրթի մէ բ՛ան խանում էր գըլօխ, մանթի կընուկ քըցում էր: Սէ օր, հիրանց դ՛ուռը նըստուկ, ճըտէրին կեր ա քըցում ու սում.

- Ծիիկ.... ծիիկ.... ծիիկ...

Սէ յանքան գախ էտ գոռծին ա հըլնում: Չարեվանը լըսում, ներվայնանում, էլ չըդիմանում, սում.

- Ա՛յ քօ տունը շինվի, մէշու շուշուտ ծիկ-ծիկ սա, էլի:

Առօն մէ ժամ յետօ սում.

- Յա~ա, շու~շուտ ս~սեմ, վոր կու~տը շուո՞ւտ պըռծի ...

Իմալ սում՝ թախտիցըտ փախնե~ս, բախտի՞ցըտ դոր կըփախնես:

Պահինն հառավոտ գալուն Յենջոյենց տուն, վոր հիրար խէտ էթան Յերեվան: Յենջոն մօրն անուն՝ բէ խաց ուտենք, էթանք: Մերն անուն՝ հերեկ լավ սըբաս են էփե, լըցեն, կերէք: Յենջոն յեռստուն, թէ՛ հառավոտ լուսով սըբաս ենք ուտուն: Էլ խաց չեն ուտուն, էտենց էթուն են Յերեվան: Յիրանց գոռօր վոր պըռօն են, անթէն հավէլի շատ են անօթցուկ հըլնուն, անուն են՝ մըղնենք էտա ճանչարանը, մէ կըտոր խաց ուտենք, նոր էթանք Քանվան: Մըղնուն են ճանչարան, Յենջոն Պահինին անուն:

- Գան, դու հընգի հառէչ, քախկըվորի դու լավ ես խօսուն:

Սօտկընուն են ճանչ տըվօղ կընգան, Պահինն անուն:

- Բարեկ ձեզ, ի՞նչ ունէք ուտելու:

Էս կընիգն անուն:

- Բարեկ, տըղաներ: Ձեզ համար շատ լավ սըպաս ունենք:

Յենջոն Պահինին բըթուն:

-Գան, էտ ի՞նչ ասուն:

- Ի՞նչ պըտի անսա, - ներվայնանուն Պահինը,- անուն՝ սըբաս ա:

- Ի՞նչ,- քիթ ու մըռուքը հիրար ա խառնուն Յենջոն,- անսա՛ կօ Սօփօյ սըբասից հազիվ ենք փախե, սըբասի խըմար Յերեվան՞ն հնք խասնուն...

Թօղուն են, յեռստուկ դուս են գալուն ու դուզը՝ Քանվան: Յենջոն անուն՝ էթանք մեր տուն, մըկա մեր սըբասը կերած – պըռօած. մերըս թանգան ճանչ էփուկ գըլնի: Պահինն անուն՝ դը դու կանես, վոր խաց տա, դու գեղավարի լավ ես խօսուն: Խասնուն են տուն, Յենջոյ մերն անուն:

- Դը անքէ, անքէ, բալէք ջան, սըբասը տան քըրրէր են:

\*

89

Մէ տան ըի Յեղազարը կանտօլ ա տան ըե Բաբու, յես ու անխճիկըս վախէնուն ենք գիշերը միյնան կըքնենք: Յըմէն հիրկըվան յես էթուն են խերանցըս, տանտիկիս՝ Շանքան անդէր, բերուն են մեր տուն, հառավոտ էլի տանուն են խօրըս տուն, նոր էթուն են գոռօի: Մէ օր էլ էտենց էկա, անա գացի մեր տունը, տէնամ դըռները փագ են: Փալասի տանկը հիշկացի՝ բալնիսը չըկա: Անթէն մըղըրբ ա, մուքը հէսա գընգընի, իմ անխճիկը դըռները փագե, բալնիսն էլ դըրե ջէրը, գացե քըվորըս տունը, լը չըկա: Մենք էտենց դուռը շիվար կանյէր ենք: Ի՞մալ կըկանդեմ. ինչ ասես՝ վոր չեն անուն, հիշկուն են, վոր անխճիկը գա, բըռնեն մէ լավ տըփեն: Ընձի

– ընծի մըտկիս մէջն անսուն եմ՝ ես ջոջ կընիկը մըկա կըմըռսի, կըխիվըննա, յես խօրըս ի՞նչ պանդասխան տամ: Մէկէլ տանիկս անսավ:

- Քա՛, լաո՛ո, մըկա լավ ա, լուսուդեմին սըռը մեզի կըտանա:

Խերախօրուկը գիդում էր՝ չուր լուս պըտի դուսը մընինք:

\*

90

Հառէջ ժամանակ մեր գեղից իշօվ ին էթում Քեղառթ: Էտա սանրօվ հըլնում ին, էթում ին, էթում ին, գըլխըվըրում ին դու՛ուզը Քեղառթա վըրէն:

Սէ տանի յես ու Քընանը տըղին էտենց տանրանք Քեղառթ կընքէլու: Մեր թուխ իշօվ ինք էթում: Խօրօխաօրըս խառս ժենիկն էլ էր մեր խէտ. էտի թանգան խառս էր, մեզի անսին՝ տանրէք, խէտըներըս ֆըռըցըրէք, բ՛էրէք, թօ բէյնը մէշու բ՛ասվի:

Հառավոտ շուտ տընէն հէլանք, կէսօրնէ յետ խասանք Քեղառթ: Յես ու Քընանը տըղին անռանք, մըտանք վանքը, ժենիկին անսինք՝ դու մանց իշի կուշտը, չուրքի պըռծենք, գանք: Լավ էր՝ մեր հարեվան Շանվառը ըտէ յեր, հիրանն էլ բըռնինք քավոր, տէրդէրը ըսկըսեց կընունք անցելը: Հէնա պըտի պըռծընէր, մէկէլ ժենիկը կանըրժըռուկ, խանքակըտուր էկավ, հանգըճիս փըսփըսաց, թէ՛ Օֆիկ, էշը կուրավ: Է՛, ի՞նչ անինք, խօ կընունքը կիսատ չի՞նք թօղի: ժենիկին անսինք՝ գընա դու իշին ման անի, չում մենք գանք: Տէրդէրը հըմէն ինչ տեղը տեղին անրավ, պըռծավ, անփալ – թափալ հէլանք իշին ման գալու: Մըկա խառվէր ենք հիրար, վազնում ենք էս յան, վազնում ենք էն յան, վո՛որդէ ման ենք գալում՝ էշը չըկա յու չըկա: Սըռտըներըս հէլէ գիս, դաննակ զանես՝ մէ կանթ անրուն չիգա. էթանք տուն՝ խօրըս ի՞նչ պանդասխան պըտի տանք. էն գախ էշը տան խըմար մըկավա անֆտօյց թանգ էր: Վոնչ էլ էն ժենիկն էր էրէվում. գօնէ մէ խաբար բ՛էրէր: Շատ վոր ման էկանք, վանքից ցածըր մէ տեղ կանր, էթանք, տէնանք՝ էս ժենիկը մէ հէրկէն շըրդօվ հօրուկուկ սիֆտանկ էշ տըվէ դէմը, բըռթում, վոր նանդըվնէրօվ խանա վիրեվ, բ՛էրա վանքի հանյանքը, էտ էշն էլ կանցէ, հիրուր չըգալում: Լը մենք չինք խասէ ժենիկին, մէկէլ էն յանից մէ մանտունէցի բօռաց:

- Իդա իշուց ի՞նչ կուզիս:

Վազնէլօվ խասանք ժենիկին, անսուն ենք՝ թող ըտուն, էտի մեր էշը չէ, մեր էշը սեվ ա, սիֆտանկ չէ: Էս ժենիկը չըհամօզվում, գիվան մեր խէտ խառսնութուն անում, բանցըր չըխօսում, փըսփըսալօվ անսավ:



- Էսի մեր էշն ա, անրեվի տանկ սիֆտըկե:

Էն մանտունեցին էլ խասավ, թանկեց շըրդից ըսկըսեց քաշել: Էտենց հիրուր ըսկըսին քաշքըռնել, ժողովուրթ հավքըվավ... Մէկէլ տենանք՝ էն յանից մեր էշը զըռալէն գալուն ա: Նոր մանտունեցին կանցավ ժենիկի ձեռից հիր էշն աններ:

\*

91

Մէ էրկու տանրի հառէջ Այրիվանքա դաշտերը Յերեվնա մէ քանի մանթ ին էկե, ըստե - ընդե փօրուն ին, խին ու մին բան ին ման գալուն: Գըլներ էրկու անիս էտ բանին ին, գեղացիքի խտ էլ անթէն լավ տես ու ծանօթ ին: Ըտոնց մէշը մէ ջանէլ տըղա կեր, շուշուտ անօթնուն էր: Մէկ էլ կըտենիր՝ կըքըցեր խալվաթ ու կըվազներ գեղ: Անթէն գիղուն էր, թէ վոր տընից բանակային կան, օրը մէ էտենց տուն կընըդներ ու կանսեր:

-Աստըված պանխա ձեր բանակայինին, յես էլ ընդու թայը տըղա յեմ, հիրա խաթրին մէ կըտոր խաց տըվէք՝ ուտեն, ախար անօթի մեռա:

Դը պանզ ա՝ մեր յանի ժողովուրթը իմալ կընթունին հիրանց տունը մըտուկ օտարականին. մանավանդ անթէն ճանշուն ին: Յըմէն դան էլ, վիր տունը էտի հըլներ, կըբերին, էտ տըղին կըհարգին, կըպանդին, մէ լավ կըկերցընին, կըխըմցընին, ճանփու կըդընին, կէթեր:

Մէ օր էլ էս տըղէն էտենց մըղնուն մէ տուն, տենուն մէ ջո՜ջ, պանզավ կընիկ ա ըըստուկ: Յիշկուն էս յան, էն յան, տենուն սանվայի էտ պանզվից՝ հուրիշ մանթ չըկա: Ըստիբված էտ պանզվին անսուն.

- Տանտի ջան, բարօվ – խերօվ քօ մանթը հայրենական պանտերազմից յետ դանա գա: Էնի վոր գընաց կըռիվ, իմ թայն էր: Ընդու խաթրին մէ բան կըտա՞ս ուտեն, անօթի յեմ:

Պանզավը հանշկերը լըցուն, ըսկըսուն փէշերը ծակ - ծակ քըշտել, վեռչը մէ ջիբից քառսուն թըվի մէ բանգա յա խանուն, դժողըղալէն տանլուն էս տըղին, անսուն.

- Առ կե, բալա ջան, մանպաստ ա, մանթիս խըմար ի պանխե:

\*

92

Էտա թըռչընի գըրի'պ Են անսո~ւմ, ի՛նչ գ՛ըրօղ ու ցալ Են անսո~ւմ՝ հառէչ էտենց բ՛ան յԵ՛փ կէր: Խա, մէգ - մէկ պան դայուն էր՝ խավերը չօթօլան ին հընգուն, խատուն ին, բայց խօ ըտուց ման ռթի վընաս չէ՞ր հըլնուն ... Շանտ գախ վոր տենուն ին՝ խավը վիզը թանլուն, պըտի խատի, մօռթուն ին, չին թօղուն խատեր. խատուկի միսը վո՞րը կուտեր: Մօռթելուց յետօ բըմբըլուն ին. վոր տենուն ին՝ գոյնը չըփօխե, չըկան պըտե, էփուն ին, ուտուն ին: Ի՞նչ էր հըլնուն՝ վոչ մէ բան: Մըկա յա , վոր ...

Սէ դան գաջի Պանրթօյենց տունը, տենամ՝ Պանրթօն մէ ջոնջ դօդ բըրընձէ քաշօվի դըրե դէնը, գըլփե վըրէն ու փեդէ գըթօլ չըփչըփցընէլօլ Են ուտելն ա ուտուն, Են ուտելն ա ուտուն... Էնենց հավէսօլ էր ուտուն՝ իմ իշտանյն էլ քաշեց. Էնենց էլ յեղօվ քաշօվի յեր էրեվուն, լավ էփուկ, տեղը տեղին, խավի միսը համայրա խալեր էր մէչը: Թուքըս կուլ տըվի, նըստա սեղանի կուշտը, մէկէլ Ես Պանրթօն կընգան անսավ.

- Սօնիկ, մէ գըթէլ բ՛ե, թօ Պանպինը Եսա յանանց խէտըս քաշօվի ուտա:

Է՛, յես էտենց կուտի՞: Ինչօր պան դ ջոնջ լըցին գըլխիս: Ասի.

- Չէ՛, չէ՛, Սօնիկ ջան, մի՛ բ՛ե, չեն ուտուն, իշտանյ չունեն:

Աթօռըս քաշի կըրաղ, ինադ - գինադ նըստա: Մէկէլ Պանրթօյ դըբոցական տըղէն էկավ, նըստավ կողըս: Սըռտիս յեռսից տըղին խառցըրի.

- Գան՛, Ետ խավն հընչէ՞ր խիվընցե, վոր մօռթեր էք:

- Վանյ , - ընձի խօլոր գանցե տըղէն, - չէր խիվընցե, խատեր էր:

Ես Պանրթօյ էրկու թուշն էլ լիքըն էր, վոր էտի լըսաց, փըռթըկցըրեց: Կերն անավ բօգին, ըսկըսեց խազալ, գըլնէր էրկու տանլեք թըշէրից բըխկըցըրեց սեղանին, մէ յել խէտը նըխշեց: Հէլա մէ բօ~լ, իշքան ուժըս պանտուն էր՝ գօմփէրօլ գանի մըշկին, չուն լըռիվ էկավ թափավ, խանքը էկավ տեղը: Իմ սիռտըն էլ դինջընցավ:

\*

93

Սէ խեխճ ու կըրակ, ժօղօվկըրան կընիկ կէր, Խէրօ յին անսուն: Էտի ման ռթի չէր գաջե. մօտիկ, հարազատ էլ չունէր: Ըստուց – ընդուց բան ու ման էր ճանուն, մէ կերպ յօլա էթուն:

Սէ օր էտի էթուն իմ քուր Մանրուսի տունը, անսուն՝ օղօրմի՛ Ջալիբեգ խօրըս, հէսօր էրագ էկավ ընձի, անսավ՝ կէթաս իմ անխճիկ Մանրուսին կանսես՝ թօ քե մէ շանլ տա: Քըվորըս սիռտը լըսվուն: Բէրուն Խէրօյը խաց ա կէրցընուն, կօֆէ յա տանլուն, վեռչըն էլ մէ խաս շանլ կանպուն գըլխին, ճանփու յա դընուն: Հընսնուն մէ քանի օր,

Խեղճը էլի էթում քրվորըս տուն, էլի խօրըս օղորմի յա տանլում, էլի անսում՝ էրագիս խօրըս են տեսե, դըրկեց քօ կուշտը, վոր ընծի մե բան տաս: Քուրըս էլի բերում, Խեղճը կուշտ կերցընում, մե ջուխտ էլ չուլքի յա տանլում, ճանփու դընում: Մե քանօր յետօ Խեղճը էլի էթում քրվորըս տուն, անսում.

- Ձալիբեգն էրագիս անսավ, վոր ընծի մե ջուխտ կօշիկ տաս:

Ըտե քուրըս յեռսօտում, էլ չըդիմանում, անսում.

- Դը գընա՛, Ձալիբեգը վեց անխճիկ ունի, հընչի՞ մե օր էլ ընդոնց յանը չըդըրկում:

\*

94

Մեր գեղը մե լալ ու կանն մանթ կան, Մօրօժ են անսում: Էսի վոնչ լըսում, վոնչ խօսում, բայց մե բան վոր ուզում անսա՝ կանում խասկըցընա, հիրանն էլ ձեռօվ, վոտօվ կանում են բան խասկըցընեն: Ձանել գախ էս Մօրօժը ըստու – ընդու տունը բանում էր, մե կերպ յուլա յեր էթում:

Մե օր մեր Լեվօն էթում Սանչենց տունը, տենում ըտե բանվոր ա բանում: Սանչին խառցընում՝ էս ի՞նչ հաշիվ ա: Սանչն անսում՝ հեչ, Մօրօժը էտա բիթոնը մըկա կըթափա, կըպըռծի, խաց կուտենք, գըլնենք գեղի մեչ: Գոռօը պըռծում են, նըստում են՝ խաց ուտեն: Էս Լեվօն բանվորին անրաղ ա լըցում ու ըսկըսում ձեռօվ, վոտօվ խասկըցընել, թե՛ խըմա: Յետօ յե ըտու դեմը բան ու ման ա դընում ու էլի էտենց խասկըցընում, թե՛ կե՛: Էտենց մե քանի դան հա վոր անում, էս բանվորը շիվարուկ հիշկում Լեվօյը, էլ չըդիմանում, անսում.

- Շանտըղի գանդեն գի՞ժ ա~:

Էսխանդ Լեվօն ա շըշմում: Սանչն էլ փորխոց հըլնում, մե կերպ Լեվօյը խասկըցընում, վոր էտի Մօրօժը չէ: Չըխօսկան մանթ ա՛ Մօրօժին էլ նըման, հինքը խաննաքվարի յեր անսե, թե էտի Մօրօժն ա:

\*

95

Մեր հարեվնի տունը քեֆ - ուրախութուն էր, ճըժերը յերթում ին, պարում ին, բայց հիրանց տանտիկը դուռը տըխուր – տըռտում նըստուկ էր: Մօտկըցա, անսի տանտի ջան, ձեր տունը հըմեն ուրխընում են, դու հընչե՞ս էտենց անհավես նըստե: Ասավ.

- Է~է, բալամ, ինչի՞ս վըրէն ուրխընամ: Թոռըս ընթունվե կոնսեռվատօրյա, էտենց ուրխըցած. բ'այց էնի կ'անսեռվա փագօ՞ղ ա, լասա տէ՛նամ: Մեռնեմ ընդու մ'ան դնէրին, էնի պըտի դաշնամո՛ւր նըվագա, դաշնամո՛ւր:

\*

96

Ասում` օցը դ'ախծից ա պ'ան դըռում, դ'ախծը էթում ա՛ ճում օցի բ'ընամ դ'էմը: Էտենց շ'ատ ա հըլնում. ինչից փախս ես` էնի յա ռաստ գ'ալում: Ըտուց պըռծում - ա՛ գատում էլ չըլնում:

Մեր գ'եղը Գ'ալուստ ա՛ նունավոր մէ մ'ան ռթ ա հըլնում: Էսի կ'ան դվըների խէտ հ'ան շկօվ հ'ան շկ չունէնում: Թ'ան ռսի նընամ մէ գ'ող կ'ատու գ'ալում բ'ընակըռում ըստոնց դ'ուռը: Ասում` հ'ան շկըտ թառթում իր` էտի տընից մէ բ'ան թըռցընում էր: Մէ դ'ան էլ էտ կ'ատուն մէ յ'ան ք'ան կ'ան լբաստ ա ա՛ ռնում փախնում, էս Գ'ալուստը ըտուն լ'ան րում, հիդվից էլ բօռում.

- Տ'ան ր, տ'ան ր: Լը տէնամ` ա՛ նխաց ի՞նչալ կուտես...

Ն'ան դդի ինչ ա՛ նում են, չեն ա՛ նում, մէկ ա` էտ կ'ան դվի վոտը հիրանց դ'ըռնից չեն կ'ան նում կըդրեն: Քիչ - քիչ գ'ալում քըսմըսվում Գ'ալուստին, ըտուց ըսկի յէլ չըվախէնում: Գ'ալուստը մըտկում - մըտկում, հիր ա՛ րեվին` յելքը գըթնում: Էթում ն'ան ռդըվանը բ'երում, կ'ան դվին ա՛ ռնում, հըլնում կըրիշէն, ընդեղից թ'ան լում ցածըր: Ուրախ - ուրախ կըրիշից հիշում, տէնում` կ'ատուն դ'ուռը նըստուկ ա: Հ'ան շկերին չավատում: Ջընջընօտում, կ'ան դվին նորուց բ'ըռնում, խանում կըրիշից թ'ան լում: Էտենց մէ քանի դ'ան: Բ'այց մէկ ա` կ'ան դվի խէտ չարա չըլնում: Գ'ալուստի սիռտը վատընում, հիրանը հագիվ թ'ան լում մէ քարի, նըստում, կ'ատուն էլ գ'ալում, կուճուռում ըտու վոդների տ'ան կը:

Մըկա գ'եղը վոր մէկը յագվա յա հըլնում, ըտուց չեն կ'ան նում յախէքն ա՛ գատեն, ա՛ սում են` հէլե Գ'ալուստի կ'ատուն:

\*

97

Տըղամ'ան ռթիք վոր հավքըվում են, մէ էրկու բ'աժակ խըմում են, ըսկըսում են խ'ան ն'ան ք - չ'ան ն'ան ք ա՛ նել: Քէֆըներն էլ վոր տընգօզնում` ի~ինչ ասես, վոր մըտկընէրօվ չընցընում: Էտենց մէ դ'ան մեր մ'ան յլի տըղէրքը հավքըվում են Գ'առօյենց տունը, ա՛ սում են, խօսում են, ծըղզում են, վեռչը ... Մընում, էս Գ'առօն

կընգան անսում՝ լը են հեսորա անուկ թըթի անրաղը բ՛ե, թո տըղէրքը մէ - մէ բ՛աժակ խըմեն: Կընիկը բ՛երում, մէգն հըլնում էրկու, իրեք... Թէ իմալ ա խօսկ բ՛ասվում՝ անմէք մէգն ըսկըսում հիր կընգա գ՛ովասանքն աննէ: Մէկը հիր կընգա էփուկ տօլմէն ա գ՛ովում, մէկը՝ հիր կընգա դ՛ըրուկ խաշը, մէկէլը՝ հիր կընգա կանր ու կըտուր աննէլը: Էս Վաչօն էլ անսում:

- Լա՛վ, լա՛վ: Վոշ մէկիտ կընիկը իմ կընգա նըման ռիսկօվ չըլնի. իմ կընիկը վոշ մէ բ՛անից անխ ու դող չունի. գ՛ըշերօվ վոր թօղես՝ միյնան կ կէթա գ՛երեզմըները կըֆըռա, գ՛ըքա:

Թէ էս Ռուբօյ մըտկօվ ինչ ա հընսնում՝ անսում:

- Դը վոր էտենց ա, թո կընիկըտ գ՛ըշերօվ էթա գ՛երեզմըները, ընդէ կըրակ անա, ճանշ էփա, մենք էլ էթանք ուտենք:

Գիդում Վաչօն կանսա՝ չէ: Բ՛այց էսի հիր խօսկից յետ չըկանում, անսում՝ համ էլ կէթա, կէփա: Զէքսի օրվա վըրէն մանջ են գ՛ալում, հըլնում են ցըրվում են:

Թէ Վաչօն կընգան իմալ ա համօզում, էտ էլ հինքը գիդա մէկ էլ անսված, բ՛այց հէքսի գ՛իշեր Վաչօյ կընիկը իշքան պէտկ ա՝ փէդ ու փիդուռ, ճաշի խըմար անտուկ, հանթան հունթէք բ՛առցում իշին, տանում գ՛երեզմըները: Ըտէ մէ քարի կող կըրակ ա անում, կանստուրկէն դ՛ընում վըրէն, ըսկըսում ճանշ էփէլ: Զիրան – հիրան էլ խօսում:

- Տէնաս սեվգ՛ալուկները քա՞նի խօքօվ գ՛ըքան, յարաբ կըխէրքա՞ ...

Վոր ճանշն ըսկըսում բըկըռտալ, խուփը վէրցում, ըսկըսում խառնէլ: Դ՛ու մի՞ անսա, էտ Ռուբօն գ՛օխտուկ էկէ տանփէ քարի տանկը, վոր էս կընգան վախճընա: Վոր ճանշի խտըը հընգընում, էս Ռուբօն քարի տըկից պանզըրվում, անսում:

- Քուր ջան, մէ շէրեփ ճանշ չէ՞ս տա:

Էս կընիկը իսկականից շատ ռիսկօվ հըլնում, ըսկի հիր ընդէ յէլ չըդ՛ընում, դ՛առնում, շէրեփօվ մէ լավ հիշնում ըտու կանֆին, անսում:

- Տիրախօրուկ, գիվան սանդերն էկան կէրան՝ խէրքեց, մըկա յէլ մեռըլնէրի՞ն պըտի բ՛աժենն ...

\*

98

Մէ բ՛ան վոր թանգան յա դ՛ուս հընգում, սանդ գիդում են՝ էտի յեսիմ ինչ ա, բ՛այց վոր մէ ժուկ հընսնում, էլ վո՞րն ա ըտուն բ՛անատեղ դ՛ընում...

Զառէլ ըստերանք վո՞րն էր գ՛ըլխին զօնթիկ բ՛ըռնում, մէ~կ - էրկու՝ նոր էկավ մօդա... Մեր հարեվնի մանթը մէ տանրի կընգան խօպանա զօնթիկ ա բ՛երում, անսում՝ թո մանլի կընանիքին պանդըռցընա: Էս կընիգն էլ հա հիշկում, վոր

անձըրեվ գ'ա, վոր հըլնի զօնթիկը պըս տա, թանսի նըման անրեվ անուշ անում: Վեռչը մե օր ուժեղ անձըրեվ ա բ'ըռնում. խօ անձըրեվ չէ՞ խեղեղ: Ես կընիկը շուշուտ-շուշուտ գեստ ա մըղնում, զօնթիգն աննում ձ'եռը, խաքուն – խըփուն հըլնում դ'ուս: Կանյուն շօշի հօլթըլաղը, ուզում զօնթիկը բ'ացա, մըկա չըկանում: Քօ գիցուկ լա~վ տըսկում, հըլնում քօռ մուկ: Էն յանանց մե մանթ վազեվազ գ'ալում, զօնթիկը բ'ացում, տանլում ըտու ձ'եռը: Ես կընիկը խօ էթալու տեղ էլ չունե՞ր, բ'այց դը վոր հէլեր էր դ'ուս, պըտի մե տեղ էթեր: Հիրանը հավքըռտում, խըպառտ – խըպառտ ըը էրկու վոտ չըթանլում, մէկէլ Քանվանա անֆտօբուզը կանյուն ըստու կողը, դ'ըռները բ'ացում: Եսի խառվում հիրար, անօթու հըլնում անֆտօբուզը, բ'այց մըկա յէլ բ'աց զօնթիկը չըկանում դ'ըռնէն նեռս տանա: Ուզում փագա՝ չըլնում: Աֆտօբուզի ժողօվուռթըն էլ սանդ ֆըռացած, հիշկում են ըստուն: Ինչ անա, ինչ չանա՝ զօնթիկը շըպըռտում ճանփէն, յանանց էլ հիրան – հիրան անսում՝ Ես վի՞ր անտերն ա է՛ ...

\*

99

Գարունը վոր սանրի ձ'ըները խալում են, էտա մեր անտեր չայը էնենց ա հըլըշվօտում, զըմփզըմփում, ջ'ուրն հըլնում ըսվում ճանփէն, դ'ըռները, քօստընները...

Էստանրի յէլ ախար ձ'ունը շատ էր... Սէ օր մե մանթ կանրմընջօվ հընսում, դ'ուրը գ'ալում, կանյուն, հիշկում ջ'ըրիմ: Շատ վոր հիշկում, խելքը մանդում, գ'ըլխի վըրան հընգում ջ'ուրը: Ջ'ուրը ըտուն քըշում տանում, բ'այց լավ ա՝ ճանպիկ ա հըլնում, չըխեխտում: Կընիկը հիդվին վազում, տէնում, վոր մանթը անթէն ջ'ըրից դ'ուս պըտի գ'ա, քօռում.

- Ունուդմե~ռ, հընգեր ես՝ հընգեր ես, ջ'ըրից դ'ուս մի հէլի, գ'ուխսօվէտից մանթ կանչեմ՝ թօ գ'ան տէնան, կանրօղա մէշու փարա տան...

Էս մանթն էլ չուտում չըխըմում՝ ձ'էն ա տանլում.

- Էն վոր դ'ու հընգար ջ'ըրխորը՝ կօտօրվան քե փարա տանլօվ, վոր մըկա յէլ ընձի տան...

\*

100

Տըղա ջան, խօ նօրութուն չէ, դ'ու յէլ ես լավ գիդում, վոր մօտիկ հարեվանը յեռու բ'արեկամից լավ ա: Բը ի՞նչ. մե բ'ան ա վըռազ պէտկ գ'ալում՝ դ'ըրկըցի դ'ուռն ես տըփում, էնի յէլ՝ քօ: Ըսկի դ'ըրկեցըտ կանրօղա քե պէտկ էլ չիգա, բ'այց պըտի

լավ մանթ հըլնի: Յընընօր հիրես հիրսի յա մնուն, բը ի՞մալ ես մսուն: Յառավոտ վոր տընից դուս ես գալուն, պըտի լավ մանթի հիրես տենաս, վոր գոռօըտ մչ էթա: Շատ եմ փօռցե. վոր հառավոտ լուսով չար, նախանձ մանթի հիրես եմ տենուն, էտ օրը վոչ մէ գոռօ գըլօխ չըգալուն: Ըտու խըմար հարեվանըտ պըտի սանդսիտ, մնչմն, ծըծաղհիրես մանթ հըլնի, վոր ըտուն տենաս՝ քօ բէյնն էլ բասվի: Պըտի կանաս հարեվնի խէտ խաննաք - չաննաք էլ մնես, վոր օրըտ թեթըվ հընսնի:

Բաղօյ Յայկըն ու Ռաֆիկը դուռվըրդըռան հարեվան եմ հըլնուն, հիրուր խէտ շատ լավ եմ հըլնուն, խաննաք - չաննաքն էլ մնպակաս եմ մնուն: Մէ օր էս Ռաֆիկի տունը ռեմօնտ եմ մնուն, հիրկըվա յանը գաճը պակասութուն մնուն: Գաճ քաշօղը Ռաֆիկին մսուն՝ հառավոտ դու չուն գաճ ճարես՝ յես վոտըս մէշու կախ կըքըցեմ, սօվօրականից հուշ գըքամ: Էս Բաղօյ Յայկը ըտե յա հըլնուն, Ռաֆիկին մսուն՝ մի խառվի հիրար, մեր գարաժը լիքը գաճ ա, հառավոտ մրի, ինչքան պէտկ ա՝ բե, թօ հուստէտ էլ հիրա ժամանակին գա, գոռօը յետ չընգի: Յուստէն մսուն՝ լավ, հընընօրա վախտին գըքամ, հըլնուն էթուն:

Յառավոտ լուսով Յայկի դուռը տըփուն եմ: Կընիկը խալաթը թանլուն վըրէն, օրօշկըտալօվ, հանչկերը ճընըռտէլօվ գալուն, դուռը բացուն, տենուն Ռաֆիկն ա՝ էրկու վէդրօ ձեռին:

- Քուր ջան,- մսուն ,- կընէրես՝ գառթընցըրի, հուստէն էկե. մէ մրի գարաժը բաց, էրկու վէդրօ գաճ վէրցեմ:

Յայկի կընիկը շիվարուն.

- Գաճը դոր էր, ի՞նչ գաճ ,- մսուն:

Ռաֆիկը ըտե գըլխի յա հընգուն, վոր Յայկը հիր խօքու խէտ ա խախօե, փօր ու փօշման թօղուն յետ ա դառնուն: Մէկէլ Յայկը բալկոնից ծընըրկըտալէն ձեն ա տանլուն.

- Ռաֆօ՛, բարլո~ւս: Գաճը տարա՞ր: Վոր կըպանքսի՝ մրի էրկու վէդրօ յէլ տար...

\*

101

Ախպեր ջան, յես էսքան գախ վատ մանտունէցու ռաստ չեմ էկե. շատ շընոխկօվ, հարգանքօվ - պանդօվ, մխշատօղ ժօղօվուռթ եմ: Էնենց էլ գըլխօ՛վ եմ. մեր տըղէն Յէրեվան վոր սօրվուն էր, հիր խէտ հուրիշ քանվանցի չըկէր, բայց խինգ - վեցը մանտունէցի կէր. ըտոնց խէտ էր հընգերութուն մնուն: Գիշտ ա՝

պահայում՝ մենք մահտունեցիքին ենք ձեռն առնում, անուն դնում, հիրանք՝ մեզի, բայց մե՛ բան վոր հըլնում՝ մենք վազնում ենք Մահտունի, մահտունեցիքն էլ վազնում են Քավան: Հըմեն տեղ էլ հարեվներն էտենց են: Մեկէլ գօվաս մահտունեցիքի թասիբն ու հիրանց անհատները պահելը: Յերեվի ըտու խըմար էլ մեր քավան ճիշտ շատ են էթում, Մահտունա կընիկ բերում:

Սէ օր Մահտունա փեսան Սիրականը հըլնում, վոր էթա Մահտունի, հիր կընգանը խօր տընեն բերա: Գանփին ռաստ ա գալում խոզ պահօղ, անկընիկ մե բիծի: Հիր անեվին՝ ուզում էտ մահթի խօքու խէտ խաղա, անում:

- Ափեր, վոր քեզի Մահտունա մե ջանօվ - ջանդըկօվ, կարմիր թըշերօվ, անխշատօղ կընիկ բերեն, ընծի մե խոզ կըտա՞ս:

Բիծեն խընդմընդում, անում:

- Բէ, ումուդ ջան, բէ: Հընչի՞ չեն տա: Հանշկըս քօ՞ն կուզա: Վոր քօ կընգանըման մե կընիկ բերես, մե խոզն ի՞նչ ա, վոր չիտամ:

Ծըզդում են, էս Սիրականը նըստում անֆտօն, էթում: Հիրկըվանը կընգան անուն, քէֆն էլ մէշու լավ, անֆտօն քըշէլօվ դանում, գալում Քավան: Վոր պըտի օլըրվի հիրանց ճանրը, բիծեն ձեռը տընգում, ըստում կանըցընում: Մօտկընում, անում:

- Սիրական, խոզը տանում են, դը կընիկն անֆտօյց հիչըցու:

Սիրականի քէֆը մե թափից թօղում: Ասում՝ բիծան, էսի ի՛նչ կընիկն ա: Բիծեն անում:

- Տէնում են: Բայց կընիկը կընիկ չէ՞, ինչ տանրբերութուն. վոր յես կանիլ են, դո՞ւ հընչես տանրբերութուն դընում:

\*

102

Է~է~է~, ումուդ ջան, մահթ պըտի հիրանսածի չըլնի, մէշօլ պըտի հուրիշի անուկին հանգաճ անա, միյնակ հիրա էշը չըքըշա: Պըտի հիրա մէշը թանա - բըռնա, խասկընա, վոր հանրանք մե բան գիդում են, վոր խօռուռք են տանում յա անում են՝ ըշկուշ հելի... Համ էլ խօ սըթից չեն անում՝ ջ'ոչին ըսօղի վոտը քարի չառնի... Ասօղին ըսօղ ա պետկ, չէ՞...

Անընվա մե օր հարեվներօվ պատի տանկը նըստուկ են հըլնում. կընանիքը կըսան յեն անում, տըղամահթիքն էլ յա պանպիլօզ են քաշում, յա թըզբէս, հանգըճի ծիրօվ էլ կընանիքի կըսեն են ըսում: Մեկէլ խէխճ ու կըրակ մե կընիկ ա գալում, անում՝ սըռփի սեր են հավքում: Մեխկընները ըտու վըրեն գալում, անմէքն



հիրանը ձեն ասանում, տրնից փող, ուտելիք, շատը ձու յեն բերում, տանում են էս կրնգանը: Եսի սանդին օռնում, ձրվերը շատ ըշկուշ դասավորում ձեռի տօբրըկի մէջը: Բայց տեսուկ հըլնում, վոր մէ տրնից բան չըբերին: Հիրան – հիրան ասում՝ էս տրնից մանթ չէկավ, դիբեն ըտոնց յանն էլ, նոր էս մայլից էթամ, ու թեքվում էս տան ճարը: Գիրքոր ասիերը գըլօխը կախ թըգբէխ էր քաշում, վոր տնում՝ էտի թեքվավ հիրանց ճարը, ձեն ասանում.

- Քուրօ, ըտե մի մըտի, իմ խառսը քախկըցի յա, էտենց բաների չավատում...

Բայց քուրօն հաջօղութունից թեվ էր անե ու մըտկին դըրէր էր՝ վոշ մէկին քասուր չըթօղէր... Էտենց քըշում խասնում տանը, դուռը տըփում: Տան խառսը էս գախ գաթի խըմոր էր անում. թեվերը քըշտուկ, ձեռներն անըրոտ գալում, ինադ - զինադ դուռը բացում: Վոր տնում՝ սըռփի սէր հավքօղ ա, դուռն էնենց ա շըրըփցընում էս կրնգա վըրէն, վոր անում տօբրըկի ձրվերին, սանդ խըրշում: Փօր ու փօշման, շըշկըռվուկ էս կընիկը ճարից հըլնում, տօբրըկից էլ ջանթուկ ձուն ճէվում: Բիձէն ասում՝ քե չասի՝ մի գընա... Էս կընիկը լանկըթնուկ ասում.

- Էտե՞նց են ասում. քօ խաչի զօրութունը դու գիդում իր, թօ ասիր՝ դուռը կանդուկ շուն կանկան պուկ...

\*

103

Վոր հըմընի դըռները կըրանթ քաշին, կընանիքի գոռօը հէշտըցավ. էլ չին էթում հախպըրից կըժէրօվ ջուր բերում: Կըրանթը դէմըներն էր, սանդ օրը՝ գըշէր - ցերէկ գալում էր, անխային լըվասկ - թափ ին անում. մըկավա նըման էրկօրը մէկ չէր գալում, էն էլ՝ մէ ժամօվ:

Մեր գեղը մէ խըմօղ մանթ կէր, անունը Մուշօ յէր: Եսի հըմընօր խըմուկ էր, բայց խըլղի խաթրին չէր կըբնում, անըշնոխկ բաներ չէր անում: Լավ էլ խօսկաշէն մանթ էր: Մէ օր թէ իմալ ա հըլնում՝ էս Մուշօյ անաղը պանքում: Հա տանում - անում, հիրանը տըփում էս յան, էն յան, բան դուս չըգալում: Վեռչը էթում կանում կըրանթի գըլխին, ասում.

- Շանտըղի կըրանթ, հըմընօր կընանիքի խըմար ջուր էս գալում, մէ օր էլ մեր խըմար անաղ անի, էլի...

\*

104

Էս Գուվարը շատ ման գանլու կընիկ էր. ինչ գալուն էր բերանը՝ անուն էր: Ըսկի չէր մըտկուն՝ էտի պէտկ ա անսել, թէ՞ չէ. անօթ բանը ընդու խըմար գոյութուն չունէր: Հիրա տըղին հըմընի դէմը էշ էր անուն: Էնքան էր անսե՝ սան էլ տըղին էշ ին անուն: Մէ դան էս Գուվարի էշը (իսկական էշը, տըղէն չէ) կուրուն: Գուվարը զանգուն հիր խօր տունը, անխաօրը խառընուն.

- Մեր էշը խօ ճեր տունը չէ:

Ախաէրն անուն.

- Հէսա կողըս նըստուկ ա, տըրուպէն տամ հիրա՞նը:

Գուվարը բօռուն, ճըչուն, թե հինքը հիրանց իշին ա ման գալուն, անխաէրն էլ էն յանից ա ճէնը գըլօխը քըցուն, քուր ու անխաէր յանքան բօռըռուն են, նոր մէ կերպ հիրար խասկընուն են:

\*

105

Սէփանըս վոր բըժըշկականն անվառդեց, ըսկըսեց հիվանդանոցը անխշատել: Տըղէն հառչի գախտըը շատ էր չարչըրվուն. հառավոտ շուտ էթուն էր, հանքան գախ նոր անօթի - ծանրավ տուն էր գալուն: Մէ օր էլ էտենց էկէր էր, տըրօրվուկ - տանջըվուկ պարկէր էր դիվանուն, մէկէլ գիշերվա կիսին դուռը տըփին: Քուրըս՝ Անալը, նըստուկ տեղից թըռավ, հէլավ կանյավ, անսավ.

- Վայաման, էս գախ էտ վորն ա մեր դուռը ջանթուն:

Դուռը բանցինք, տեսանք՝ էն խըմօղ Սանոյ տըղէն ա՝ գույնը քանլուկ: Էսի խանքակըտուր վըլվըլըրեց.

- Պանի՛ն ջան, բըժիշկը տո՞ւնն ա, խէրըս գիտակցութունը կուրցըրե ...

Անալը դաննը հիշկաց Սէփանի յանն ու գիվան հիրան - հիրան, բայց էնենց, վոր Սանոյ տըղէն լըսա, անսավ.

- Քօ խէրը գիտակցութուն յեփ ունէ՞ր, վոր մըկա յէլ կուրցըրե... Գացէք ման էկէք, կանրօղա գըթէք, մէնք ինչ անենք...

\*

106

Էէէ, ի՞նչ ասեն: Մըկա թօշակըս լուսի հախը չըխանուն, բայց հառէչ ժամանակ ի՞նչ էր. անիսը ըսկի մէ մանէթ էլ չէր բըռնուն: Ու գիդո՞ւն էս՝ ժողօվուռը ըշտօնիկը կեխծուն էր, վոր էտ էլ չիտէր:

Մեր հարեվմի տունը թէ ի՞նչալ ին անում, ի՞նչ ին անում՝ վոր ըշօտչիկը կանխում ին վոր գ՛րլխի, կանխում էր, էլ չէր գ՛րրում: Անէք տուն տանքեր ձե՛վի յին կեխծում. օրինակ մեր տունը հուրիշ ձե՛վ ին անում: Մեգ - մէկ էլ ըստուգող էր գալում: Վոր խաբարն անում ինք, վըռազ ըշօտչիկը պանյադկի յինք բ՛երում: Վոր դուզն անսեմ, էն վախտ դանգմա մանթ գ՛րլներ, վոր ըշօտչիկը չըկեխծէր: Բան...

Մէ օր մեր հարեվմի տունը վոր խաբարն անում են, թէ գ՛եղը լույս ըստուգող կան, հիրանց ըշօտչիկը դըզում են, մուշ – մեղավոր նըստում են, հիշկում են ըստուգողին, գիվան քանից խաբար չեն: Էտ ըստուգողը գալում, ըշօտչիկը ըստուգում, թըխտերը հիշկում, հանշկերը թըռնում են քան էն.

- Էրեվում՝ դուք շընչից շատ էք, ջոջ էլ տըներ ունէք, - անում, - ձեր ըշօտչիկը հընչա՞ էսքան քիչ գ՛րրում:

Չում տընէցիք պանդասխան կըտին, ըստոնց պանպիկը պանրկուկ տեղից հըլնում նըստում, անում.

- So տըղա՛ ջան, էտ ըշօտչիկը օրը բիթում վոր գ՛րլխի կանխուկ ա, խեխծի հանշկերը թըռած դուս, ի՞նչալ գ՛րրէր:

\*

107

Է~է~, բալա ջան, վոր ըստե անխշատանք հըլներ, մեր տըղերքը ըստե անխշատին, հիրանց տան ու տեղի վըրեն հըլնին, բը վա՞տ գ՛րլներ: Բայց հո՞ւր ա, մընան ըստե՝ ի՞նչ անեն. պանրապ - սանրապ հըլնեն կանխեն գ՛եղի մէջը, ըստու – ընդու կընգան անուն դընեն յա թէ չէ խըմեն՝ կըռիվ անեն, բը վեռչը՞. ըստոնց տունը վո՞րը կըպանխա: Յուրիշ ճանր չըկա՝ էթում են խօպան. մեր գ՛եղը մըկա յերեվի էտենց տուն չըկա, վոր խօպանի հուսին չըլնի: Մէ քան վատ ա, վոր մըկա հընդանիքով են էթում, էլ յետ չեն գալում. գ՛եղի կէսը դըռները փագած, գացած Ռուսաստան, Կանգախըստան... Ի՞նչ ասեն, հանքանթ անված մէ լուս կանա, մեր կանրիքերը յետ գ՛րքան...

Մեգ - մէկ էլ էնենց հըլնում՝ տան տըղամանթը տանրիներով խօպանա չըգալում. կընիկը չարադատ քանում, ճըթերին ջօչըցընում, հըմեն անուն էլ հանշկը մանթի ճանվին ա պանխում:

Էտա մեր Սանդաթէլի տըղա Գարասը խօպան տեղ փօռցանքի յա ռաստ գալում, քանի տանրի ճանր չըլնում, վոր գա խասնի հիր տան ու տեղին: Ըտու կընիկը խեքը գ՛րլխին, նանուսով, խալալ կանթնակեր խսան ա: Գըլօխը կանխ՝

միյնանկ - միյնանկ համ տունն ա պանխում, ճրժերին ա թըռփօշցընում, յանանց էլ տունը մէշու սանրքըտում, տան խըմար բան ու ման ա անունում, անսում՝ ճրժերըս թօ հուրիշնէրից յետ չընգեն: Մէ խատ էլ ջոնչ, բօյաբօյ խանլի յա բէրում, կըպցընում հաշտը՝ դ՛րռան դէնը, վոր ճրժերը հիրանցը ըտու մէջը լավ տէնան:

Մէ ժուկ հընսնում, էս Գասպարի գոռծերը հարմըրում են, քանի տանրվա գըլօխ կանստում – շըլվար ա խաքնում, մէ կերպ գալում, խասնում գէղ: Գալում խասնում հիրանց տունը, դոռը բացում մըղնում նեռս, տէնում դէնը խաքում – խըփում մէ մանթ ա կանյում: Գիշկում – հիշկում, տէնում, վոր ծանօթ մանթ ա, բայց չըկանում տեղը բէրա: Մէ էրկու րօպէ էտենց թանընում, անսում՝ լավ, մըղնեն նեռս, կընիկըս կանսա՝ էտի վորն ա: Բայց էտ մանթը դէնը կանյեն, էն յան չէթում: Էս Գասպարը յեռստում:

- Ախպէր ջան , - անսում , - յա դէս գընա, յա դէն գընա, թող հընսնեն, էթամ նեռս...

Ախար հիրանը կանստում – շըլվըրօվ յե՞փ էր տէտե...

\*

108

Գիդո՞ւմ էս՝ իմալ. մանթ վոր խըլղի դէնը քե բան ա խօստանում, էն էլ՝ սեղանի վըրէն, անսում՝ դոռ կանաս ըսկի չըմըտածես, յետ հըմէն ինչ կանեն, շատ գախ մի անվատա: Գըլնի վոր էտի խօսկի օրինանկ ա անսում յա թէ չէ ուզում խըլղի դէնը խըպառդնա, թէ՛ տէտեք՝ յետ էտենց լավ մանթ են... Կանրօղա դոռ ըտու վըրէն հույս դընես, բայց ըտու մըտկօվ ըսկի յէլ չընցընի, թէ քե բան ա խօստացե: Էր մէ բան էլ կանրօղա քօ վըրէն մույնանթ գա, թէ վոր մէ թեթըվ ուզես հիր խօստացուկը քըցես մըտէն: Ըտու խըմար էլ հըմընից լավն էն ա, վոր դոռ քօ գիցուկօվ քօ գոռծն անես, քօ բ՛ըռնուկ ճանփէն բըռնես էթաս, հուրիշի յէլ չըլըսաս... Կըտէնաս, վոր չես փօշմընի... Դամ էլ կանրօղա մանթ ա՝ մէ բան անսավ, խօ կըրակը չընգա՞վ...

Մեր էտա Սուսանի մանթը՝ Վանուշը, մէ տանրի կանոտօլ ա տանում Դերէվան, վոր ծանխա: Ինչքան վոր ծանխում, հիրկըվանը թօրգում, գալում խօրօխպօր տըղի տունը, վոր քընի, հառավոտ էլի հըլնի, էթա բազառը: Դը էն գախ էտա յեռախօսնէրից չըկեր, վոր զանգեր, նոր գէր: Խեխճը գալում, վոտօվ խինգը հարգ էտ շոք ու կըրակին հըլնում, տէնում խօրօխպօր տըղի տունը մանթ չըկա. ինչքան զանգը տանում ա, դէնը դոռը բանօղ չըլնում: Ասում՝ կանյի մէշու նըստեն էսա նանդըվնէրին, խանքըս թօ գա տեղը, չում գըքան, խօ դուսը չեն մը՞նա: Էնքան հալէ հէլուկ հըլնում, հանչկը ըտե կըպում: Թէ ինչքան ա էտենց

մընում, մէկէլ հիրանը բըթում են: Ջառթընում, գիդում՝ հիրանց ժողովուրդըն են, բայց պանգըվում՝ դէմի հարեվանն ա... Էտի հիր թանգան խընամուն խանե վոր ճանվու դընա, տեսե՝ հիրանց դընան դէնը անծանօթ մանթ ա նըստուկ, ուզում՝ հիրանը նըշանց տա:

- Ընգեր ջան , - Էնենց շան ~տ վիրեվներից ա գալում էտ մանթը , - Էս լավ էլ քեզ քընէլու տեղ էս գըտե...

Էս Վանուշը անօթու գէտինն ա մըղնում, հըլնում կանում, մէ կերպ խասկըցընում, թէ հինքը վորն ա, հընչա էկե: Էս հարեվանն անում, վոր ըտոնք տեղ ա գացած, հէսօր էլ չեն գա, հէնա ուզում անսա՝ դը թող ու գընա, մէկէլ էտ խընամին անում.

- Ախպեր ջան, բա ի՞նչ պիտի անես...

Էս հարեվանը ուզում խընամու դէնը լավանանթ երեվա, կըպում Վանուշին, թէ՝ անխպեր ջան, դու քե ըսկի յէլ վատ մի ըգգա, իմ հարեվնի կօնախը իմ կօնախն ա, դու հէսօր գիշեր կըմընաս մեր տունը: Էս խընամին խըխծօվ մանթ ա հըլնում, շանտ ա ուրխընում: Ըստոնք Վանուշին անում են, նորուց նեռս են էթում, տանում են, նըստըցընում են սեղանի կուշտը, անում են՝ մեր խէտ պըտի մէ բաժակ խըմես, խաց ուտես: Հարեվնի կընիկը յանանց Վանուշի դէնը անան – չանան ա դընում, յանանց էլ խօլոր ա՝ վոր մանթին գանում: Վանուշը քըռտընքի մէջ կուրում, անօթ - զանօթ մէ երկու կըտոր բան ա վերցում, քաշմըշվուկ նըստում: Էտ տան տէրը քէֆն անթէն լավըցըրէր էր, համ էլ հավէլի յեր ուզում խընամու դէնը խըպառդներ. Վանուշին անում՝ գիցի՝ էսի քօ անխպօր տունն ա, չէ՝ քօ տունն ա, ըսկի չըքաշվես, անխպեր ջան, էս տան մէջը հըմէն դուռ քօ դէնը բաց ա: Կընգա սիռտը պանթում, մանթին անում.

- Լավ էլի, Միշօ, ընչէ՞ս մանթուն էտքան նէղում, ի~ի~....

Վեռչը խընամին գըշերա կիսին հըլնում էթում, էս տան կընիգն էլ ինադ - զինադ բէրում Վանուշի խըմար դիվանուն տեղ ա քըցում, լույսերը հանքըցընում, անում՝ պանրկի քընի: Վանուշը պանրկում ու մըտկում, թէ խօրօխպօր տըղէն ինչ լավ հարեվան ունի, հիրանը ինքքան ա զօռում, անում՝ քե անգատ ըգգա, լը անում՝ ուզում էս՝ բաղնիքից էլ օքտըվի...

Հառավոտ Միշօն հանկերը ճըմըռտէլօվ գալում, վոր մըղնի բաղնիք, ջուր գանա հիրեսը: Իմալ վոր դուռը բանում, տէնում Վանուշը հիր բաղնիքի խալաթը վըրէն, գըլօխը թաց, կանցե խանլու դէնն ու շըվըվըցընէլօվ թըրաշվում, տանք ջուրն էլ էն յանանց էթում: Ի՞նչ պըտի աներ. մանտը տընգում, անում՝ իյա~ա... Վանուշը խառվում հիրար, կըմկըմալօվ հինքն էլ չըխասկընում, թէ ինչ ա անում,

թըրաշը կիսատ թողում, շօրերը խաքնում ու հիրանը էտ տընեն թանում դուս...  
Ըտուց յետո էլ էտ յաները ըսկի չէթում:

\*

109

Շանտ գախ մանթ հինքն հիրա ձեռով հիրանը կըրագն ա քըցում, օրինան կի  
խըմար մէ բան անում, բայց դիմացինը ըտուց անիթավորվում:

Մէ դան անխաօրըս կընգա խօրօխաօր տըղեն հիրկըվա յանը գալում  
անխաօրըս տունը: Նըստում են, քախծըր կըսան յեն անում, խառսներն էլ քօ գիցուկ  
սեղան են քըցում: Լավ ուտում են, խըմում են, ուրխընում են, չում հըլնում գըշերա  
կէսը: Էս մանթը խըմելու խէտ մէշու սեր ա հըլնում, հա խըմում ու խըմում, քէֆը  
լավընում, ըսկի չասում՝ յետ ա, հըլնեն էթան: Ախալէրս ու կընհկը (դը ջոչ մանթ են)  
էլ չեն դանում, անձեն - անձու հըլնում են, էթում են քընում են: Խառսներն էլ  
էթում են կուխնին, մընում անխաօրըս տըղեն՝ Միշան: Տըղեն խիվանդ էլ հըլնում,  
բայց ճարն ինչ. էտ խըմուկ մանթին անումն մըստում: Մէ խէլի վախտ էլ  
հընցընում, թէ իմալ հըլնում՝ էս մանթը հըլնում վոր էթա: Միշան հիրան - հիրան  
ուրխընում, հըլնում, վոր ճամփու դընա: Խառսները գալում են, վոր հաջօղ անեն:  
Էն ինչ վոր պըստի խառսն ա՝ անում՝ բարի գիշեր, քանի ջան: Էն ինչ վոր ջոչ  
խառսըն ա (Միշայ կընհկը)՝ ուզում քաղաքավարութուն մըշանց տա, անում.

- Քանի, հընչէ՞ս վըռագնում, թօ մէշօլ մըստիր:

Էս քանին էլ ինչօր ըտուն բանդ հըլնէր, անում՝ խա՞, ու դանում, էլի էթում,  
մըստում, ըսկըսում խըմել: Խա~, թօ խըմա, բայց լիզում էլ չըխասկըցվում: Խեխճ  
Միշան նէրվայնութունից հիրանն ուտում, բայց ձեռը ճար չըկա:

Վայթ անքըրները ըսկըսում են կանչել, մոր խեխճ Միշան հիր խիվանդ  
հալին հընգում էտ մանթի թեվը, մէ կերպ գըլօրկըտալօվ տանում, ըտուն  
խասցընում հիրա տունը: Ըտե յէլ ըտու կընհգն ա կըպում Միշայը, ինչ ասես՝  
անում, թէ հընչես մանթիս տարե, խըմցըրե: Է՛, խեխճ Միշան էլ ի՞նչ պըտի անէր.  
անձեն - անձու, փօր ու փօշման թողում, գալում տունը, էրկու յօրդան թանում  
վըրեն, պարկում ու ըսկըսում տանքութունի մէջը դօխծընել...

\*

110

Գուվարն էթուն Յերեվան՝ հիրա մօրքուրի տունը: Թէ իմալ ա հըլնում՝ միյնս կ հըլնում քաղաք՝ ման գալու: Էթուն էս յան, էն յան, խանութներն ա հիշկըռտում, մաստանօվկէքի ժողօվըռթին ա թնյնընում... վեռչը... Մէկէլ ուզում ճամփի էս յանից հընցընի էն յանը: Խասնում ճամփի մէշտեղը, մնօթնում: Ըտե կայնում, սունկից մէ բուռում ա խանում, ըսկըսում ուտել: Ա ֆտօները հընցնում են, դառնում են, դուրօկ են տալում, ըսկի Գուվարի պետկըն էլ չէ. էնի հիր խացն ա ուտում: Միլիցի ճանրը կըդրում, բառցըրախօսօվ հայտարարում.

- Քաղաքացի՛, փողոցից դո՛ւրս յէկէք, անցէ՛ք մայթ:

Մէ քանի դան էտենց մսում, ըսկի Գուվարի խէլի էթա՞ջն ա. էնի ծամում ու ծամում. հինքը քախկըցի չէր, ուրեմ միլիցեն հիր խէտ չէր:

\*

111

Մեր գեղի Սօլօն մէ հնշկը փուջ, բերանը ծուռ մանթ էր, բայց շատ խօսկաշէն էր. հըմա մէ բան հըլներ՝ ըտու վըրէն մէ բէթ կկա պէր: Մէ դան ըստուն գեղացիքը դըրկում են գ՛օռծկօմի նախակի կուշտը բ՛օղօք, թէ՛ գեղի ճամփէքը շատ վատ են, հընչի՞ չեն շինում: Վոր բերանը ծուռ էր, շատ գախ օտարներին չէր կանում հիր ուզածը խասկըցըներ: Էս գ՛օռծկօմի նախակէն էլ չըխասկընում, թէ Սօլօն ինչ ասում, հիրան – հիրան նեղվում, մսում.

- Այ մանթ, էտ գեղը մէ կարքին մանթ չըկէ՞ր, վոր ըստուն ա դըրկած իմ կուշտը:

Սօլօ՝ դու Սօլօ. ըտու պոռտը էնենց ա տեղը դընում... Յիրանը հավքըռտում, շատ պանգ, խասկընալի մսում.

- Լըսա՛, հընգեր նախակա, գեղը կարքին մանթ շատ կա, բայց էտ կարքիններին դըրկած կարքինների կուշտը, ընծէ՛լ դըրկած քօ՛ կուշտը:

\*

112

Մէ քանի տարի հառէչ ախար մեր վիճակը շատ վատ էր: Վոնչ լուս կէր, վոնչ մխշատանք կէր, վոնչ էլ ուտէլու բան կէր. ցամաք խացն ի՞նչ ա՛ էտ էլ ձեռ չէր կըբնում: Յա~ազարէն մէկ ըստուց – ընդուց օքնութուն էր գալում՝ խաքուկ, խին ու մին շո~որ, մէ - մէ ճանգ մլուր, լօթի, գարուխ, էտենց զիզի - բիզի բաներ: Խա~ա, հօղըրկօղներից շընօրակալ ենք, բայց էտի մեր լայեղի՞ն էր: Է~է~, ի՞նչ անինք:

Քան վանոցին ինչ էր տեսե՞, բալա ջան, ինչ էր կուրցըրե: Սովետի գախ վոր մե քան վանոցու տունը մըղմիր՝ հըմեն ինչ՝ տեղը տեղին, գըռան - գըմփան, լիքը. պակաս տեղ չըկեր: Ձան թի քան վանոցու տընից էլ քուֆտեն ու փախլավեն, յախնին ու տօլմեն պանքուն էր: Սան էլ անխառնում ին (մանթ կանր՝ երկու – իրեք տեղ), հիրանց քըռտինքօվ հըմեն ինչ էլ ըստեխծուն ին, անրուն - կանրունքի տեր ին դանուն:

Բայց դը վոր քանբըխվավ՝ քանբըխվավ. ինչ կանիր, վոր ինչ անիր: Են ա վոր՝ ժողովուռը հուրիչ ճանր չունին: Հըմեն էլ կանրիքի մէ ին, բայց թե բան ա՝ մե լավ բան էլ վոր դըսից գեր, էտի գեղացուն կըխասնէ՞ր. վորը պանչտոնի յեր, ռըշտի յեր, ենի յէլ օքտըվում էր: Շանտ գախ վորն էր գիդում՝ ինչ էկավ, ինչ չէկավ. հիրար մէ տանփանդան անում ին, պըռծում ին: Դը հըմընին չէր էլ խերքի՝ ինչքան էլ վոր դըրկին: Տեղն էլ վոր գալում էր, ճան ին անում, գըլօխ ին գօվում, թե էսքան բան ենք ցըրվե ժողովըռթին: Հանգաճ անօղը վորն էր:

Սե դան Հերեվնա մանթ ա գալում, կըլուբը ժողով են անում: Դը պըստի գեղ ա, համայրա հըմեն տընից էլ ըտե մանթ ա հըլնում: Էս գեղապետը հըլնում, անում՝ մենք շընօրակալ ենք, վոր մեր գեղին յեռսուն թե քառսուն մէշօք անլուր տըվիք, բաժնինք կանրիքավորներին: Գալուստի սիռտը չըտանում, նըստուկ տեղից անում՝ սոթ ա: Գեղապետը դընում չըլըսալու, անում՝ քըսան մէշօք էլ պիսօք բաժնինք: Գալուստը ձեն ա տանում՝ սոթ ա: Գեղապետը մե երկու էտենց բան էլ անում, Գալուստը բօռում՝ չեն հավատում: Գեղապետը վոր տենում՝ Հերեվնա գալուկը Գալուստին թանա ա հիշկում, սըռտըպընդում, դանուն Գալուստին, անում.

- Խէլօք մանց, թե չէ մըկա միլիցա կըկանչեն, թե կըտանեն, կըթանլեն կուտուզկեն, բանդերը կըփըդես:

Գալուստը փափկում, անում.

- Ա՛յտուն հավատում են:

\*

113

Տօ բալա ջան, մըկա անյամը փօխվե. մըկա վորը մէշու թըփավորում, թըռփօշնում՝ հըլնի պանչտոնավոր թե փողավոր, էլ միյնակ ման չըգալում, խէտը օխտ – ութը թիգնապանյ ա պըտըտցընում. կանսե՝ հըմեն անխ ու դողի մէ են: Ախշարքը մըխտըռե էլի, հէլած հիրար ուտում են: Չէ՛, հառէ էտենց չէր, հառէ հըմեն մանթի ձեռ գենք չէր կանի հըլներ, մանթասպանութունը քիչ էր: Բայց հառէ



պանշտոնավորը հիրանը հավելի բանցըր էր պանխում, անէք մանթի խէտ չէր նըստում կանյում, անէք մանթի բարեվ չէր տանում:

Մէ տարի անընվա կիսին Քանվանա ճանրճնի վարիչ Դաննագուլյանը հիր պանդավատով Յերեվնա դաննում Քանվան: Շոք, կըրակ, էս Դաննագուլյանն էլ չաղ մանթ էր. քըռտընքի մէջ ճըփճըփում: Վոր խասնում են Սելանա յաները, էսի շօֆերին անում:

- Ծօվի հափը մէ հարմար տեղ գըրթի, վոր մանթ չըլնի, հիշեն մէշու վողներըս քըռչեն:

Շօֆերը հիր գիցուկ հարմար տեղերը հիշկըռտալով էթում, տնում՝ հըմէն տեղ լիքը ժողովուրթ ա: Վեռչը մէ տեղ տնում՝ քիչ մանթ կան: Քըշում, անփտօն հափից մէշու յեռու կանյըցընում, Դաննագուլյանին անում:

- Դու մէշու բանդ հէլի, շէֆ ջան, յես հէսա գըրքան:

Հիշում էթում էտ մանթիքի կուշտը, անում՝ բարի անջողում, անում են՝ բարով էկար: Անում:

- Տըղէրք ջան, խընթըրում են՝ մէշու էթաք էնա յանը լող տաք, շէֆըս ուզում գա, մէշու վողները քըռչա:

Էս մանթիքը շիվարում են: Ըտոնցից մէգն անում:

- Չըխասկըցանք, անխակ՛ր ջան, էս սանդ ծօվի հափը քօ շէֆին տեղ չանում, մենք պըտի էթանք էն յան, վոր հինքը գա վողները լըվա՞ ...

-

\*

114

Մէկէլ գիդո՞ւն էս՝ ինչըն ա հիշվում՝ վոր մանթ քըսմուկ չըլնում, տեղը վոր գալում՝ կանում խաննաք - չաննաքով յաթէ չէ մանգանլու մէ բան անելով համ հիր գոռօը հառէ տանա, համ էլ խըլղի խաթըրն աննի: Վոր խաննաքը սանդ սըռտով են անում, ուզում են դիմացինին ուրխըցընեն, էտի պոռտէսպոռտ հիշվում:

Բանսեղյան Յագոփին կըգիդաս, հիրանը հըմէն էլ ճաննում են. հառէ Բադիկյանա սովխօզի դերէկտօրն էր, անսող – խօսող, խաննաքչի յէլ մանթ էր: Տանրբեր տեղեր հիրանը լավ էլ շըռջապան ունէր: Մէ օր Առտաշատա մէ սովխօզի դերէկտօր հիր անփտօյով գալում Քանվան: Թէ ինչ խախտում անում՝ միլիցէն կանյըցընում, քըխտերը ձեռէն աննում: Էսի մընում շիվար: Մէկէլ հընգում մըտէն, վոր Բադիկյանա դերէկտօրը հիր ծանօթն ա, անում՝ կանյի հավար քըցեն ընդուն, բանքի մէ բան անա: Գալում Բանսեղյանի տունը, շատ անխսըռտում, թէ՛ էսենց,

Էսենց, թըխտերըս ձեռես անան, վայթե ռայկօմ էլ խաբար անեն... Էս Բանսեդյանը ծըղգում, անսում՝ քօ բանը չէ, դու լը նըստի, մէ կըտօր խաց ուտենք, կէթանք, թըխտերըտ կըվէրցենք: Քան վանցու կանյի ըտուն մէ լավ հարգում, պանդվում, անսում՝ դը քէլա էթանք գայի պետի կուշտը: Յըլնում են, գալում են միլիցաները: Էս Բանսեդյանը վոտօվ գանում, գայի պետի դուռը բանում, մըղնում են նես: Վոր մըղնում են նես, էլ խօ չըթօղում՝ պետը խօսա, խասնում ու մէ չափալաղ խասընում էտ պետին, անսում.

- Տօ շան տըղա, էտ վի՞ր հընգերի թըխտերն էս վէրցե, յես քօ էսենց - էնենցը,- ձեռը բանցըրցընում, վոր մէկէլ գանա:

Էս անտաշատցու լեղին կըղրում, թանում Բանսեդյանի թեվերը բըռնում, խընթըրանք - անղաչանք անում, քաշըռնում, անսում՝ քէլա էթանք, ջանյըմին թէ էտ թըխտերը չեն վէրցած, քէլա էթանք: Էս Բանսեդյանն հավէլի յա հըլըշվօտում, անսում.

- Թո՛ղ ընծի՛, յես ըտու ...

Գայի պետը վըռազ - վըռազ դանրան կը քաշում, թըխտերը խանում, պանզում Բանսեդյանին, անսում.

- Կընէրես, Բանսեդյան ջան, հազար անքամ նէրօղութուն, չինք գիցե, վոր էտի քօ հընգերն էր, կընէրես...

Բանսեդյանը էտ պետի վըրէն մէ խատ էլ մատ ա թափ տանում, հըլնում են դու: Էս անտաշատցին վիզը ծըռուկ՝ Բանսեդյանի հիդվից գալում ու մըտկում. «Բը Բանսեդյանն էլ ա դէրէկտօր, մենք է՞լ... Խալալ ա, անխպէր... Մենք ռիսկ կանի՞նք՝ գայի պետի խէտ էտենց խօսինք»: Խեխճը ի՞նչ գիղէր, վոր գայի պետը Բանսեդյանի խալալ - զուլալ տըղէն էր...

\*

115

Է~է~, տըղա ջան, պանշտոնն ի՞նչ ա, վոր պանշտոնի վըրէն էտենց ուրխընում են. անցօղական բան ա՝ հէտօր կան, հէքուց չըկա: Վորը հըլնում՝ պըտի գիղա, վոր հիշնէլ էլ կան: Ուրեն պըտի էնենց հըլնի, վոր հիշնէլուց յետօ հիրանը սըռտանց բարեվ տըվօղ հըլնի, հիրանը մանթատեղ դընօղ հըլնի, ու հիր հիդվից քըֆուռ տըվօղ չըլնի: Ասուկըս են ա, վոր պանշտոնավոր մանթը պըտի խըխճօվ հըլնի, օրենքօվ հիրար գա ու խէտի մանթին հարգա, չասա՝ յես պանշտոնավոր են, դու իմ լայեղին չես... Ընծի վոր ուզում էս խառցընես՝ մանթ պըտի վօշ մէ բանօվ էլ

չըխըպառտնա. խըպառտնալու ի՞նչ կ'ա: Մ'անթ ինչ էլ վոր ունի, անսու տըվուկ ա. մէկին՝ շ'անտ, մէկին՝ քիչ: Ի՞նչ գիդաս՝ անսու մըտկին ինչ կ'ա:

Մէ մ'անտ ճիժ ինք, մեր հարեվնի ճըժերի խէտ պ'անխկըվոցի, յօթը քար, քարկըտիկ ինք խաղում: Ըտոնց խէրը էնքան բօյօլ էր, վոր մէ անքան գ'ըլօխըս բ'անցըրցըրի, վոր հիշկի ըտու հիրսին, գ'ըլխարկը գ'ըլխիցըս հընգավ: Էտի վոր նըստում էր իշին, վորդներն աննում էր գ'էտին: Վոր տէնում ինք՝ էտի իշին խէձուկ գ'ալում, չինք կ'անում մեզի զըսպինք, ըսկըսում ինք փըխփըխկալ:

Մէկ էլ կըտէնի՝ էտ մեր հարեվնի ճըժերի խէտ կըսկըսինք կըռվել: Ըտոնք մեզի անսում ին՝ դ'ու չաղ էք, մենք էլ ըտոնցն անսում ինք՝ ձ'եր խէրն էլ էնքան բօյօլ ա, վոր էշը տըկից էթա, հինքը խաբար չըլնի:

Մէ էրկու տ'արի հառէչ քուրըս մէ հառցօլ էթում մէ բ'անցըրմըռութ պ'անշտոնավորի կուշտ, էսի գըլթիկ տըվուկ նըստում՝ գիվ'ան պ'անշտոնավոր ա, ըսկի քըվորըս մ'անթատեղ չըդ'ընում: Իմ քուրն էլ ըսկի էտենց բ'ան չըսիրում, անսում՝ պըտի ըստու պոռտը տեղը դ'ընեն: Մէկէլ մեր պըստի գ'ախվա էտ խօսկը հընգում մըտէն, վէրցում անսում.

- Լըսա՛, հընգեր ջան, պ'անշտոնը էշ ա, մէ օր տըկիցըտ կէթա, խաբար չես հըլնի, կըմընաս շիվար ...

\*

116

Էս հըմէն ինչի պ'անճառը գիդո՞ւմ էս ինչըն ա, վոր անմէք մ'անթ հիրա տեղը չըգիդում. մէկէլ կըտէնաս՝ մէ պ'անդայական, բ'անից բէխաբար մ'անթի բ'երին դ'ըրին պ'անշտոնի, անսին՝ քեզնից խէլօքնէրին կ'անրքադըրա, բը էտի հէլա՞վ: Ախար էտի համ գ'ոռժին օքուդ չըբ'երա, համ էլ մէ օր հիրանը խայտառակ կ'անա... Չընչի՞ միյն'ան կ'մըկա, հառէչ էլ էր էտենց...

Մեր Վաղօյ թօռը՝ Գագօն, էն թըվէրին Չերեվան բ'անցըր տեղ էր սօրվում, խէտըն էլ մէ հիմնարկ գիշերները պ'անհակութուն էր անում. բը ի՞նչ անէր, պըտի մէ կերպ յօլա էթեր, հիր գ'ըլօխը պ'անխէր, չում անվառդէր, հընցընէր գ'ոռժի... Մէ օր էլ էտ հիմնարկի պէտի տեղակալը՝ մէ բ'անցըրամըռութ մ'անթ, էս Գագօյը խառցուփոռց անում, թէ՛ վորո՞ն ա, ինչացո՞ւ յա, հուրիշ ինչօ՞վ ա ըգբաղվում... Գագօն անսում, վոր էտենց բ'անցըր տեղ ա սօրվում, էտ տեղակալը մէ րօպէ մըտկում, յետօ շ'անտ լուռջ տօնօվ անսում.

- Էտ լավ ա, վոր ավառտէս՝ կարաս միլիցա դառնաս...

Է~, Գագօ՛, Գագօ՛, էտքան սօրվում էր, վոր պ'անհակից միլիցա դ'առնէր...

Մըկէն ճանփա յա հընգընում, Քանվանա վոտով էթում Սէվան: Դը հառէչ ժամանակ անֆոտ չըկէր, շատ գախ վոտով ին մէ տեղ էթում գալում: Թէ բան ա, իշի բըրիշկա ուռթըր, կանոզա բըրիշկով էթին: Վեռչը ...

Ճանփի կիսին մէ մանթա առաստ գալում, Մըկէյն անում.

- Բարի անջողում, անխալէր, դո՞ր ես էթում:

Մըկէն անում, վոր էթում Սէվան. լըսացէ՛ սէվանցի Դառը Գէվորքը էշ ա ծանխում, հինքը էթում՝ էտ էշն աննի: Էտենց կըսան - գանլանջի անելով մէ էրկու ժամ էթում են, խասնում են Սէվան: Մըկէն անում.

- Ախալէր ջան, դը Դառը Գէվորքի տունը ընծի նըշանց տու, յես էթամ, էշն անեն:

Էս մանթն անում.

- Յընգե՛ր ջան, Դառը Գէվորքը յես են, էշ էլ չունեն ծանխու...

Կանկըռները վոր կըռկըռում են, մանթի դուր ըսկի չըգալում: Ըտու խըմար մէկը վոր վատ բաներ ա խօսում, անում են՝ մի կըռռա: Ախար մեգ - մէկ էլ հառցակվում են մանթի վըրան: Յերեվի վոր ճանքերի՞ն են բան անում, թէ ի՞նչա~լ...

Սէ օր Մարոյ Սիրունը ճանփով էթում, մէկէլ կանկըռները թափում են վըրէն, ըսկըսում են կըտըցել, քիչ ա մընում՝ հանշկերը խանեն: Սէ կերպ փըրգըվում, անընըվա փախնում: Առշավիլն էտի տէնում, խանանքվանի Սիրունին անում, թէ ըտոնք Ջանօյ կանկըռներն են, էտենց հէլած, մանթ են ուտում: Շընէրին կանպում են, Մարոյ Սիրունին հառօրկում: Ֆըռում Ջանօյ յանը, էլ ինչ պիտի, վոր ըտուն չասում: Ջանօն գըլխի յա հընգընում, վոր էտի Առշավիլի անուկը գըլնի: Ասում.

- Դուզն ա, էտ կանկըռները իմն են, բայց ըտոնցը Առշավիլն ա քօ վըրէն քըս տըվէ:

Սէշու յեսօ Սիրունի յու Առշավիլի բօռբըռոցն ա հընգում մանլէն:

Մեր գեղը մե ուշուչիչ կեր. Գասպարյան Մանիկոն ին անուն: Շատ լավ, խօսկաշեն մանթ էր: Հինքը չաղ մանթ էր, լավ էլ ուտող էր: Ասում էր.

- Մանթ իշքան էլ կուշտ հըլնի, վոր մե լա~վ թըլթըլան քուֆտան հըլնի, չո՞ւտա:- Հինքըն էլ պանդասխանում էր: - Կուտա~: Վոր մե խատ լա~վ խօրօվուկ չալաղաջ հըլնի, չո՞ւտա: Կուտա~: Վոր կանթի գառի լա~վ էփուկ խաշլամա հըլնի, չո՞ւտա: Կուտա~: Ըտուց յետօ վոր մե ջըրալի, խասուկ տանձ հըլնի, չո՞ւտա: Կուտա~: Վեռչըն էլ վոր մե կանոմիր ձըմէրուկ հըլնի, մե դիլիմ չո՞ւտա: Կօ կուտա յու կուտա էլի: Բը էլ ի՞մալ էք անուն՝ կուշտ են, չեն ուտում:

Մե դան էս Գասպարյանը էթում խանութ, վոր թոռան խըմար կես կիլօ կանֆետտ աննի: Խանութչին ըսկըսում թըխտից կուլօք սանրքել (են գախ ցելաֆօնից տօբրակ չըկեր), էս Գասպարյանը տենում՝ խանութչին մե յանքան թըխտով հազիվ մե կուլօք սանրքեց, անուն՝ էլ կանֆետտ մի լից, էտի դի կըշեռքին, կես կիլօ գըքա:

\*

120

Մանթ են անսե, վոր ներվայնութունից վոշ թե կըռիվ - կանլնակալ անա, հիրանը նըշանց տա, թե յես էլ էսենց բօռքըռալ են գիդում, անլ էնենց մե բան անա, վոր էտ ներվայնացընօղն էլ հիր անրուկից փօշմընի, էտի հիրանը դաս հըլնի:

Չիչու Հենօն բազառը կանտօլ ա ծանխում, մե հանթան հունթէքօվ կընիկ գալում կանտօլ առնէլու: Հա գանլան յա տանում, անբախ - զամբախ հառցեր ա տանլում: Հենօն կանտօլը քաշում, յանանց էլ ներվայնանում: Գալում փողը տանլու գախը, հըմա էտ կընգա էրկու ձեռին էլ վէշ ա հըլնում, չըգիդում՝ ի՞մալ անա, վոր պօռթմանից փողը խանա, տա. չըֆանյում վէշերը դընա գետին: Դառնում, Չիչու Հենօյը խառցընում.

- Էս վէշերըս ո՞ր դընէմ:

Չիչու Հենօն հիրանը չըկուրցընում, դանխլօվ թըռնում էն յանը, կըզում, անուն.

- Դի մըշկի~ս:

Չընչի դուզը խօսալը շանտրդութուն յեփ ա. տեղը էկավ՝ դուզը խօսկը շըրըփցըրա, հընցի գ՛ընա: Լավ ա անսեն՝ գ՛էշ ա, քան թէ անսեն՝ էշ ա: Բը ձ՛են չանես՝ գիդան հանրիփ ես: Մանավանդ մըկա, վոր սանդի ուշկ ու միտկը հուրիշիմ խափելն ա...

Չիչու Չենօն ու Սանքէյ Վանօն Չերեվան կանոտօլը ծանխում են, պըռծում են, անսում են՝ մէ խատ էլ թըրաշվենք, նոր էթանք գ՛եղ: Մըդնում են թըրաշ անէլու տեղը. հառէչ Վանօն ա նըստում: Էտ թըրաշ անօղը անպետկ մանթ ա հըլնում, հիրան – հիրան մըտկում, վոր ըստոնք գ՛եղացի մանթ են, կանրէի յա խափել՝ շանտ փող ուզել, չեն ֆանյմի, կըտան: Վանօյը վոր թըրաշում, պըռծում, խինգ հազար դըրամ ուզում: Էս Վանօն գ՛ընի վըրէն շիվարում, բայց քաշվում, վոր անսա՝ թանգ ա, գիդում՝ կանրքն էտենց ա: Խանում, խինգ հազարը անձ՛են - անձ՛ու տանում: Էսխանդ Չենօն ա նըստում: Վոր պըռծում, Չենօյ էլ խինգ հազար դըրամ ուզում: Չենօ՛, դ՛ու Չենօ... Էտ թըրաշ անօղին վոտից գ՛ըլօխ մէ լավ չափում, անսում.

- So գանդան, գաճի մետըր քաշելը երկու հազար դըրամ ա, իմ էսա պըստի հիրեսը թըրաշելը՝ խինգ հազար...

Ըտե մէ երկու խօքի նըստուկ են հըլնում, էտենց քօ նըման ըսկըսում են ծըղգալ: Էս թըրաշ անօղը շըշկըռվում, Չենօն էլ անսում՝ ումուդ, խարամ խացօվ տում չեն պանխի, մէ խատ էլ քօ գիցուկ մանտ ա թափ տանում վըրէն, ու թօղում են, դ՛ուս են գալում...

Դը Սօվետի գախ ճանփէքը բայց ին, չէփ. վորը յեփ ուզեր, դոր ուզեր՝ անգատ կէթեր գ՛ըքեր: Կանոտօլը վոր Չերեվան թօշ էր տանում, չէր ծանխում, կանհիր տանհիր Վըրաստան, Բաքու, Կըռասնադա~ր ... Ի՞նչ անհիր, խօ չիր թօղի՝ փըջաներ, պըտի մէ կերպ սանխճընհիր էթեր:

Փանքանդ մէ շուլուխչի, անսող – խօսօղ մանթ կան՝ Բաղօյ Չայկ են անսում, լավ էլ շուստըրի յա, սանդ փանքանցիքի նըման: Էսի մէ տանրի Բաքու կանոտօլ ա տանում, կանյնում բազառը, ծանխում: Բայց թանսի նըման էտ գախ կանոտօլն էնքան հեժան հըլնում, վոր լըռիվ ծանխիր՝ հազիվ էթալ - գալու ծանխաը խաներ: Էս Չայկը թանում - բըռնում, անսում՝ անրի մէշու խառդախութուն անեն, անէք աննօղին մէշու խափեն. հիրանց վըրէն չերեվա, բայց ընծի օքուդ գ՛ըլնի. բանքի մէ երկու կանպեկ տանեն, մէ ցավ խօքան, էկեր են խատեր են ըստե, խօ դանտակ յետ

չե՞մ դ՛առնա: Էտ մըտկերի խէտ հըլնում, մէկէլ մէ հայ կընիկ գ՛ալում կանուտ  
անմէլու: Էտի յեռուն կիլօ կանուտ ա ուզում, Էս Զայկը կըշեռքին ձեռ ա գանում,  
քըսան կիլօն յեռունի տեղ հընցըցընում: Էս կընիկը կանուտը տանում հիր խէտի  
ջանէլի ձեռը, ուրախ – ուրախ էթում են: Մէ կէս ժամ հընսնում, Զայկի հանչկն  
անում, տէնում Էտ կընիկը յեռտտ – յեռտտ գ՛ալում հիր յանը: Ինչ անա, ինչ  
չանա, թափ - թափ տանս կիլօյ չափ կանուտ լըցում սէտկէն, դ՛ընում կըրաղ: Էս  
կընիկը խասնում Զայկին ու ըսկըսում բօռբըռալ, անպանդվել. էլ ինչ պիտի՝ վոր  
Զայկին չասում: Էս Զայկը լըսում, պըռծում, անում.

- Քուր ջան, պըռծա՞ր. դը մըկա ընծի լըսա: Յես յեռուն կիլօ քաշի, դ՛ըրի  
ըտե, դ՛ու յու քօ խէտի ջանէլը երկու սէտկէն տանրեր իք, մէկը թօղեր իք, յես էլ վէռցեր  
են, դ՛ըրեր են ըստե. անսի հանքանք գ՛ըքքաք, կըտանէք: Էս էլ ձեռ կանուտը: Լասա  
տէնամ իմ մեխկը վո՞րն էր, վոր ընծի տտենց լավօթիր:

Էս կընիկը խամվում հիրար, գ՛ույն տանում, գ՛ույն անում, հազար անքամ  
նէրօղութուն ա խընթըրում, անօթու չըգիդում՝ ինչ անա, Էս տըրէթ իսկականից  
կանուտը մըտէն էթում, թօղում ու շըշկըռվուկ դ՛առնում, էթում:

Մէշու յետօ մէ թափօվ, դըրբօվ թուրք ա գ՛ալում: Բաղօյ Զայկը հիրանից գ՛օյ  
ըստում էլ մէ տանը կիլօ խափում: Թուրքը անում էթում, բ՛այց հավէլի շուտ ա յետ  
դ՛առնում: Զայկը վոր Էտի տէնում, շուշուտ մէ յաշիկ քաշում վոննէրի տանը,  
հըլնում կանում վըրէն, գ՛ըլխարկն էլ գ՛ըլխից խանում: Էս թուրքը խասնում,  
հիշկում Էս յան, էն յան, Զայկին խառցընում, թէ՛ ըստե մէ կօլօտ մանթ էր կանուտ  
ծանխում, հո՞ւրա էնի: Զայկը անում՝ էնի հիր կանուտը ծանխեց պըռծավ, գ՛ընաց:  
Թուրքը փօր ու փօշման թօղում, էթում: Էս Զայկը քանի կանուտը չըծանխում  
պըռծում, էլ Էտ յաշիկից չիշնում:

\*

123

Մեր Նունիկը շատ ճանաչիկ կընիկ էր, ընդուն նեղն հընգընել ըսկի չըկեր,  
ի~իմալ հըլներ՝ մէ յելք կըգըթներ: Ասենք բ՛ան ա՝ թէ քեզի մէ դիպչօղական բ՛ան  
անսեր չէ՞, ու դ՛ու անվիր, դ՛առնիր անսիր՝ հընչե՞ս տտենց անում, մանտը կըդ՛ընէր  
հըղեղինին ու կանսեր՝ խե՛լք, յես տտե՞նց ի անում, յես քօ խէ՞տ ի, յես անում ի... Ու  
Էսխանը լըռիվ հուրիշ բ՛ան կանսեր: Էլ կանի՞ր վըրէն հաստադիր, թէ հինքը ինչ էր  
անսե... Գիդո՞ւմ Էս՝ սըռտին կեխտ չըկեր, մանթի սըռտանց չէր վիյավորի, ըտու

խըմար էլ հիր անուկին տէր չէր կանցում: Եսատե կանսեր, էնատե մըտէն կէթէր, ըսկի քէնչի չէր: Քուրըս շատ էլ ջիգրօվ էր, հըմընին խասնում էր, բայց մէկ օրան մէկ օր հիրես չէր տի, թէ յես քէ լավութուն եմ անրե: Ըտու խըմար էլ մեր անսկ ու տըկի մէջը վոր մէ բան հըլնէր, հավարը թանլում ին Նունիկին՝ քըվորըս: Քո՛ւր ջան, հագա~ր օղօրմի քեզի, մեր ըշտաբ օքնութունն էր: Մէ օր էն մէկէլ քըվորըս թռը գիշերը վատընում, էնեց ա հըլնում, վոր պըտի տանեն Քանվան բըժըշկի: Բայց ինչօ՞վ տանեն, անվտօ՞ն դոր էր: Ձանգում են Նունիկին, թէ՛ խասի: Քուրըս հըլնում, գըշերա կիսին հիրանց ճանը կանցում: Տէնում մէ անֆտօ էկավ: Քարն անում ձեռը, անֆտօյ դէմը կըդրում: Վոր անֆտօն կանցում, քուրըս դուռը բացում, նըստում անֆտօն, զաստավիտ անում, անսում՝ քըշա քըվորըս տունը: Ես շօֆերն էլ լավ տըղա յա հըլնում, խէլօք – խէլօք յենթարկըվում: Ետ անֆտօյօվ ճըժին տանում են Քանվան, փըրգում են: Բան, բալա ջան, քուրըս այտեց բայեվօյ կընիկ էր...

Մէ օր էլ Նունիկն ու մեր Քընանը դուռը կանցում են հըլնում, մէկ էլ տէնում են՝ Աղօյ Խաչիկը դըբռօցից անշակեռտ ա բէրում հիրա տունը, վոր գոռօ անեն: Դը էտ գախ էնի դըբռօցը ուսմասվար էր, վոր պէտկ էր հըլնում, անշակեռտ էր բէրում, հիրանը օքնում ին: Նունիկը դանում, Քընանին անսում.

- Ահա, էլի բէրեց:

Խաչիկը էտի լըսում, ֆըռում, անսում.

- Ի՞նչը բէրի՝ էլի տէսար:

Նունիկը հիրանը չըկուրցընում, անսում.

- Յես քօ խէ՞տ ի:

- Բը վի՞իր խէտ իր,- ճէվըցընում Խաչիկը:

- Յէ~էնա հա, յես ընդու խէտ ի,- անսում Նունիկն ու նըշանց ա տանլում հարեվնի կընգան, վոր մէ բան հունթը զանուկ գալում էր հիրանց յանը:

Խաչիկը էլ բան չկանում անսա, գըլօխը կանսում, թօղում էթում:

\*

124

Մանլուլի Անտավազը էթում բազառ, բայց կուշտը փող չըլնում, վոր մէ բան աննի: Ֆըռում, ֆըռում, վեռչը չըկանում հիրանը զըսպա. ախար դեղին, ջըրալի տանձը դուրը շատ ա գալում: Փող էլ չունի: Ի՞նչ անա, ի՞նչ չանա՝ էթում, կանցում տանձի վըրեն, ըսկըսում ուտել: Մէ~կ, էրկո~ւ, տէրը Անտավազին թանս ա հիշկում: Անտավազն էլ հիրանը չըկուրցընում, անսում.



- Յընչե՞ս թանս հիշկում. դուրըտ գալում՝ վեռցա մէ խատ էլ դու կե:

\*

125

Վոր անում՝ անէք մանթ հիր վոտը պըտի հիր յորդընի չափ պանգա, խօսութ չա՞սում... Շատ էլ քօ մըտկօվ մէ բան հընսնում, լը տե դիմացինըտ կանի՞լ ա, էտ ինչ վոր ուզում ես՝ հըլնէլացո՞ւ բան ա... Թէ չէ կանօղա թըռանատեղ դաննաս...

Մեր հարեվան Գառսօն ջանէլ - ջանէլ մեռնում, հիր կընիկ խանումն ու իրեք ճիժը մընում են անտեր: Յիր մանգունքին պանխէլու խըմար խանումը հիր նանուսը քաշում հիրանը, մէ գոռօ ա ճարում. հառավոտ շուտ էթում, մութը տըփում՝ նոր տուն ա գալում: Մէ~կ - էրկու, տէնում՝ ճըժերը էտենց չեն հարմըրվում, չեն կանում յօլա էթան: խանումը մէ անտեր - անտիրական ջանէլ անխճիկ ա ճարում. էտի շատ քանսիք ա հըլնում, օրվա խացի կանօտ, ըտու խըմար էլ ուրախ - ուրախ գալում մընում խանումի տունը՝ ճըժերի կուշտը: էտենց խանումն անխշատում, հիրուր խէտ մէ տան մէջ անբում են, ճըժերին ջօջըցընում են, էտ անխճիկն էլ դաննում խանումի անխճըկա նըման մէ բան:

Ի՞նչ ա. հանչըտ թառթում ես՝ մէկէլ տէնում ես՝ ճըժերը բօյ քաշին. տըղերքը հէլան բանակի, կանքէլու, անխճըգները՝ մանթացու... Տանրիները էտենց թըռնում են, խանումը հիր հընդանիքօվ նեղութունից պանդօվ դուս ա գալում: Տըղին տանում են բանակ, անխճըգներին էլ հիրար հիդեվ տանում մանթի, տունը մընում են էրկըսօվ: էտ քանսիք անխճիկն էլ վոր ըստե լավ ա անբում՝ կըլավնում, կանկավորում, հըլնում մէ մարալ: էսխան դըստուն ա օրական ուզօղ գալում, բայց խանումը չըվըռագնում, անում պըտի մըջընէրի լավ մանթին ջօկեն, նոր ըստուն էլ տան մանթի. ջանէլ ա, հընչի՞ մընա, թօ էթա անբրի: Չում խանումը կըթանէր - կըբըռներ, էրկու ումբից թօփալ մէ ուզօղ էլ ա մէշտեղ գալում, խանումի անլանաթը կըդրում. հըմընօր գոռօի էթալուց դէնը կըդրում, գոռօից գալուց դէնը կըդրում, թէ՛ էտ նըխշաթըթաղ անխճըկան պըտի տաս ընձի: Շանդ վոր գանլան յա տանում, խանումը պանման ա դընում, անում.

- Լավ, տըղա ջան, վոր էտենց ա, հէքուց գըքաս, անխճըկան կըխանեն հանյանթը. հընգի հիդեվը լանրա: Թէ վոր բըռնիր, քոնն ա, տանր...

Պանգ չէ՞. էտի էթում ու էթում, էլ դո՞ր գէր...

\*

126

Ախար, ունուդ ջան, սուքը ի՞նչ ա, վոր անսում են: Իմալ անսում՝ սուքը տուն ա քանդում: Մէկա՝ մէ օր էտ սուքը ջըրի հիրես դ՛ուս գըքա, բը անօթ չէ՞... Չեն գիդում՝ դ՛ու իմալ, բայց քօ օղօրմած խօր բէրնից սուք բան ըսկի դ՛ուս չէր գե, չէր էլ թօրգի, վոր հուրիշները սուք անսին. հընչի յես պըտի անսեմ՝ նոր դ՛ու գիդա՞ս: Բայց մէ բան անսեմ. սուք էլ կան, սուք էլ: Մանթ կան՝ սըթերը մօլօնում ա, վոր հուրիշներին ծըղզըցընա, հինքը գիդում էլ, վոր հիրանը չեն անվատա, էնա վոր հիրա պանդուխունը յետաքըրքիր ա դանջընում: Վոր ուզում ես գիդաս՝ էտի ըսկի սուք էլ չէ, կըսան յա էլի, չես ուզում՝ մի լըսա ...

Դանոյ Միլիտի սըթերից ըսկի չըկեր, մէ սըթից բանը էնենց կըծանխկըցըներ, էնենց ձեվէրօվ կըպանդներ, կանսիր՝ իսկականից էտենց ա հէլէ: Մէ դան էսի սանրից գալում, հընգերներին հավքում ու պանդում, թէ իմալ չօլի մէջը գիլվանքը թափում են հիր վըրէն, գըլնի մէ յեռսուն գէլ: Զիր ձեռնի էլ մէ փեդ կանր: Էտ փեդօվ մէ քանի գիլի թիթ ու մըռութ լա~ավ ջընջըխում, մէկէլները փախնում են, հիր ձեռից հագիվ անգաղվում են: Զընգերները անսում են՝ սուք ա, էս Միլիտը հավէլի յա ծախկըցընում: Զընգերները էլի չեն հավատում, հա զօռում են, թէ՝ սուք ես անսում, վայթէ մէ գէլ ա հէլէ: Վեռչը Միլիտը մուղուր ա գալում, անսում.

- Լա~վ, ձեր տունը շինվի, հընչէ՞ք էտքան անհավատ: Ի՞նչ անենք, թէ յեռսուն գէլ չէր: Խա, մէ գէլ էր, բայց հաստադ չեն գիդում, կանրօղա շո՞ւն էր:

\*

127

Դանոյ Միլիտը կըռվի մանակից էր ու շատ էր սիրում էտ մանսին պանդել: Մէ դան էլ հուշանձանի բանջան գախ էտենց մէ բան պանդեց.

- Վոր մըտանք Բեռլին, Զիդերը խաբար հէլավ: Զիրա նանգիր - վանգիրին ճանփեց, թէ՝ գանգեք, խառցըրէք՝ վորն ա Դանոյ Միլիտը, բէրէք իմ կուշտը: Էկան, խտըս ծանօթացան, խընթըրվան, յես էլ չըմեռժի, հէլա գանցի Զիդերի կուշտը: Զիդերը վոր ընձի տեսավ, շատ ուրխըցավ: Նըստանք, դէսից - դէնից կըսան անրինք: Դը յես էլ դանտակ խօ չի՞ գանցէ. խտըս Քանվանա քիֆտան, իխշան ձուկի տանրե: Զինքն էլ խինգ անտըղ հայկական կօյնակ դըրեց, կերանք, խըմինք, հընգերացանք, կըռիվն էլ ըտե պըռծավ:

Ասի.

- Միլիտ, ինչ անսում ես՝ հավատալու յա, միյնանկ մէ բան չեն խասկընում. էտ նեղ մանջան Քանվանա քիֆտեն ու իխշան ձուկը հո՞ւստ ճանրիր:

- Քօ տո՛ւնը շինվի , - անսավ , - ձեռքս քարի տա՞կ էր. մերոնցը խաբար անրի,  
յեռագրոսվ Քանվանա ճանփին, էկավ:

\*

128

Մանկատունը գեղի մէջը ճըժերին հավքուն գըլխին, հիր անկածներից ա  
պանդուն.

- Կըռվի գախն ցեմէցը վոր պուլիմյոտով շատ ցեղեց մեզի, ընծի – ընծի անսի՝  
էսենց վոր էթա, վայթէ յես սանղ չընընամ, մէ բան պըտի անրվի: Յիշկացի կող ու  
կուշտըս, տեսա՝ մէ բօշկա լիքը ջուր ա ըտե դըրուկ: Ձըմեռ էր, քառսուն անստիճան  
մանրօզ, բայց դը ի՞նչ պըտի անի. ընծի թանլի էտ բօշկի մէջը: Էլ խաբար չեն, թէ ինչ  
հէլավ: Դու մի անսա, պանղեր ի, էտենց մանցեր ի բօշկի մէջը: Կըռիվը վոր պըռծավ,  
դը անմառ էր, բօշկի ջուրը խալավ: Նոոր յես բօշկից հէլա: Յէլա, տենամ՝ ի՞նչ. չոռս  
բ՛օլորը կանանչ, ծանղիկ - ծանխկունք, լիքը խընծորի ծանռ, անմէք խընծորն էլ՝ էտա  
ձեր թօփի չափ: Էնենց էլ անրեվ - անուշ էր. շօրերըս վըրէս վըռագ չօրցան: Էս յան,  
էն յան հիշկացի՝ մանթ - մանդան չերեվաց: Մէկէլ մէ պըստի ճընջուխ էկավ, թառավ  
հուսիս, ըսկըսեց իմ խէտ խօսալ: Անավ՝ անրի գըլնի՝ քեզի մէ խօրօտ – նըխշուն  
անխճըկա խէտ կանրքեն, լավ տուն ու տեղ տամ, մանց ըստե, անբրի, բայց պըտի քօ  
Քանվանը մըտկիցըտ խանես: Վոր էտի լըսացի, յեռսօտա. ի՞նչալ թէ՝ Քանվանը  
մըտկիցըտ խան: Ձեռքս էսմալ թանլի, վոր ըտուն բըռնի, վիզը քաշի, ճըվտըկախան  
անի, էտի թըռավ, լեղապանտառ փախավ, գըլթսն անգատեց... Տօ ճըժեր ջան,  
մըկա յէլ բան ա սօրվե՝ էրագիս ա գալուն, ընծի գանգանիչ հընգուն, անսուն՝  
միտկըտ չես փօխես: Ասուն եմ՝ տըղա յես՝ իսկականից անրի՝ խօսանք, հընչե՞ս  
էրագիս գալուն, անսուն՝ իսկականիցն էլ էրագ ա...

\*

129

Ձեր հարեվան Ըսնօն էլ բօլ սուքասան ա՝ գիդո՞ւմ ես: Մէ դան էտա Մէփօյ  
մուրուսը\* տըղէրքով կանյուկ ինք, անմէք մէկը հիր խօպանից մէ բան պաղմուն էր:

Էս Ըսնօն էլ գ՛րլօխ գ՛օվաց, թէ խէրու հիրանք խօպան տեղ խիճգ խօքօվ իրեք հարուր վացուն գ՛առ ա կէրած: Ասի:

- Ըսնօ, խէրու քա՞նի ա միս մ ա ցիք խօպան:

- Խիճգ ա միս,- համայրա ընծի բ՛ըշտեց Ըսնօն:

- Ըսնօ՛ , - չըդիմացավ քառսուն տ ա րվա խօպանիստ Մ ա քսիմը,- դ՛ուս ա գ՛ալուն՝ խիճգ խօքօվ օրը իրեք – չոռս գ՛ա՞ն էք կէրե, էտենց չըլնի, մէշու հիչի:

Ըսնօն ճըլէրը կ ա յնըցըրեց ու բօռաց.

- Գ՛ըլնեմ ու չեմ հիշնի, խասկըցա՞ր:

Ասավ ու ֆըռաց գ՛ընաց:

\*Սէփօյ մուրուսը - Սեփոյի տան դիմաց

\*

130

Ունո՛ւղ ջան, ա մէք մ ա ռթ պըտի հիր գ՛ոռծին հըլնի, հիրա հ ա շկը հիրա դ՛ուռը պ ա խա: Խըլղից ի՞նչ գ՛ոռծ ունես. վիրը իմալ դ՛ուր գ՛ալուն՝ էնենց էլ ա բրուն, քե՞ ինչ: Բ՛ամփասանքը, մ ա դնըչութունը ի՞նչ ա, վոր ա նուն են. էտի փէշ ա կ չէ: Լը վոր կընանիքն են բ՛ամփասանք ա նուն՝ ջ ա յն ա մ: Բ՛այց վոր տըղամ ա ռթիքն են պ ա րապութունից ըստե - ընդե քօմուն ու կընգընէրից էլ բէթ ա ր կէյբ ա թ ա նուն՝ էտի ըսկի բ՛ան չէ: Մ ա ռթ էլ կ ա ՝ գ՛ըքա կ ա սա՝ էսինչը քե լավ չէր ա սուն: Տօ շ ա ն տըղա (դը ա րի յու մի ա սա), ա սե՝ ա սե, բը դ՛ո՞ւ հընչես ընծի խաբար տ ա լում. լավութո՞ւն են ա նուն: Սըռտօվըտ չէ՞ր՝ թօ պ ա դասխանը տիր, ընծի ա սուն են՝ վոր ի՞նչ: Էտի քօ դ՛ուրն էլ ա էկե ուրեմ, ու դ՛ու խըլղի բ՛էրնօվ ուզում են ընծի կըծես, վո՞րը չըխասկընում... Ինչ ուզում հըլնի, մ ա ռթ պըտի հուրիշի գ՛ոռծերին չըխառվի, հուրիշի տ ա ն յելումուտը, լավ ու վատը չըվէռցա - դ՛ընա. դ՛ուրըտ չըգ՛ա՞լում՝ յան տու, գ՛ընա, գ՛ըլօխտ էլ դիմջ քօ ուզածօվ ա բրի: Վե՛ռչ:

Սէ պ ա շտոնավորի կընիկ հարեվնի խէտ ա հըլնում: Էն մէկէլ հարեվանը գօզ ա դ՛ընում, հըմէն ինչը տէնում ա, էթում էտ կընգա մ ա ռթին խաբար ա տ ա լում: Էս պ ա շտոնավորը, փօխանակ ըստուգա էտ ա սուկը, հիրան – հիրան ա հըլնում, ձ՛ենը քըցում գ՛ըլօխը, բօռբըռում, էս խաբար տըվօղին դադի յա տ ա լում՝ գիվ ա հիր կընգա վըրէն սուք ա ա սուն, ա նունը խանում: Դադը հըլնում, էս խաբարբըզիկին տըսնըխիճգ սուտկա նըստըցընում են (տօ լավ էլ ա նուն են):

Սէ ժուկ հընսնում, գ՛եղի մէջը պ ա րապ - ս ա րապ, ա նբ՛ան - ա նգ՛ոռծ մէ քանի մ ա ռթ ըսկըսում են կէյբըթել: Խօսկ ա բ՛ասվում, թէ վիր կընգա հ ա շկըն ա դ՛ուս, վիր կընիկը վիր խէտ ա: Էս տըսնըխիճգ օր նըստուկ – հէլուկը ա սուն.

- Դե՛նք, յես էթում եմ:

Ա՛ սում եմ՝ հընչի՞, քե ի՞նչ հելավ:

Ա՛ սում.

- Յան շկիս տետուկի խըմար նըստըցըրին, ա սին՝ սուք ես ա՛ սում, էտենց բ՛ան չէլե: Լըսուկիս խըմար կօ կընըստըցընեն ու կընըստըցընեն: Դե՛նք, դե՛նք, յես էթում եմ:

\*

131

Անառ բիթուն մեր մանլի կընանիքը էտա պատին նըստուկ եմ: Յան լրանք տունը գոռօ չըկա, պատապ եմ, բը ինչ անե՞ն... Շատ գախ ըսկի կըսան յէլ չեն ա՛ նում հա՛. ա՛նձ՛են - ա՛նձ՛ու նըստում եմ, ի՞նչ գիդաս՝ մըտկով դոր եմ էթում, հուստ եմ գալում: Էտենց ա՛րեվի տակ բըժըժում եմ էլ... Մեգ - մէկ վոր թափով ա՛ ֆտօ յա հընսնում, թօզ ու դուման ա կապում, հիդվից էրկու բ՛ան ա՛ սում եմ, էլի ձ՛ենըները կըդրում եմ, նըստում եմ:

Բայց ինչ ա՛ վոր մէ նօրութուն հըլնի՝ խօ հիրար յեռք չե՞ն տա... Է՛ն ձ՛ենն եմ քըցում, մանլէն ա՛նում եմ գըլխըներին, շինում եմ գոռտի գօլ... Բամփասանքի գախ էլ ձ՛ենները դընում եմ բ՛երներին, ցածըր ձ՛ենով էլ խօսում եմ, գիվան հիրանք բ՛անից խաբար չեն, հան շկըներն էլ շուշուտ էս յան - էն յան եմ տանում - բ՛երում:

Մէ օր էտենց կընանիքով նըստուկ եմ հըլնում, Պուպույ Արուսը ձ՛եռը դընում բ՛երմին, ցածըր ձ՛ենով ա՛ սում.

- Քա էտա Սիրունի խառսը էտ ի՞մալ ա՛ խճիկ ա. էսա էրկու տանրվա խառս ա՛ մէկ օրան մէկ օր ըտու ձ՛ենը չըլըսացինք:

Խամբօյ Յըռօզը գըլխի յա հընգում, վոր էտի բ՛ամփասանքի տուտըն ա բ՛ացում, բ՛այց հիրանը դընում մէն միդի տեղ, խառցընում.

- Քա կընի՛կ, հընչի լա՞լ ա, խօսալ չըգի՞դում ...

\*

132

Տօ բալա ջան, մանք պըտի ֆանյով հըլնի, մէշօլ քըթի ծակ ունենա. հիրա լավն ու վատը ջ՛օկա, գիդա՛ վորդե ինչ ա խօսո՞ւմ, ինչ չըխօսո՞ւմ: Թէ չէ մանք կա՛ն՝ ա՛նպոչ գըթլի նըման հընեն տեղ մէջ ա հընգընում՝ համ հուրիշին ա պատվադիտ ա՛նում, համ էլ հիր գոռօըն ա թըրբում:

Մեր Սեվանա ծովը հառել է լիքը ձուկ էր. սանդ էլ գ'ոխտուկ - անլենի բ'ըռնում ին: Բայց վոր ըսկըսեց քըչընալ, պետութունը էլ չըթօրգեց, վոր վիր սիռտը յեփ ուզա՝ էթա ձուկ բ'ըռնա: Եսխան գ'ոխտուկ ին բ'ըռնում, շատ գ'ախ էլ էտ չըթօղօղների խետ լիզու յին գ'ըթնում, հիրանց գ'ոռծը անում ին: Բայց վոր ռեյդ էր հըլնում չէ՞, վիրը բըռնում ին՝ բօ~լ նեղում ին, մինչեվ անքան դադի յէլ ին տանում:

Խա, էտա մեր օղորմածիկ Վաղօյ տըղեն՝ Աշօղիկը, տենում՝ չըկանում անբի, հիր հընդանիքը պանխա, էթում դ'առնում ձուկ բ'ըռնօղ: Մե~էկ, էրկու՝ մէ էրկու կանպեկ էտենցութունով ձեռ ա քըցում, մէշու յօլա յեն էթում, բայց մէ օր էլ հընգում ռեյդի տակ: Շանտրին են բ'ըռնում, Աշօղիկին էլ՝ խըտըները: Վիրը վոր բ'ըռնում են, ըտոնց մօտեն ինչ կան - չըկա վերցում են: Աշօղիկի ձեռից էլ քըսան խատ սիգա, մէ խատ թօռ, մէ ջուխտ էլ քըրքըրվուկ ջ'ըրի սանպուկ են անում: Չէ~, լօտկէ՞ն դոր էր, Աշօղիկը հուրիշի խետ ըտու լօտկով էր ծով էթում: Էտ բ'ըռնըվուկներից վորը վոր կանում՝ ծանօթով ա, բարեգմով ա թէ իմալ, հիր գ'ըլօխն անգատում: Վորն էլ վոր չըկանում մէ բան անա, ըտոնց վըրեն գ'ոռծ են բ'ացում, դադի յեն տանում: Դը պանզ ա՞ Աշօղիկին էլ են դադի տանում: Դադից հառել դադավոր թօրգօմյանը մեգ - մէկ յետաքըրքըրվում, թէ էտ բ'ըռնըվուկներից վորը ինչ մանթ ա, ինչացու յա: Աշօղիկի խըմար էլ անում են, վոր անտեր - անտիրական, խեխճ ու մեխճ տըղա յա՝ օրվա խացի կարօտ: Դը թօրգօմյանը խըխճով մանթ էր. էտի հըմենն են գիդում: Ասում՝ բ'երէք ըտուն ձեվական մէ տըսըխինգ սուտկա տանք, թօղենք թօթա: Դադի գ'ախ մեգ - մէկ կանթում են, թէ էսինչի ձեռից աներ ենք էսքան ձուկ (անենք՝ հիցուն խատօ~վ, խարիր խատօ~վ), էսքան թօռ, էսինչ, էսինչ... վեռչը... Զանապան դասխան պանտիժ էլ տանում են: Վոր գ'ալում Աշօղիկի յեռքը, հըլնում են անում են, թէ էտ քաղաքացուց վերցեր ենք իրեք խատ սիգա ձուկ, մէ խատ էլ ճըղճըղուկ թօռ: Աշօղիկը էտի վոր լըսում, գիդում՝ հիրա վընասին ա. կանըրժըռում, կողի նըստուկներին անում՝ լը մէ ընձի թօղէք (թէ վո՞րն էր հիրանը բ'ըռնե), թըռնում հըլնում կանում, ձեռը պանզում ու բօռում.

- Զըմեն տեղ էտե՞նց էք անում, ուզում էք ձեռ սուքը հառէ՞ք տանէք. հո՞ւր ա ձեռ անթարութունը: Նանխ յես քախկըցի չէմ, համ էլ վոր ընձընից վեռցեր էք քըսան ձուկ, հընչի՞ էտի դ'առցավ իրեք ձուկ, լատէք տե՛նամ ...

Թօրգօմյանը վոր էսի լըսում՝ շիվարում, անում.

- Վայ-վայ-վայ՞. էսի անխմախ ա: Ծի՛շտը անէք, ճի՛շտը անէք. էսի պըտի մէ տանրի նըստի, վոր խելքը գ'ա գ'ըլօխը, մէշու խելօքնա ...

Մըխօն խօրօխալեր Վաղառշակի խետ հիր գըռուզավիկօվ կանուօլ ա տանուն Յերեվան: Ճանփին միլիցեն կանյըցընուն ա: Մըխօն չուզուն միլիցի իրեք մանեթը տա: Ըտուն ուզուն ֆըռըցընա:

- Հայրենական պատերազմի հաշվանթամ խօրօխալորըս կանուօլն են տանուն Յերեվան: Հենա, խօրօխալերըս կան բինգեն նըստուկ ա, մե վոտըն էլ կըդրուկ ա:

Բայց մեկ ա, միլիցին համօգել չըլնուն, էնի հիր երկու վոտը դընուն մե սօլ, անսուն՝ փողը կըտաս՝ կեթաս: Վոր շատ են հերկընցընուն, Վաղառշակը կան բինգից հիշնուն, մօտիկ ա գալուն: Միլիցեն Մըխօյն անսուն:

- Բը անսուն իր՝ խօրօխալօր մե վոտը չըկա~ա:

Վաղառշակը վոր էսի լըսուն, շատ ա յեռսօտուն, մե սիլլան տանլուն Մըխօյն ու անսուն:

- Շանթուլան, իրեք մանեթի խըմար վոտըս կըդրե՞լ իր տանլուն:

Սե օր Կանրօն էթուն Քանվան, հիրան – հիրան անսուն՝ քանի քըցեր են խալվաթ, անրի մըղնեն էտա ճանշարանը, երկու բաժակ թանլեն, հըլնեն: Էտենց էլ անուն: Սեշու յետօ գըլօրկըտալօվ ճանշարանից հըլնուն, էթուն թինգընուն մե անֆտօյ, վոր չըհընգընի: Սեկե գայի միլիցեն գալուն, անսուն:

- Հընգեր ջան, դու խըմուկ ես:

Ասուն՝ խա, անխալեր ջան, քեֆըս մեշու լավ ա:

Միլիցեն անսուն:

- Դը վոր էտենց ա, յես անֆտօն տանուն են պըլաշչադկա:

Կանրօն դանը հիշկուն միլիցին, անսուն:

- Տօ տանուն ես՝ տանր, յանքան յել հընգնավորցըրիր: Լի~քը անֆտօ յա, կեթամ կըթինգընեն էնա մեկելին:

Քան վանա միլպետը նախարարին թուխտ ա ղըրկում, թէ՛ Քան վան հըմէն ինչ  
լավ ա, ճանփէքին փող փոխող չըկա: Նախարարը չա՛վատում, տեղակալին  
անում՝ լը ճըշտա: Տեղակալը զանգում միլպետին, անում՝ իսկականի՞ց Քան վան  
փող փոխող չըկա: Էս միլպետն անում.

- Ա՛յ ցավըտ տանեմ, Քան վան փարա փոխող շատ կան, փարա՛ չըկա:

\*

136

Քան վանա միլպետը հիր պահավատի թագան անփոյոյվ էթում Յերէվան:  
Շօֆերը անփոն գուլլի նըման թըռցընում: Էս միլպետը մէ էրկու դան շօֆերին  
դիտողութուն անում, վոր մէշու հուշիկ էթա, վըրէն ան չըլնում: Վեռչը միլպետը  
տէնում, վոր շօֆերի վըրէն չըկանում, անում.

- Ա՛չ քաշա, կանյի:

Շօֆերը անփոն կանյըցընում, միլպետը հիշում, անում.

- Դու գ՛ընա, էրէվում դու ընգնից վըռագն Էս: Գ՛ընա, յես գ՛ըքամ:

\*

137

Սէ կիրանկի օր Քան վանա միլպետը, դադավորն ու դադախագը մէ լա՛ավ  
խըմում են: Սէկէ միլպետն անում՝ մըտընե՞րտ ա՛ խէրու Էս գախ թիվլիզ ինք:  
Մըտկըները փոխում են, ուղիղ քըշում են թիվլիզ: Ըտե նըստում են ռեստօրան, էլի  
ուտում – խըմում են: Յիրկըվա յանը քէֆըները լավ՝ դուս են հըլնում: Տէնում են՝  
ռեստօրանի հանյաթը ճըժերը գ՛ընդակ են խաղում: Դադավորը դադախագին  
անում.

- Էս մըթըվեր Էս ճըժերը... հընչե՞ն վըրացէրէն խօսում:

\*

138



Մէ դադավոր ունիմք, Թօրգօմյան էր ան զգանունը: Շատ ման գան լու մանք էր: Ըտու ան րարքները, խօսկերը չուն մըկա յէլ քան վան քցիք հիշում են:

Մէ դան էսի դադա անում, մէ մանք ա դադում, հենա պըտի վըճիմը կանքա, մէկէլ դայլիճի դումը բասվում, մէ մանք գըլօխը նեռս ա մըտցընում, անում.

- Նէրօղութուն, հընգեր Թօրգօմյան, լը վըճիմը մի՛ կանքա, յես շատ կան րէվօր դակումենտ են բերե, կան րէլի՞ յա տամ ձեգի:

Ասում՝ բե տե՛նամ: Էս մանքը շուշուտ մօտկընում, մէ ծըրար դընում Թօրգօմյանի դեմը: Էսի տընդըղում, տե՛նում՝ մէչը փող ա, անում.

- Ա՛յ տըղա, բը էս կան րէվօր դակումենտը էսքան գախ կըհուշըցընե՞ն: Մենք էլ հէտօր քանօր ըստուն ինք հիշկում:

\*

139

Թօրգօմյանի անտամը դադի գախ ցավում: Էսի շատ ա տըքտըքում, դադախազն անում՝ ի՞նչ ա հէլե: Ասում՝ անտամս ա ցավում: Դադախազն անում.

- Յընցած օրը իմ անտամն էլ էր ցավում, գաջի կընգաս թուշը պանչի, էկա, ցավը թօղեց:

Թօրգօմյանը դանքը հիշկում դադախազին, անում.

- Էս նեղ ման քան լին քօ կընգա՞ն հուստ գըթեն:

\*

140

Մէ քան յէլ մանք՝ կանժ, անրկոտ, գեշ - անժբանտես, կընգա խէտ կըռվում, հըլնում էթում Քանվան դադարանը՝ Թօրգօմյանի կուշտը: Քանի ըտե մանք հըլնում, չիշխընում մօտկընա դադավորին, հիշկում, վոր հըմէն հիրանց գոռօը պըռօընեն, նոր հինքը մօտկընա: Թօրգօմյանը խըխճօվ մանք էր, տե՛նում, վոր էսի խեխճ ու կըրակ ժամէրօվ ըտե կան յնուկ ա, հինքըն ա կանցում, խառցընում.

- Դո՞ւ հընչես էկե:

Ասում.

- Յընգեր Թօրգօմյան, բաժվում են:

Թօրգօմյանը շիվարում. անում՝ վի՞րնից էս բաժվում: Ասում՝ կընգընիցըս: Թօրգօմյանն անում.

- Յընչի քե յէ՛լ ա կընիկ տըված:

Յիրա տեղից հըլնում, գ՛ալում հընգում էս մանթի թեվը, անում.

- Քէլա, անխպէր ջան, քէլա գ՛ընա, թո էսի մեր մէջը մընա, հանկառն մանթ չըգիդա:

\*

141

Յես գ՛եղացի ռըժբան ր մանթ եմ ու կանոնա շատ բ՛ան էլ տեղը չեմ բ՛երում: Թէ վոր դուզը չեմ անում, դու ընծի դըզա, բ՛այց մէ բ՛ան ընծի դուր չըգ՛ալում: Գիրո՞ւմ ես՝ ինչ. օրինակ՝ վոր մէ մանթ փօռցանքի յա ռաստ գ՛ալում, պանդայական, չուզէլօվ՝ մէկին վընաս ա տանում, յա հիրանն ա պանշպանում, բ՛այց օրենքից հընսնում, հընչէ՞ն տանում տանրիներօվ բ՛եռք նըստըընում. համ ըտու կյանքըն ա խօռտագվում, համ էլ ըտու հընդանիքն ա անտեր - անտիրական մընում: Շատ գ՛ախ կանրքին մանթը հիր պանդայական սըղալի պանճառօվ էթում քանի տանրի նըստում, գէլ ու գ՛ագան դ՛առցուկ բ՛եռքից դուս ա գ՛ալում, ըստու – ընդու խըմար պանտիչ ա դ՛առնում: Է՛, ըտուց վո՞րն ա խէր տէնում, գիվան էտի վի՞րն էր պետկ: Չեմ անում, է՛, էտենց գ՛ախ մանթ հիր անուկի խըմար պանդասխան չիտա: Չէ՛, վոր հուրիշին վընասէր ես, պըտի դու յէլ քօ կանշվի վըրէն ըզգաս, քօ պանտիժը կըրես, վոր քօ սըղալը ընթունես, էնա մէկէլն էլ քե հանշ չիտա ու քօ սըղալը կըրկընա: Բը ի՞մալ ես անում: Բ՛այց ի՞նչ պանտադիր ա, վոր բ՛եռք նըստըընեն: Չը՞լնի, վոր էն մանթին, վորը վոր խըլղին կանստու վընաս չըտըվե, գ՛օղութուն, անվագակութուն, մանթասպանութուն չարե, պան~անդայական օրենք ա խախտե՛ վընաս ա տըվե, չըտանեն բ՛եռք, ըտու տեղը յա տօքանեն, յա անսեն՝ պետութունի խըմար էսքան անխշատա. համ էտ մանթը հիր պանտիժը կըստանա, համ էլ վեռչնական չէթա կուրի: Էնա մեր գ՛եղի Վալօղը շատ պանդավոր, լավ մանթ էր, լավ էլ անխշատօղ էր, սան ռայօնօվ մէկ հիրանը հարգում ին: Խեխճը փօռցանքի ռաստ էկավ, անվայրա տըվեց, մանթ մեռավ: Բ՛այց հինքը կուզէ՞ր: Տանրան նըստըըրին, քանի տանրի յետօ դուս էկավ, էլ բ՛անի պետկ չէր: Յամ էն մանթը մեռավ, համ էլ էսի գ՛ընաց կուրավ: Պէտութունին օքո՞ւղ հէլավ: Խօ էտի էնա մէկէլի նըման մանթասպան չէ՞ր: Յընչի վոր էտ Վալօղին իմալ վոր պետկըն ա՛ տօքանին, բ՛այց անգատ թօրգին, անխշատէր, հիր հընդանիքի գ՛ըլխին հըլներ, հավէլի լավ չէ՞ր հըլնի: Գ՛եղի խըմար էլ լավ գ՛ըլներ: Պանտիժը պըտի էնենց հըլնի, վոր կող ու կըշտի մանթիքի դուրն էլ գ՛ա: Էտ Վալօղի դադի գ՛ախ վոր կանթում են,

թէ էտքան տան րի բանդարկութունն ա խասնում, էն յանից մէ հասարակ, անգորակետ կընիկ՝ Շօղօ անունավոր, ձէն ա տան լում.

- Զընչի թալա՞ն ա. Վալօղ, կանյիլ չըլնես:

Ինչօր վորն էր հիշկում Վալօղի կանյիլ հըլնէլուն: Ուզում են անսեմ՝ էտ հասարակ կընիկը գըլխու յեր, վոր Վալօղը վընասատու մանթ չէ, բը հընչի՞ դադ անօղը էտքան բանը հիր վըրէն չըֆանամ:

Ասում են՝ իմալ գիդա՞ն, վոր պանդայական են վընաս տըված. բը էտքան ինըստուտը ի՞նչ են սօրվում... Մեղես մեղ դընես՝ հավելի լավ ա իմ խըմար, վոր դադավորը, թէկուզ հիրա օքտին, էտենց մանթին չըդադա, քան թէ անսա՝ տանրէք տանրինէրօվ նըստըցըրէք, թօ կուրի էթա: Մըկա թանգան պէտտութունն ա, թէ ուզում էք՝ ժողօվընթին լավ հըլնի, ու դադավորը կանչաք չուտա՝ օրենքը փօխէք ու թացը չորից ջօկէք: Բան...

Մէ դան Սօվէտի գախ Թօրգօմյանը մէ շօֆերի անվայրա տանլու խըմար պըտի դադէր: Էտ շօֆերը խեխճ ու կըրակ, անճանակ մանթ ա հըլնում: Թօրգօմյանը ըտուն կանչում, խօսընում, վոր մէ բան ջօկա, տէնա՝ ի՞նչ անա, ի՞մալ անա: Բայց էտ շօֆերը բան չըկանում խասկըցընա: Թօրգօմյանը չուզում ըտուն նըստըցընա, բայց անանց տուժ տալ էլ չէր հըլնի: Մէ յանքան խառց ու փոռց անէլուց յետօ խելքը բան չըկըդրում, տէնում, վոր հերկընցընէլուց օքուդ չըկա, անսում՝ թո՞ղ գընա: Շօֆերը ֆըռում, վոր էթա, Թօրգօմյանը ըտու շըլվըրի հիդվի ջէքը փողի դանստան յա տէնում: Ձէն ա տան լում, անսում.

- Յէտ անրի, յէտ անրի, ումո՞ւղ ջան, հիդվանց կանրքին մանթ ես էրէվում, յետ անրի:

\*

142

Իմ քուր Զըրօզը շատ խելօք, հիմաստուն կընիկ էր, բայց մէգ-մէկ մանգանլու բանէր էր անսում: Դը յերեվի ջօջըցէր էր:

Օր ջօջութունի քուրըս շատ դանդ տէսավ, տըղին ջանլէ - ջանլէ խողը դըրեց, բայց խառսին ու թոռներին լուսի նըման պանխեց, վեռչըն էլ գեղի կըրաղը տուն շինեց, բաժնեց, տանրավ դըրեց ընդէ: Մէկ օր քըվորս անսի.

- Ա՛յ քուր, հընչի՞ էտքան յեռու տուն շիքիր. վոր ժամանակին խառս Անօյը մէ բան հըլնի, էտքան յեռվից ի՞մալ կըբէրեն մեր գէրեզընները:

Վայ քուր ջան, հինքը ութանասուն տանրէկան էր, բայց գիդում էր՝ հուրիշները պըտի մեռնեն, հինքը՝ մընա: Ասավ.

- Հընչի՞ քողում՝ հիր տընից բ՛րեն: Վոր բ՛ան հէլավ, կըբ՛երեն, կըդ՛ընեն իմ տունը, ծանխս ու մըխսը ըստե կանեն, ըստուց էլ կըթաղեն:

Ինչօր էնի պըտի մեռնէր, հինքը՝ մընէր:

\*

143

Պանպինը, Վըզգօն, Գուգօն էթում են Վըզգօյ բ՛անակի հընգերի տուն: Դ՛ու մի անսա՝ էտ օրը էտ հընգերի խօր մեռնէլու խինգը տանրին ա հըլնում: Էտ հընգերը սեղան ա քըցուկ հըլնում, յանքան մանթ ա հավքըվուկ հըլնում: Յեփ սանղ ցըրվում են, էս Վըզգօն ջիգրավորում, անսում՝ քէլէք էթանք ձանձանյ գ՛երեզնընին, մէ բաժակ էլ ընդու խէտ խըմենք: Էթում են գ՛երեզնըները, բ՛աժակները լըցում են, հէնա՝ պըտի կէնած անսեն, մէկէլ լանցի ձէն են անում: Հիշկում են էս յան, էն յան, տէնում են Գուգօն ա լանում: Վըզգօն գ՛օխտուկ բըթում, վոր Գուգօն ձէնը կըդրա, բ՛այց չըստացվում. էսի ձէնը հավէլի յա զըլում:

- Գուգօ, ի՞նչ ա հէլե, հընչէ՞ս լանում:

- Ձ՛եր խըմար ի՞նչ կան, - սընքըռտալօվ անսում Գուգօն,- սանղ-սանլանաթ խըմում էք, բ՛այց էն խեխճ մանթը մըկա ուզում խըմա՝ չըկանում:

\*

144

Սանձոյ խէրը ուցունքանի տանրէկան մեռնում: Թաղմանը բօ~լ ժողովուրթ ա գ՛ալում: Համայրա սանղ հընգերներն էլ Սանձոյ կող ու կուշտըն են հըլնում, մըխիթարում են, սիռտ են տանում: Սանձօն մանլադեց. հիրանը տըղանանթավարի յա պանխում, հիր վիշտը նանուսօվ տանում, սանղի պանդասխանն էլ իմալ վոր պէտկըն ա՝ տանում: Սանձոյ հընգերներից Գուգօն շատ թուլսիռտ ա հըլնում. հըմա մէկը գ՛ալում, Սանձօյը մըխիթարանք ա տանում, էսի էն յանանց սընքըռտում: Չում հընգերները Գուգօյ ձէնը կըդրում են, թանգան մըխիթարանք տըվօղ ա գ՛ալում, Գուգօն նորուց ձէնը զըլում: Վեռչը էնքան անում՝ Սանձօյ սիռտըն էլ ա լըսվում, դանում, փատըտվում Գուգօյն, անսում.

- Ցավըտ տանեն, էնենց էս լանում, ինչօր քօ խէրն ա մեռե...

Բը հընչե՞ն անսում՝ վորդե լանց, ընդե յէլ ծըծաղ. էտենց չըլներ՝ մանթի սիռտ կըպանդուէր: Մէ բան էլ գիցի. վորդե վոր ծըղզալը պետկ չէ՝ ինչօր անտեր ծըծաղը կանստու գա...

Մէ էրկու տարի հառէջ ծուկ բըննօղ Գեվօն անեղ տեղը մեռնում ա: Դը հարէվան - բարէկամ, անկ ու տակ հավքըվում են, կընանիքը լանլում են, տըղանմանթիքը պանպիլօզ են քաշում, թանշուվիշ են անում, վեռչը... Կընիկը մէ ծէնի գօվք ա անսում ու սանդին մըխկըտցընում: Մէկէլ վոր հանշկը աննում, տէնում հիրանց խընամի Սանթօն էկավ, ծէնը բանցըրցընում ու յերքէլօվ անսում.

- Հարի~, Սանթօ ջան, հարի~... Գըշեր Գեվօս ծօվից էկա~վ, ծըգնէրի կէսը լըցեց մանրաքը~, էն ջոջ – ջոջ ծըգնէրն էլ տանրավ թափեց ծէր Սանթըրդի տունը~, անսում էր...

Տէքանրկընիկը կողը նըստուկ հըլնում, տըկանց բըթնօլոր ա տանլում, անսում.

- Տօ խէրախօրուկ, մըկա Գեվօյը մեռուկ տեղը կըտաս բըննէլ, ծէնըտ կըդրա է~...

Դը տանրբեր տեղ տանրբեր ա: Մեր Քանվանա յու գեղրանքի մէշն էլ տանրբերութուն կան: Ասենք՝ տեղ կան՝ մեռելը վոր թաղին, գեղեզմըները քիչ են կանյում, հիշնում են մեռնի տունը, ըտե յեն անրարօղութունը անում, տեղ էլ կան՝ ինչ վոր ա յա՝ գեղեզմըներն են անում, վեռչացընում: Տեղ կան՝ պանդարաքը ջըրիկ ճանշի նըման են տանլում, տեղ էլ կան՝ միյնանկ խաշլամա յա: Դը վիրն իմալ հարմար ա: Խընուց էկուկ սօվօրուտկ ա: Մըկա մէկէլ տէնաս՝ էս ու էն ուզում են անդանթը փօխէն, բայց էտի դըժվար բան ա, յեսիմ ... Հառէջ վոր մեռել հըլներ, հըմընօվ պըտի մեռնի տուն էթին. մըկա վոր ժողօվուռթը շանըցե, էլ հըմէն տեղ չեն էթում, անսում են՝ փոխ բան ա:

Քանվան վոր մեռնին խասցընում են գեղեզմըները, կընանիքը չուրթի վեռչ չեն մընում. մեռնին վոր դընում են փոսը, ըսկըսում են խողը լըցել, կընանիքը թօղում են, գալում են տուն: Էտենց մէ օր մէ խըմօղ մանթի թաղում հըլնում, կընանիքը հիրա վախտին թօղում են, հիրար պանդրուշկա անուկ՝ վորը կէբըթէլօվ,

վորը հանձնարար սրբաբան, վորն էլ անսել – խօսալ – խրնդալով Դարից հիշում են: Ըտոնցից երկու կրնիկ թափ - թափ ուղիղ էթում են կարի ֆաբրիկան. ըտե յին անխշատում: Գոռծից մե բան էլ ուշացուկ են հըլնում: Թանասի նըման դերեկտորը հըլնում դեմըները: Վոր տեմում էս կընանիքը նո~ր գալում են՝ խօռնըռկըտում, անսում՝ հընչէք էսքան յետ գալում, չէ՞ք անսում՝ ֆաբրիկան ըստուգող ա էկե, հըմեն ինչին ուշադիր են... Կընանիքից մեզն անսում՝ կընէրես, հընգեր էսինչյան, գագեր ինք ենա խըմօղ Մըխօյ թաղումը, մեշու յետըցանք: Էս դերեկտորը հավելի յա յեռսօտում:

- Էտի վորն ա, - անսում , - վոր էս նեղ մանջան լին էթում իք ըտուն թաղելու... Էն մեկել կընիկն են յանանց անսում.

- Դը հընգեր էսինչյան, ի՞նչ անինք. էտի յեր մեռե, գագեր ինք ըտու թաղմանը, վոր հուրիշ հարմար մեռել հըլներ, կեթինք, ընդուն կըթաղինք ...

\*

147

Տերդերն էլ մեր նըման մանթ ա, բը դու գիցար՝ ի՞նչ... Էն էլ մեր նըման տուն ու տեղ ունի, հընդանիք ունի, խաց ա ուտում... Զիրա գոռծըն էլ տերդըրութունն ա, հընչի հըմեն մանթի ձեռ կըկըպի՞: Տերդըրների մեջըն էլ կան վոր՝ անսող – խօսող, բիլիջի մանթ ա, կան վոր՝ նանմուդ, անպետկ մանթ ա, չուգա՝ հուրիշի վըրեն անրեվ աննի, շատ էլ տերդեր ա... Դը մանթ են, էլի: Էսքան գախ տերդրի վոնչ լավն ենք տեսե, վոնչ էլ վատը...

Բանջընդ տերդրով մեռել են թաղում. տերդերն հընգե մեռլի հառչից էթում, խեղն էլ յերթում՝ անլելույա~, անլելույա ...: Տերդրի տունը գերեզմների ճամփին էր: Վոր խասնում են տերդրի տանը, տերդրի հանջը աննում, տեմում՝ հարևան Առջոյ էը մըտե հիրանց հանյանքը, կանյե դեզն ուտում: Քիչ ա մընում՝ յերքը թողա, բռա՝ չօ՛շ, չօ՛շ, քօ՛ տիրու խերը..., բայց մե կերպ հիրանը զըսպում: Տանում - աննում, տանում - աննում, ի՞նչ անա, իմալ անա, վոր իշին խըրկա, կողով էթացող գեղացուն երմընգով բըթում ու յերքի մեջը անսում.

- Զիշկա դիգի կըշտի իշին, խոտը կուտա. մընա բըգին.

Գընա խըրկա էս րօպէին, աննիծում են էտ հըրեշին:

Ալլելույա~, անլելույա ...

Սէ քանի տանի հառէչ Կըշլէն մէ տերդէր կէր՝ Ձապէն էր անունը: Եսի շատ քըռֆատու մանթ էր. չէր հիշկում՝ ըտե կընիկ կան, ճիժ կան, մէ բան հըլներ թէ չէ՝ քըռֆուռ էր տանլում: Կըշլըղա կընանիքը իշքան կանում են՝ հիրանցը դընում են չըլըսալու, բայց մէ օր էլ էլ չեն կանում տանեն, բօղօք են գըրում կանթղիկօսին, թէ՛ էսենց ու էսենց՝ քօ տերդէր Ձապէնը քըռֆատու յա: Կանթղիկօսն էլ իրեք խօքի հօղըրկում Քանվան, վոր տէնան՝ էտի ճի՞շտ ա: Ըստոնք Ձապէնին Քանվան են ռաստ գալում, անսում են՝ էթանք Կըշլէն, տէնանք՝ ժողօվո՞ւթն ինչ ա անսում: Չոռսօվ մէ ֆուրղուն են բըռնում ու ճանփա յեն հընգընում դըբա Կըշլէն: Քանվան յու Կըշլէյ անրանքը՝ մէ դըքի վըրեն, մէ տուն կէր: Վոր խասնում են էտ տան կըշտները, մէկէլ փըլի տըկից մէ կընիկ հիրանը թանլում ճանփեն, ֆուրղունի դէմը կըդրում: Ձիյերը խըռտընում են, ֆուրղունչին հազիվ ա կանյըցընում, թէ չէ պըտի էթին ձորը: Հազիվ խէլքըները գալում գըլօխները, մէկ էլ տէնում են՝ էս կընիկը անձէն - անձու դանցավ, վազնէլօվ գընաց, մըտավ հիրանց թալվէն: Էս տըղամանթիք շիվարում են, մէ յանքան գախ էտ ցըռտին, անթէն մութն էլ հընգում էր, կանյում են ըտե, չեն գիղում՝ ինչ անեն՝ թղեն էթան Կըշլէ՞ն, թէ՞ էտ կընգա հիղվից էթան, տէնան ինչ էր հէլե: Վեռչը ձէն են տանլում՝ քուրօ~, քուրօ~ ... Էտ կընիկը գըլօխը դըռնից դուս ա խանում, շիվարուկ հիշկում ըստոնց յանն ու հիրան - հիրան անսում.

- Սեվգալուկները լը ըտե կանյո՞ւկ են...

Դու մի անսա, էտ կընիկը պըտի գըռթան դըներ, ըտու խըմար յանքան գախ բուսում էր պանխե, վոր տըղամանթ ուռթըր (տըղամանթի վոտը խէր ա), նոր էթըր դըներ, վոր հըմէն ձըվից էլ ճուտ հըլներ: Բայց վոր գոռօը հաջօղ հըլներ, տըղամանթը պըտի կանյեր, խանք աններ, նոր էթըր: Հինքըն էլ պըտի անխօսալ գըռթանը դըներ: Վոր տէտըր էր խինգը տըղամանթ գալում, հիր գօռօղութունը էտենց կանտարէր էր: Գիցէր էր՝ էս մանթիքն էլ կըթղեն, կէթան: Եսքան բանը վոր պանգըվում, էս Ձապէնը էլ հիրանը չըկանում պանխա. բէրանը ինչ գալում՝ անսում, էլ քըռֆուռ չըմընում, վոր չըտանլում էտ կընգանը: Հէշմիագնա գալօղները էլ Կըշլաղ չեն էթում, անսում են՝ էլ էթանք՝ ինչ անենք, հըմէն ինչ պանգ ա: Խասնում են Հէշմիաճին, կանթղիկօսին անսում են, վոր բօղօքը ճիշտ էր: Կանթղիկօսը յեռսօտում, Ձապէնին կանչում հիրա կուշտը, վոր տերդըրութունից խանա: Ձապէնը վոր հըլնում էթալու, մէկը խօռուռթ ա տանլում, թէ՛ տերդըրի շորը խաքի տըղըղ ջանիտ ու գընա: Ձապէնը չըգիղում՝ հընչի, բայց էտենց էլ անում: Էթում, կանթղիկօսի ձեռը պանչում, գըլօխը կանխ կանյում դէմը: Կանթղիկօսը յեռսօտուկ

անում, վոր տերդրոյի շորը խանա, տա ու թողա էթա, հինքը էլ տերդէր չէ: Ձապէնը ըսկըսում շորը խանել: Կանթղիկօսը վոր տէնում՝ էտի տըգլոգ ա, մեխկը գալում, անում՝ ուրեմ էսի խեխճ ու կըրակ, անթար մանթ ա, շոր էլ չունի, վոր էս ցըռտին խաքնի: Յետ ա դանցընում, անում գընա քօ տերդրուքունն անրա, բայց էլ քըֆուռ չիտաս:

Կըշլէցիք էտքան բանը չեն գիդում ու չեն խասկընում, թէ ի՞նչալ Ձապէնը տերդէր մընաց, համ էլ գօխտուկ տեղ էլի քըֆուռ ա տանում: Ըտու խըմար էլ չուր մըկա վոր շատ մանգանում բան ա հըլնում, անում են.

- Մեղա յեն քե, տէր, Կըշլըղա տերդէր, էս ինչ բան էր:

\*

149

Մանթ վոր նեղն ա հըլնում, հընգում անսու փէշերից կանխ, Քըրիստոսին ա անդաչանք - պանդատանք անում, սըռփերին ա կանչում, վեռչը... Բայց հըլնէլացու բանը հըլնում. խօ անված հըմէն գախ չըկա՞նա մեր ուզածօվ շանթըվի: Բը ի՞նչալ... Մի ծըղզա է՛, դուզն են անում...

